



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1043

1(F)

150

164-ԱՎ

201

5-26

ԿՐՈՆԱ

ՀՐԳԵԹԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՑՈՒԹԻՒՆ

Նամակութիւն ՏԵՂԱՆ Առաստաձոյ մերում, և
յայսնիքն մեզ և որդոց մերոց յափառեան:
Եթէ. օքն. Իթ. 29:

Մասածող մարդու առնենամենձ երջան-
կութիւնն այն է, որ քննելին քննած
ունենայ, իսկ անքննելին խաղաղ
սրտով պաշտէ:

ԳԼՈՒԽ:

1878/79 ուսումն. թ. Տիգիսաւ Ներսիսեան ազգային Հոգե-
ւոր Դպրոցի աշակերտներին դասախոսեց

Ս. ՄԱՆԳԻՆԵԱՆ.

ՏՓԽԻՍ

Էնֆիաճեանցի և ընկ. ապարան:

201

21-25

1879

201
5-25
ԿՐՈՒՔ

ՀԱԳԵՑԱՆԱԿԱՆ ՀԵՏՈՋՈՏՈՒԹԻՒՆ

Խածուկին Տեղան Աստուծոյ մերում և
յայտնիքն մեղ և պղոց մերոց յափառան:
Երև. գրհ. նթ. 29:

Խածուղ մարդու ամենամեծ երջան-
կոթիճն այն է, որ քննելին քննած
ունենաց, իսկ անքննելին խաղաղ
պրոռվ պաշտէ:

Գլուխ:

60681
1880

Տօքառակ անօրութեան
այս պատճեան առաջարկ

1878/79 տառևմ. թ. Տիկիսու Ներսիսեան ազգային Հողե-
ւոր Դպրոցի աշակերտներին դասախոսեց

Ա. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

Տ Փ Խ Ի Ս

Համբ. Ահքիսաճեանցի և ընկ. տուարան:

1879

g833 u 091 p

Digitized by Google

3. *Leucosia* *gibberulus* *leucostoma* *Clypeasterus*
gibberulus *gibberulus* *gibberulus* *gibberulus*

1980-001-233-171

• մանդ է համար արքան յունաց
համեմ միջնորդ որ է մաս մատված
յարան Ծ. ճամփառ լայ ունենա

Digitized by srujanika

卷之三

Дозволено Цензурою
Тифлисъ 26 Мая 1879 года.

միան միջարքա մասնավոր առաջնորդ է. Կ անուան շնուփառք միջմատողմական գյուղաբ զու

Digitized by srujanika@gmail.com

三月廿四日
晴天，風微，氣溫約二十度。午後，到南湖公園散步。

Q581



ԿՐՈՆՔ

ՆԱԽԱՇԱԽԻԴ

Գ Յ Օ Ղ Վ

§ 1. Առաջ քան ուղղակի մեր խնդրոյն դիմինք, աւելորդ չէ այս նախաշաւղի մէջ՝ որպէս մի ուրուազիձ՝ ներկայացնել այն սկզբունքները, իրողութիւնները և գաղափարները, որոնց վրայ որ հիմնուած կը լինին մեր հետեւեալ հետազօտութիւնները, և որով պէտք է գատուի ուքննուի մեր այս գործը:

Նախ ով ինչ ուզում է ասէ կրօնքի մասին, բայց այս անհերքելի իրողութիւն է, որ մարդու շատ զարգացման արդիւնքներց մէկը՝ կրօնքն է, որ մարդու անելով իւր մէջ յառաջացնում է ուրիշ շատ բանների հետ և կրօնք։ Ով որ փորձել է բացատրել կրօնքի էութիւնը՝ նա լւելեան նախ այդ ենթադրութիւն է արել, ամենին չերկմտելով նորա ստուգութեան մասին։ Եւ արդարն մեր կեանքի մէջ շատ հանդամանքներ կան, որ բացայատ մեղ ասում են, թէ „կրօնքը,, լոկ միայն խօսք չէ, այլ մի ճշմարիտ իրողութիւն է մեր կեանքի մէջ։ Մի հայեացք մեր հոգւոյ էութեան վրայ, մի դիտողութիւն մեր շշապատող անհատների ու հասարակութիւնների վրայ, մի քննութիւն ազգերի և մարդկութեան պատմութեան վրայ—անկանխակալ մտածողին այդ է քարոզում։ Մեղ ամենիս այնպէս է երևում, թէ արդարն կան մի քանի այնպիսի հոգեկան զրութիւններ և գործողութիւններ, որ մենք անուանում ենք կրօնական արամադրութիւններ, զգացմունքներ, երեակայութիւններ, ոգեւորութիւններ, խմացումներ, համոզմունքներ, մաքեր, խորհուրդներ։ Այս կրօնական կայծերը արտայայտվում են մարդուս խօսքերի, կերպարանքի շարժուածքների, սովորութիւնների և բարքերի մէջ, կամ գոնէ հոգւոյ թագուն խորքերի մէջ մի խաղաղական սրբութիւն են կազմում։ Միայն մի որոշեալ ժամանակի ժառանգութիւն չէ կրօնքը։ Անշուշտ առաջն մարդն անդամ երկրաւոր ասպարեզը առանց հաւատի չթողուց, ոչ մի ազգ չի անհետացել, որ իւր միտքը հանդերձեալ աշխարհին չդարձնէր. երկրիս վրայ այժմ չկայ մի ազգ կամ

ցեղ, որ ինչ և իցէ մի կրօնական զարդացման աստիճանին հասած չլինի. և այն ընդհանուր օրէնքներն ու հանգամանքները, որ զարդացման աղբիւր են եղել և որ անթիւ զարերով մարդկութեան և նորա կացած բնակութեան համար անխախտ հաստատ եղել են, եթէ դարձեալ իրանց ոյժն ու զօրութիւնը պահպանեն, մննք պէտք է եղակացնենք, թէ և մեր հետնորդներն ևս միշտ և հանապաղ կրօնք կ'ունենան:

Նա և մարդուս ոչ մէկ հասակը չի անց կենում առանց կրօնական զրգիւների. Նոքա պայծառութիւն և զուարթութիւն են տալիս մանուկի աշխուժութեանը, ոգեւորում են պատանու վստահութիւնը, բազմապատկում են քրտնաջան արիահասակի գործունէութիւնը, կննդանացնում են մաշուող ծերունու յոյզը. Ամենայն դասակարգում, զարդացման ամենապահպան հանգամանքնենում կրօնքն իր հանդէմն է ցոյց տալիս, թէ և շատ անգամ նեղ սահման և տարօրինակ կերպարանք առնելով. Աստուծոյ առաջ խոնարհում է աղքատն ու արքայն, իմաստուն ու կարճամիտը, առաքինին և սեւանոզին: Եւ շատ տարակուսեի է, թէ աթէխտ (անհաւատ) կոչուած մարդկանց մէջ արգեօք կայ մեկը, որ իր համոզմունքների ծածուկ խորքերի մէջ և իր խղճմտանքի առանձնութեան ժամանակ իրօք ուրանում է Աստուծոյ գոյութիւնը, և իր կեանքը կնքում է առանց հաւատոյ և յուսոյ: Դորա հակառակ բացարձակ իրողութիւնն է խօսում, թէ շատ անգամ մարդս լոկ միայն թեթեւամտութիւնից և անբացատելի պճնասիրութիւնից երբեմն երբեմն առաջատամիտա է գաւանում. ստկայն անակնեալ գէպերը յանկարծակի բարձրացնում են նորաննիւթեական աշխարհը նեղ սահմաններից, և նա յոյս ու միխիթարութիւն է փնտուում ու գտնուում միայն կրօնքի մէջ, լիսկատար բացառութիւն կարող է կազմել միայն նա, ով որ կամ ի ընէ մարդկային հասարակ կարողութիւններից զուրկ է, կամ այնպիսի հանգամանքների մէջ է զարգացել, ուր նորա հոգւոյ բնական և աղատ ձեւանալու վրա բոնութիւն է գործուած. բայց այսպիսի հրէշային անբնականութիւնը անշուշտ շատ սակաւ է պատահում:

Թէպէտ և ժամանակի ընթացքում դանազան կողմէրից մարդկութեան ընդհանուր սրբութիւնը ցնցումներ է սաւրէլ, բայց և այնահէս ոչ կամակրութիւնն ու ծագրածու արհամարհնը, ոչ բանութիւնն ու արիանհեղութիւնը չկարողացաւ նսեմացնելնորան, ուստի եղակացնում ենք, թէ ապագայում ևս իր լուսաւորիչ վեհութիւնը պէտք է պահպանէ:

§ 2. Թէ մարդուս մէջ կրօնքի լինելութիւնը կանոն է, իսկ նորա պակասութիւնը շատ նուազ բացառութիւն պէտք է համարակի, այս բանի հոգեբանական սրոշ աւացուցը հետեւեալ քննութիւնը պէտք է մատուցանէ: Բայց ի հարկէ, եթէ պէտք է լուսունենք կրօնքի հանրածաւալ լինիլը, մննք իսկզբան պէտք է զպացանանք՝ չինին թէ կրօնքի մասին մեր խրագանցիւրի ունեցած նեղ և սահմանափակ դաշտափաները — արդէն ապացուցած և անհերքելի համարենք: Ով որ ուրիշներին իր կարծատես մտքերի չափում է չափում և դատում, անշուշտ նորա անկեղծ բարեկազաշտութեան տակ իսկապէս լոկ անմիտ նախապահարմունք, անդնական ցնորք կամ ցուրտ խելք կայ թաքուցած: Ով որ կարծում է, թէ միայն նորա կրօնքն է ճշմարիտ, միայն իր կրօնքն արժանի է պաշտման և հաւատոց, միայն ինքն է արգար Աստուծոյ առաջ, — նա ինարկէ ամենայն տեղ մոլորութիւն և հերեւակիսութիւն կերեւակայէ, ուրիշների անսատուածութեան վրայ կը զարհուրի, մարդու ամեն մէկ թարմ մորի մէջ սաստանացի որողայթ կը նկատէ. նորա աջրում նորա պիտի կորչին և դուրիքի դատապարտուին, որովհետեւ նա կ'առէ թէ նոյս մէջ կրօնք չը կայ:

Կմանապէս այն դասանութիւնն ես, որ որոշ ժամանակներում և որոշ երկիրներում հանգամանքներով աւելի պաշտպանուած է՝ միակ ճշմարիտ չը պէտք է ընդունուի, հետեւապէս միւսները ներծուածք չը ճանաչուին: Որովհետեւ պէտք է խոստովանել որ կրօնքները միշտ փոփոխուել են հանդերձի պէտք Փետութիւնները, եղեղեցիքը, ազգերը երբեմն այս, երբեմն այն կրօնքն են պաշտպանել, եթէ մէկին հալածել են, ուրիշ անգամ նոյնը բնդունել և փառաբանել են: Այս հանգամանքներն աչքի առաջն ունենալով չպէտք է լինել հեղսիրտ և չպէտք է

շապտվի դասապարտել ուրիշինս Արտիկետե այս բոլոր մասնացութիւններով ու տեղատութիւններով, այս անդադար ծերանալովն ու երիտասարդանալով, առանձին մարդկանց և ցեղերի կրօնական զարգացման այս ելեկջներով՝ դարձեալ միշտ մի և նոյն ձգտում է շարժվում աւելի վսեմ զգացումներ և մոքեր ձեռք բերելու համար, մի և նոյն ինսամք հանդերձեալ կեանքի համար, այն է կրօնքի համար, որ երկինք և երկիրն է կապում: Այս բոլոր շարժումներով մարդկութիւնը անդադար լուսաւորվում է, իսկ ճշմարիտ բարեպաշտը հաւատում է, թէ մեր հոգեւոր երջանկութիւնը այդ է:

§ 3. Կրօնքը իրեւ մի տարածուած իրողութիւն ընդունելով ամենայն մարդկութեան մէջ, մի նշանաւոր հարց է առաջանում, թէ արդիօք ուստի է կրօնքի ծագումը: Անտարսկոյս նա պէտք է առատարուին և մշտահոս ազբիւր ունենայ մարդուու սրտի մէջ, որ այնպէս անդիմադրելի զգութեամք միշտ և միշտ երեւան է զալիս: Կրօնքը չի կարող քմահանութեամբ չփնած և մարդուն բանի տուած կամ արտաքուստ պատառասաած լինել: Ե մնաք չուտով կը համոզուենք այս բանի մէջ: Ուրեմն էլ ինչ է մնում: — Շատ անգամ նորա ընդհանուր տարածումը փորձել են կարծ և համառօտ այսպէս բայցարեալ: Թէ նա բնածին է մարդուս մէջ: Սակայն եթէ զորանով ուզեցել են ասել, իր թէ մարդուս կարողութիւննց մէջ խսկըանէ ամստի կայ մի բան, որ իր բովանդակութեամբ և ձեւով մի որոշ կրօնական տրամադրութեան, մտքի, միթեարութեան և ուրիշ այսպիսի բաների հետ նմանութիւն ունի, իբրև թէ մարդս ծնուելով արդէն ճանաչում է Աստծուն, ունի կրօնական զգացումներ, և այլն, առա այդ պէտք է մոլորութիւն համարենք: Այժմեան հոգեբանութիւնը այդ հերքում է: Նորածին երեխան իր հոգու մէջ դեռ չունի ոչինչ, որ իր կերպով ու նիւթով համապատասխան ունենայ արդէն մի զարգացած մարդու կրօնական զաղափարներին: Մարդկանց, կենսական փորձերի և բնութեան տապաւորութիւնների միջնորդութեամբ միայն՝ կրթութիւնը տալիս է մարդու հոգւոյն այն, ինչ որ նախնապէս չէ ունեցել, այն է՝ բովանդակութիւն և ձեւ: Մանաւանդ կրօնական դաղափարները, ինչպէս

կը տեսնենք, ոչ թէ պարզ, այլ չատ բաղադրեալ գործողութիւններից յառաջացած արդիւնք են, և ուրեմն հոգւոյ դրութիւնները երկար փափոխութիւններ պէտք է կրէին, որ վերջապէտ այդ ևս գոյացնէին:

Նթէ չենք կարող բնուղունել թէ կրօնքը արգէն պատրաստի կայ նորածին երեխայի մէջ՝ ապա ուրիմն բոլոր վերի առաջները մեղ ստիպում են զոնէ ընդունել, թէ մարդուս կարողութիւններն ու զարգացման հանդամանքերը մեր ամենիս մէջ ընդհանուր և հաւասար են, և թէ նոքա իրանց բնութեամբ տանում են դէպի կրօնական զարգացում, այսինքն մարդ ընդունակութիւնը ունի իրօնի զարգացնելու բրմէջ, բնաւ հետք զի բերում իր աշխարհք անսնելու ժամանակ, բայց հարկաւ պէտք է գոյանայ նոյնը մի առողջ ծնած և մարդկային հասարակութեան մէջ անող մանկան մէջ: Այս մտքով, մնաք այսուհետեւ կրօնքը ոչ թէ բնածին, այլ զիւրածին կամուանենք: Այս զանազանութիւնը այնքան մեծ նշանակութիւն ունի, որ մնաք, աւելորդ չենք համարում մի օրինակով բացատրել: արդեօք այն կրակը որ իրար քսուած փայտերից բորբոքում է, այդ փայտերի մէջն է, թէ արտաքուստ է մէջը բերած: Ոչ մէկը և ոչ միւսը: Նա պատրաստ չը կայ ոչ փայտի մէջ ոչ էլ նորանից զուբս, այլ զա մի գործողութեան արդիւնք է, որ քսուելով է յառաջանում: Այսպէս էլ կրօնքը զիւրածին է, նա գոյացել և կազմուել է հոգեկան գործազութիւններով:

Բայց թէ կրօնքը հոգւոյ պարզ գործողութիւնների արդիւնք չէ, այլ հասուն և բաղմապատկել հրառած զրաշմ ունի իր վրայ, այժմ հասկանալի կը լինի մեղ, եթէ համառօտապէս յիշենք նորան ենթակայ տարեկաները: Ընդհանրապէս ընդունուած է, թէ կրօնքը զրազուած է անիմանալի, զիրդգայական նիւթերով, մի հոգեկան աշխարհից զուբս է: որովհետեւ այն զիլիաւոր տարեկաները, որսն հետ որ կապուած են մեր բոլոր կրօնական զգացմունքները, մտքերը, երեւակայութիւնները, յոյսերը, միթեարութիւնները և այլ են Աստուածեան մահութիւնն (յաւիտենական կեանք): Ուստի եթէ կրօնքի աշխարհը անիմանալի է, ապա ուրեմն

այդ խօսքով պէտք է հասկանանք այն այմենայն, որին մենք մեր զգայարանքներով (աչքով, ականջով ևն)՝ ոչ մի կերպով հասնել չենք կարող և որ իմանալ անհնարին է մեզ խկայանի է, որ մեր զգայարանքներն են մեր առաջին ուսուցիչները, և ուրեմն կրօնքը զբաղուած է այն ենթակայով, որ անմիջապէս մեզ ենթակայ ասհմաններից արտաքոյ շրջանումն է:

Այս խօսքերով հաստատ յայտնի եղաւ, թէ մեր զգայարանքների գործողութիւնը, ուրեմն և նրանից բջիած բոլոր իշխողութիւնները (վերարտազրութիւնները) կրօնական զարգացման համար բաւական չեն, Նա ընդհակառակ ստեղծ ծագած ան առաջարկական) արդինք է, Նա ձևանում է իրանից առաջ ոյ առ առ ստի և լած տարեգներից: Բայց ստեղծուած ասելով չպէտք է կարծել ոչնչից ստեղծուած. մարդու բոլորովն նոր բան չի կարող ստեղծել. կամ մի ոչնչից մտքով բան արտադրել, — այս բանի համար հիմնական տարմբը միշտ ընդունում է նա իր ներքին կամ արտաքին փորձառութիւնից: Բայց այդ տարերքը հոգեկան ստեղծողութեան ժամանակ այսպէս բազարիվում, կապակցվում և անվտիվում են տնօգական, ծաւալման, պատճառական և չափերի հանդամանքներով, որ միանգամայն նոր. և սկզբնական տարեգներից տարբեր, պատկերներ են գոյանում: Այսպէս է գոյանում և կրօնքը, ինչպէս ներքին կը տեսնենք:

§ 4. Վթէ գետ միայն այս առաջնորդող խօսքերից պէտք է ընդունենք, թէ կրօնքը ամենայն մարդու մէջ հարկաւ զարգանում է. թէ նա մի նախնական ընդունակութիւն է մարդու, բայց թէ ամենայն կրօնական զարգափարը իմանալի և զգայական սահմաններից դուրս է ձգտում, — արդ մի նոր խնդիր է յառաջանում, թէ ինչ կերպով ինչ շարժառիթով մեր երեւելի աշխարհից դրդվում ենք անցնել միանգամայն մեզ անյայտ, աներեւոյթ և անիմանալի ուշխարհը: — Այս հարցի պատասխանը մեր գլխաւոր նպատակն է: Բոլորովին անօգուտ կը լինի, ինչպէս վերի խօսքերից բացարձակ երեւում է, եթէ մեր քննութեան կենդրունը կրօնքի առարկան ընդունենք. պրովիետի վաղօրօք պէտք է խոստովանինք, թէ սահմանաւորը

անսահման բան չի կարող սահմանել, անիմանալին անիման նալի է, և անհնարին է ճիշտ զիտնական օրէնքներով և անհերքելի կերպով նորա զարգափարը նկարագրել: Մեր բոլոր զարգափարները Աստուծոյ մասին, Երկրաւոր կեանքից դուրս հասուցման մասին և այն մենք կազմում ենք այն մտքերից և գաղափարներից, որ միայն անմիջապէս մեզ յայտնի գոյութեան մասին արդէն կազմել ենք, և այդ գոյութիւնն է մեր սեպհական հոգին: — Միայն մեր ինքնազիտակցութիւնը ամենայն ստուգութեամբ և ուղղակի իմացնում է մեզ մեր գործութիւնների, գործողութիւնների և յատկութիւնների լինելութեան և տեսակի մասին, Եւ ինչ որ մենք աներեւոյթ աշխարհին ենք տալիս, այն նախ ընդունում ենք մեր հոգուց, և ուրեմն դարձեալ միայն այնաեղ կարող ենք գտնել և ճանաչել նոյնը: Ուրեմն և կրօնքը միայն մարդուս հոգու մէջ պէտք է վնտուենք: Կրօնքի առարկանները մեղանից և մեր փորձառութիւնից դուրս են. իսկ կրօնքը մեր մէջն է և ուրեմն մեր մտածողութեան մօտիկ առարկայ է: Ուստի այս կարող ենք ճանաչել, այն ոչ: Բայց մենք այն առարկանների մասին ևս ակամայ որ և է (մարդանեական — անտրապոմորֆական) զարգափարներ կը ստանանք, երբ որ կրօնական զարգայման տմբուջ գործողութիւնը քննել կ'ակնենք: Ուրեմն միայն մեր սեպհական հոգու մէջ, մեր ինքնազիտակցութեան մէջ, կարող ենք մտնել, իսկ այնաեղ է և կրօնքը, միայն մեր ինքնազիտակցութեան մասին անպայման ձշմարիտ զարգափար կարող ենք կազմել, ուրեմն և նորա մէկ հատուածի մասին:

Վերջին հարցմունքն այս է, թէ արդեօք մարդու հոգւոյ զարգացման որ ձեւի մասին էր մեր այժմեան խօսքը: Այսինքն արդեօք կրօնքը մարդու լոկ զարգափար, համոզմունք, պատկերացում, միաք է, կամ արդեօք զգացում, սրտի բղիմունք է, կամ թէ արդեօք գուցէ միայն մի ձգտում, բաղձանք, կամեցողութիւն է: — Մենք շուտով կը տեսնենք, թէ կրօնքը ոչ բացառապէս միայն մտքի արդիւնք, ոչ բացառապէս բաղձանքի արդիւնք է, այլ թէ հոգւոյ զարգացման այդ ամենայն տեսակ

ձեռվ կազմուել կարող է և իրավէս կազմվում է: Եթէ ամենայն կրօնական գաղափարների առարկան գերբնականն է, նոցա ձեր ինքն ըստ ինքեան կարող է լինել ամենայն տեսակից: Անիշմանալին ինչպէս և լմանալին կարող է մեր մէջ գոյացնել (ճշմարիտ և սխալ) մտքեր, զգացմունքներ և բաղձանքներ: Ի հարկէ կրօնական շրջանի մէջ երբեմն այս, երբեմն այն զարդացման ձեն աւելի իշխում կամ նուազում է, և ներքեւ շատ մտքերին կը հանդիպինք որ այս իրովագիրներ կը հաստատեն:

ԿՐՈՆՔ: ԷՍԹԵՏԻՔԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ,

§ 5. Միայն այն ժամանակ կարող են մարդու մէջ կրօնական գաղափարներ գոյանալ, երբ որ նորան յաջողվում է տեսանելի աշխանից մի մուտք գտնել աներենյթ շրջանների մէջը: Այս մուտքը շատ անդամ կատարվում է և թէ է տիքական հայեցողութեան ձեռվ: Որպէս զի հասկանալի լինի այս խօսքը պէտք է յարակցել և այն, թէ առ հասարակ կան այնպիսի առարկաներ, որոնք թէպէտ և տեսանելի աշխարհն են պատկանում, բայց նոցա մէջ այնպիսի կարգեր, կանոններ, օրէնքներ ևնք նշմարում, որ իսկոյն մտքով երեակայում ենք մի կենդանութիւն տուող ողի, որ նոցա միջնից կարծես ցոլանում է, որ նոցա մէջ մի մարմնական կերպարանք է ստացել, բայց իրան մեր մարմնական աչքով չենք տեսնում: Անա երբ իրեն այսպէս ըմբռնում ենք, այսպիսի ըմբռնումը կոչում ենք էսթէտիքական, էսթէտիքական ըմբռնան ժամանակ թէպէտ մեր առաջին ուշադրութիւնը դարձնում ենք իրերի արտաքին երեսութիւնը վրայ (ձևերի, գոյների, հնչիւնների, շարժողութեան, կերպարանքի են), բայց շնորով այդ սահմանից անցնում ենք, գանում և հասկանում ենք մի նոր ներքին գոյութիւն այնպէս, ինչպէս մեր մարմնի մէջ ճանաչում ենք հոգի: և հարկէ այս տեսակ ըմբռնում միայն արդու կարող է ունենալ՝ ով որ նախապէս և անմիջապէս

(իրա ինքնազիտակցութեան մէջ) մի հոգեկան սկզբունք արդէն ճանաչել է, և նկատել է, թէ նա արտաքուստ և նշմարելի է դառնում, Աչա այսպէս ուրեմն ճշմարիտ էսթէտիքական հայեցողութիւն է կազմվում, երբ որ մենք արտաքին աշխարհքի զարմանալի երեսութիւնները նկատելով մեր սեպհական հոգւոյ պատկերներով ենք փորձում բացատրել այդ երեսութիւնները, երբ մեր սափհական ներքին գոյութիւնը արտաքին տեսանելի աշխարհքի մէջ ևս նմանեցած եղած ենք երեսակայում, երբ նորան ևս հոգի ենք տալիս, ինչպէս մեզ հոգւով զարդարուած ենք անուում, որովհետեւ ակնյայտնի նշմարում ենք, թէ նա մեզանից բոլորովին անկախ գոյութիւն ունի, ուրեմն մեզ պէս էլ հոգի պէտք է ունենայ: Խնչ ասել կ'ուզէ, որ այդպիսի ըմբռնման ժամանակ մեր մտքերը վերին աստիճան ոգեսորուած, դրգուուած են լինում, աշխայժ երեսակայութիւն ենք ստանում, մեր հոգին խորհրդաւոր տրամադրութեան մէջ է: Այս կերպով անտարակոյս մեր հոգւոյ գոյութիւնը ամենայն ճշմարտութեամբ զգում և տեսնում ենք. բայց ի հարկէ երբ որ նոյնը արտաքին աշխարհքում ևս նմանեցնում ենք իրեն մի իրողութիւն, — առանց որոյ էսթէտիքական ըմբռնում ևս չէր լինի, — շատ անգամ միան խափուսիկ մտացածին մղղորութիւններ ենք առաջ բերում, մեր մտքի ցնորդները ճիշտ արտաքին իրողութիւն համարելով: Այժմ տեսնենք, թէ այս համասու նկատողութիւնները էսթէտիքականի մասին՝ ինչ գործադրութիւն են գտնում կրօնքի մէջ:

§ 6. Նախ որոնք են այն առարկաները, որ որպէս մարդու հոգեոր գոյութեան յայտարար՝ տանում են դէպի աներուոյթ շրջանները: Այսպիսիներ կան շատ և բազմատեսակ: Ամբողջ բնութիւնը ըստ է տալիս անթիւ երեսութիւններ, փոփոխութիւններ, տարրեր և զօրութիւններ, որոնց քննութիւնը մարդու մէջ կրօնական կայծ են ձգում: Այս տերակ ներգործում են առանձին մարդկանց և աղքերի բախտի վիճակները: Որինակ դտնելու համար հարկաւոր չէ շատ հեռու գնալ:

Բնութիւնը դիտելով էր Աստուած փառարանում հին շայն և Պարսիկը, Ստեղծողին պաշտելով՝ նոքա դառնում են դէպի ելանող արեգակը կը որից աւելի պայծառ երեսոյին:

Էլ չեխն տեսնում։ Այն տեղ էին տեսնում Աստուծոյ գահը լուսաւոր հրեշտակներով շրջապատած։ Արտի վրայ ազդու կերպով ներգործող այս պաշտօնի նախապատճառ փառքը կարող էր տեսնել ամենայն օր ամենայն ոք, նա և ամենայն տիմը։ Տաղաւարից գուրս էր գալիս աղքատը, զինուորականը վրանից, և կրօնական պաշտամունքը կատարվում էր, Նորածին մանուկին այս ճառագայթների հրոյ մէջ առաւօտեան մկրտում էին, և ամրող օր, բոլոր կեանքի միջոցին, կուապաշտ Հայն տեսնում էր, թէ լուսոյ անսպառ աղքաւը ուղեցում է իրան իր բալոր գործերի ժամանակ, և ուսնիակն ու աստղերը պայծառացնում էին զիշերը, և նոքա ևս անհասանելի էին իրանց անսահնմանութեան մէջ։ Ընդհակառակ կրա կը նրանց մօտ էր, լուսաւորում և ջերմացնուը էր։ Այս փոխանորդի առաջ աղօթել և խոնարհել՝ մի ախսրժելի և բարեպաշտական պարտը էր։ Գեղածիծաղ արեգակի ելանելոց աւելի մաքուր բան չկար, և այդպէս մաքրութեամբ պէտք է կրակ վառէին և պահէին որպէս զի սուրբ և արեգակնանման մնայ……… Աւելի նշանաւոր է նկատել, թէ հին Արքականները միայն հուր չեին պաշտում նոցա կրօնքը ճանչում էր բոլոր տարերքների վսե մութիւնը, և նոցա մէջ էին տեսնում Աստուծոյ զօրութիւնն ու գոյութիւնը, Այդ պատճառով ջուրը, օքը, երկիրը սուրբ երկիւղ էին ազդում բարեպաշտների մէջ, որպէս զի անապական պահէին նոյնը։

Ուրիմն ի սկզբան անտի արեգակը օրուայ կառավարիչը, որ երկրի հորիզոնի վրայ վերին բարձրութիւններից հրաշալի փառաւորութեամբ շրջում է, և մարդուս բնակարանը առաստութեամբ օբնում է, ամենայն բան ինամում է, միշտ տեսանելի է՝ միշտ պէտք է դարձնէր մարդու միտքը նորանեղ աշխանից դէպի միւս անիմանալի աշխարհը։ Ոչ պակաս պէտք է ազդէր զիշերուայ երկնքի կամարը իր գողարիկ լուսնիակի և անհամար աստղերի բաղմութեան պայծառ փայլով այն գերերկրային աշխարհքը։ Կրակը իր բիւրաւոր բարութիւններով և ճարաւակող ուժով, զարմանալի արագութեամբ մեքեր պատառ պողով կրակուա փայլակը, երկիր զիշտող ուռուար, փոթորկի տիատա-

նեան շունչը, ծովի լոռնաբերի խռովութիւնն ու աղմուկը գուշակեցնում էին մարդուն այնպիսի գորութիւնների վնակութիւն, որ վեր են մարդու իմացողութիւնից։ Ծիածանը իր սիրուն գոյներով, փառահեղ արշալոյն ու վերջալոյար, անտառն իր խորհրդաւոր կենդանութեամբ, հինաւուրց ահազին ծառերը և այլն—ի սկզբանէ անտի երկիւղ էին աղդում մարդու սրտի մէջ վերին էակների համար։ Մեր նախահայրերը սօսեաց անտառի մէջ էին պաշտում Անահային։ Արդէն սաղմուերգուն բոցն անուանում է Աստուծոյ ծառայ, քամին—հրեշտակ, ողի շունչը զգաց որպէս Աստուծոյ շունչը։ Երկրի պըտղաբերութիւնը, ծաղիկների բուրմունքը, հողի տակ թափուցած զանձերը յիշեցնում էին ինամարկու էակները, որ գեանի տակից գործում են, կանոնաւոր կերպով մեր երկիրը կենդանացնում են, ժամ և տարի կառավարում են։

§ 7. Կթէ ամբողջ բնութիւնը վերին էակների բնակարան պէտք է համարուեր և մարդուն երեկի աշխարհքից դէպի աներեսով աշխարհք բարձրացնէր, — այս իրողութիւնը կատարվում էր և կատարվում է աւելի ազդու կերպով նոյն ինքն մարդկային հանգամանքները քննելու ժամանակ։ Մարդուն ծագումը ոչնչութիւնից դէպի զոյութիւնը, նորա ամբողջ կեանքը, երկար թէ կարծ, երջանիկ թէ թշուառ, ալպահով ճանապարհով թէ կորսարեր խութերի միջով, մահ, որ ոչ քաջ պատանուն և ոչ թոյլ ծերին չի, ինայում, — այս բոլորը թօթափում և առոչինչ են զնում մարդու ոյժը, կամքը, հաշիւը և ցոյց ևն տալիս մի ուրիշ իշխանութիւններ, որ կարող են տալ և առնել կեանք։ Մարդկային ազդը և նորա պատմական վիճակները նոյնպէս զարթեցնում են կրօնական զգացումներ, մտքեր, գաղափարներ, — Վայրենութիւնից հետզետէ կանոնաւոր կեանք զարգացաւ, երջանկութիւն բերող զիւտեր դանուեցան, սէր բարեկամութիւնն առաքինութիւն կապեցին ընտանիքի կապերը, մարդս բնակութիւն հաստատեց, հայրենիք ստացաւ բարքը մեղմացաւ, սովորութիւնները ազնուացան։ Քաղաքական լնիերութիւն գոյացաւ, օրէնքներ հաստատեցան և կարգաւորուեցան, իրաւունք, արդարութիւն և բարեկործութիւն ճա-

Նազուեցան և պաշտուեցան. զեղաբուեստները ծաղկեցան և աւելի ազնիւ դրաբանութիւններ մատակարարեցին. մեծ պատմական եղեռութիւնները վորձ և լաւ լիշողութիւն դառան, Այս բոլորը դարձնում էր մարդուս հանճարը դէպի վերին էակներին, որ մարդկային նեղ հանգամանքներից բարձր են, և մարդուս սրտի յայտնութիւնը հաւաա հաստատեց, թէ այն էակների իշխանութիւնից և իմաստութիւնից է կախուած անցեալը, ներկան ու ապագան. Բայց և այժմ, երբ որ մարդուս հանճարը աւելի ընդարձակուել է, կրօնական հաւաաոյ այսպիսի աղբիւրները գեռ չեն սպառել. Տիեզերական պատմութիւնը միշտ կունենայ այդ ներգործութիւնը. Ոչ միայն պատմութան մեծ եղեռութիւնները, այլ և մանր վեպքերը այդ հրաշքն են դործում. Այն բազոր, որին մարդս ինքը հանգիպում է, կամ թէ ուրիշի վրայ է տեսնում, միշտ նոր կապեր է հաստատում աներեւոյթ աշխարհքի հետ. Քանի անգամ մարդս իր խղճմտանքի առաջ ինքն իրան ասում է, թէ իր անձնական՝ երբեմն աննշան երեւեցած հանգամանքների անբացատրելի օղակցութիւնների մէջ մի խորհրդաւոր ազմիւր է հոսում. Կրօնական հաւաաքի համար, Եւ գուցէ հենց այս է ամենայն հաւաաքի մաքուր սկզբնաոիթն ու բացատրութիւնը.

§ 8. Եթէ կարողացանք կրօնական զարգացման շարժառիթերի մի գլխաւոր դասը հասկացնելու, ապա դժուար չէ իմանալ այդ գարգացման մանրամասնութիւնները. Մարդուս հանձարը յայտնի բացատրելի իրողութիւններից դէպի անբացարելին, ենթակայից դէպի անենթական է անցնում. Որպէս զի ասաւուածութեան համար, նա պէտք է բնութեան և պատմութեան սահմաններից դուրս նայէ. Յէպէտ նա նախ երեսիների վրայ գարձնում է իր ուշըր, բայց նոցա ետևից ակամայ զտնում է էականեր, որոնք չեն երեւում, բայց երեսիները արտադրում, դոյացնում, ձևացնում են. Այսպէս ուրեմն իմանալի աշխարհը լրանում է մի անիմաննալի աշխարհըով, և առանց այս լրացման մեր հոգին խաղաղ չէ. Ահա այս է էսթէտիքական աշխարհատեսութեան արդինքը. Ակամայ հետախուզում է մտածող մարդը մտածողութիւնից վեր զրջանը, բայց այս

տեղ գեռ մարդս որոշ խնդիրներ, որոշ հարցմունքներ, որոշ դատողութիւններ չեն անում. նորա մտածողութիւնը ակամայ է և ոչ թէ որոշ նպատակով. Դեռ որոշ գրգռութիւններից բաղ-ձանքներից, երկիրովից կամ յօյուից դրդուած չեն մարդու մտածել վերին աշխարհի մասին, երբ էսթէտիքական կերպով ըմբո-նում է իր աշխարհը. Մենք շուտով կը տեսնենք որ այդ գործ-նական և տեսական շարժառիմներն էլ մարդու մտածողու-թիւնը հարկաւ տանում են աներևոյթ աշխարհ. բայց միայն դրա չեն ներգործում այդպէս. Այլ դրշանից բոլորովին ան-կախ են կրօնքի էսթէտիքական արմատները, Բնութիւնը և մարդկային կեանքը անմիջապէս զննելու ժամանակ և նորա-նից թարմ տպաւորութիւններ ստանալու ժամանակ՝ մաքերն ակսում են աղատօրէն ընթանալ և բաղադրուիլ տեսակ տեսակ նոր հիւսուածքներ կազմելով, արմատանում և հաստատվում են գիտակցութեան մէջ և գառնում են իշխող զգացմունքներ, համոզմունքներ և գաղափարներ աներևոյթ աշխարհի մասին. Խաղալով և ստեղծող երևակայութեամբ լրացլում է մարդու նիւթական մաքերի պակասորդը, և ինքն ըստ ինքնան անհոգի արտաքին աշխարհը մի հանճարեղ և հոգի ունեցող է դառնում: Միծ դեր է խաղում այս տեղ մանաւանդ մարդու աչքն ու անկանչը: Սոքա են բերում այն նիւթը, որով մարդս մի նոր գաղափար ական աշխարհ է ստեղծում: Նախ սոցա է պար-տական մարդու, որ վերին աշխարհքներում է թափառում ստեղծող էսթէտիքական գեղարուեստութեան պէս, ուր մարդու նիւթը արտազրոյդ գործողութեան և բարձր ողեւ-որութեան չնորգով շատ նորանոր պատկերներ է կազմում, որոնք իրանց հետ զարթեցնում են նաև պէսսպէս զգացմունքներ: Կրօնքը որ այս կերպով ծագում է, ինչպէս ոմանք ասում են հնաւա-տացած բանաստեղծութիւն» է: Այդ կրօնքի զարդացման աստիճանը կախուած է մարդուս հոգւոյ զարդացման առ-տիճանից: Միայն ինչպէս տեսանք, նա կարող է գոյանալ այն-պիսի հոգւոյ մէջ, որ ի լոնէ զգացող, կենդանի և զօրեղ երեա-կայութիւն ունի. բացի այս հարկաւոր է, որ ըմբանով հոգին փորձով տեսնէ բնութեան բազմակողմանի հրաշալվքներ և մարդ-

կային կեանքի ծանրակշեռ եղելութիւններ.

§ 9. Արդ այս էսթէտիքական շարժառիթները ի՞նչ տեսակ կրօնական համոզմունքներ և զգացմունքներ կարող են ստեղծել: — Եթէ ուրիշ զրոխներ հետք չը կցորդուին. որ մնաք յետոյ յիշելու ենք, անշուշտ մարդուն անյայտ պիտի մնար, մի Աստուծոյ գաղափարը. Որովհետեւ ելքեք չենք կարող ամբողջ աշխարհը և ամենազանազան մարդկանց ու ազգերի բազափ բոլոր վիճակները, անցեալը և ներկան, մի անգամով իմանալ. իսկ ապագան բոլորովին մութ է մարդու համար. Միայն հատ հատ արեցիթներ կարող են ըմբռնելի լինել մարդուն, այն ևս շատ տարբեր բնութեամբ: Իսկ մարդս այն վիճակի մէջ, ինչ վիճակի մէջ որ մնաք նորան այժմ նկարագրում ենք, իր գիտակցութեան մէջ չունի դեռ այնպիսի մի գաղափար, որով հնարաւոր լինի անթիւրայց ներհակ երեսյթները մի միակազմ ամբողջութեան դարձնել և նորա ետեից միայն մի աներեսյթ էակ մտածէ, որ բիւրաւոր կերպով յայտնում է: Ուստի ծշմարիտ միասաւածական (մոնոթէխադ) չի կարող և չէր կարող զարգանալ զուտ էսթէտիքական շարժառիթներից, Բայց որովհետեւ մարդուս մշշտ երեացել են չնչաւորացած երեսյթներ, ապա ուրեմն հարկաւ պէաք է զարգանար բազմաստուածութեան հաւատը (պոլիթէկզմ), բնութեան և մարդկացին երեսյթները այնպէս էին ներգործում, իբր թէ նոքա զանազան ազբիւրներից են յառաջ եկել և այդպէս էլ կարծում էին: Եւ իրօք մեր Հայոց, ուրիշ արևելեան ազգերի, Յունաց, գերմանական դիցաբանութեանց մէջ գտնում ենք բոլոր վերջը յիշած երեսյթների և հանգամանքների համար անձնաւորուած գերբնական իշխանութիւններ: Շատ հասկանալի է որ զանազան դիցաբանութեանց մէջ մի քանի հիմնական տիպերը միշտ կրկնվում են: Իսկ միւս բաներում նոյնպէս մեծ զանազանութիւն է իշխում: Այս զանազանութեանց մէջ ես մնաք դարձեալ տեսնում ենք, որ էսթէտիքական ըմբռնումը՝ միւնոյն հաւատար ընդհանուր մարդկային զարգացման օբէնքներով՝ միշտ մի և նոյն հիմնական գաղափարներ է ծնանում: Բայց որովհետեւ էսթէտիքական երեակացութիւնն ու մտածողութիւնը ոչնչ սահման չունի, որովհե-

տեւ առանձին մարդիկ և ազգեր շատ տարբեր զարգացում ունին, և որովհետեւ զանազան ազգերի վիճակները բազմատեսակ են և բնութեան երեսյթները՝ զանազան երկնքի տակ՝ ոչինչ համեմատութիւն չունին, — չէր կարող մի ընդհանուր և վիակատար ներդաշնակութիւն հաստատուել բազմաթիւ դիցաբանութեանց մէջ: Իսկ եթէ նոցա բոլորի մէջ առանց բացառութեան միայն մարդկային աստուածային մէջ ներկայական են երեսակայել, եթէ ոչ միայն մարդկային հանգամանքներ: Խնչի մասին որ մնաք մեր ինքնագիտակցութեան մէջ ոչնչ հետք չենք գտնում, ինչ որ մնաք մի որ և իցէ չափով մեր մէջ չենք գտնում, այն մնաք չենք կարող երեսակայել, ուրեմն և մեզանից դուրս բարձր չանձարին էլ չենք կարող տալ: Եւ հին աստուածների կերպարների մէջ մնաք գտնում ենք միայն այն գաղափարները, որ մեր կեանքից մելո ծանօթ են: Կրօնական առասպեկների մէջ շատ յայտնի են հօր, իշխանի, ինամուղ և մնուցանող մօր կերպարներներ, երիտասարդի, կոյսի, ուստերց և զստերց կերպարներներ, մարդկային առաքինութեանց, կարօտութեանց, մօլութեանց, ցանկութեանց և այլն այսպիսի պատկերներ, աստուածներն տրվում են մարդկային հաստատութիւնները, մինչեւ անգամ բնակարան և ծողովարան ունին նոքա, են: Իսկ եթէ այս բոլորը մարդկային առասպեկների մէջ շատ անգամ չափացանցութեամբ և այլօրինակ բաղադրութեամբ են ներկայացրած, ինչպէս որ մեր կեանքում բնաւ տեսնուած չէ, այս բացարզում է էսթէտիքական արտագրութեան այն ազատութիւնից՝ որ ժամանակի, տարածութեան և չափի հետ խաղում է ամենայն քմահաճութեամբ:

§ 10. Կրօնական զարգացման էսթէտիքական շարժառիթները այն յատկութիւնն էլի ունին, որ նոքա ինքն ըստ ինքեան անտարբեր են բարութեանց և չարութեանց, երջանկութեանց և թշուառութեանց, նոյնպէս և բարոյականութեան և անբարոյականութեան դէմ: Այսինքն էսթէտիքական ըմբռնման նիւթ կարող է լինել անխտիր թէ թշնամական և թէ

բարդեկամական, թէ հաւանելի և թէ գարշելի երևոյթները։ Եւ իրօք բնութեան և մարդկացին կեանքում սոէտ զանգում է շատ գեղեցիկ, յարմար, հաւանելի և պատկառելի բաների հետ նա և անձունի, վեասակար, զղուելի բաներ, Յիշենք միայն չարաբաստիկ հրւանդութիւնները, թունաւոր քամիներն ու բնական իրերը, անծունի հրէները, կարգից դուրս տգեղու, թիւները, անմարդաբնակ անապատներն ու սառուցի գաշտերը, աւերիչ հեղեղներն ու երկրաշարժները, սարսափելի պատերազմներն ու մարդակոսոր մարտերը, մարդու գաղտագործ կամ նաև յանդուցն համարձակ չարագործութիւնները։ Այսպիսի երևոյթների ետեց արդէն հին ժամանակներում գտան չար ո գիք թաքուցած։ Մայա երեակայացնում էին կամ բարի ոգիների մէջ միացած, այսպէս որ աստուածները անհասանելի խորհրդով և փոփոխակի տրամադրութեամբ բարութիւն և չարութիւն էին բաշխում մարդոց։ կամ բարի գերբնական հակների զիմաց դնում էին և չար ողիներ իրար հետ սպազմաբերու։ Նոյնպէս ինչպէս և մարդոց մէջ բարութիւն և չարութիւն միասին է երեւմ, բայց մէկի մէջ աւելի բարութիւն միւսի մէջ աւելի չարութիւն։ Այս վերջինանգամանքը աչքի առաջ ունենալով, նոյնպէս վերը յիշած բոլոր ֆիզիքական և բարոյական չարիքը՝ արդէն հին ժամանակներում գաղափար։ կազմեցին սատանայի, ստախօսի, բամբասողի, կարստաբերի մասին, այն է անձնացած չարութեան մասին։ Միով բանիւ մարդուս սրափ մէջ, պատմական իրողութեանց մէջ և բնութեան երևոյթների մէջ եղած տարբեր տարբերքների յայտնի կոփու վերաբերեցին նաև գերբնական զօրութիւններին և այդպէս երկու արքայութեանց (դուալիզմ) գաղափար կազմուեցաւ, որոնցից իւրաքանչիւրը իր իշխանով միւսի հետ անհաշտ թշնամութեամբ և կռուելով է ապրում։ Մարդուս սրափ և արտաքին աշխարհի ծանօթութիւնը այն համոզութեամբ հաստատեց, թէ բարութեան արքայութիւնը զօրեալ է քան իր հակառակորդի, և թէ սա վերջապէս նորանից կը յաղթուի։ (Զրուան, համեմատիր Յովիքի գիրքը)։

Մարդկային հանգամանքների համեմատութեամբ՝ ինչպէս օրդոց և ծնողաց, ծառաների և իշխանների, նոյնպէս և ուրիշ այսպիսի

մառվթեան և մարդկային ոչ այնքայն նշանաւոր երևոյթների համեմատութեամբ՝ գաղափար կազմեցին ստորադաս գերբնական ոգիների մասին, որոնք որպէս կրտսեր աստուածութիւններ և երաշտակներ (բարի և չար) յայտնի են, նա և այն մարդիկ, որ գերօրինակ մարմնական կամ հոգեկան կատարելութիւններ ունեին, որոնք չարչափանքով, աշխատանքով, վտանգի մէջ, առաքինութեամբ, անձնուրացութեամբ, իրանց գիւտերով և ճարտարութեամբ, կամ փրկարար հաստատութիւններ հիմնելով, մեծ չարիքի դէմ առնելով, մեծ գաղափար յայտնելով, են, իրանց ազգին ծառայեցին՝ աստուածների շարքը դասուեցան։ Մինչեւ անգամ այն կենդանիներն ու բոյսերը, որ մարդու համար առանձին կերպով շահաւոր էին, բարձր հանձարի և կամքի տէր համարուեցան և աստուածացան։

Հին ժամանակներից արդէն՝ աստուածային էակների մամին հաւատքի հետ՝ յայտնի եր նաև վախճանածների մի տեսակ կեանքը գերեզմանից արտաքոյ։ Մարդու չը յոդնող հանձարի ազատօրէն արտադրողութիւնը հեշտութեամբ կամուրջ գտաւ այդպիսի հաւատքի համար Քնից ամենօրուայ արթնութիւնը, բնութեան մէջ տեսակ տեսակ փոփոխութիւնները, երկրի տարեկան նորոգութիւնը—ազդու կերպով տպաւրվում էին գիտակցութեան մէջ։ Եւ այն աստուածը, որ երկրի մուլին արգանդից այսպէս ամենայն բանին պարզեցում էր երկրաւոր կեանք, մարդկային հոգիները, որ մի անգամ հաստատել էր մարդկային մարմնական բնակարանի մէջ, վերստին հանում էր այնտեղից և տանում էր իր իսորհրդաւոր աներեւոյթ արքայութիւնը, ուր նա որպէս թագաւոր իշխում էր և ուր ուրեմն բազմաթիւ հոգեկան հպատակներ պիտի ունենար։ Բանսաստեղծող մարդկային հանձարը ի հարկէ աղատ էր ամենայն կերպ զարդարել մեռեալների այսպիսի կեանքը մահից յետոյ և նոցա հանդերձեալ բնակարանը։ Ինչպէս մարդու երկրաւոր կեանքի մէջ վաճք ու պատիժ, երանութիւն ու տանջանք կայ. այնպէս էլ կարծուեցաւ, որ այս մեր ժամանակաւոր կեանքից յետոյ և արժանաւոր հաստոցում կը լինի։ Խաւար և արտափելի բանաւորի և չարչափանաց կամ ահուղող բերող ուրիշ տեղերի

գաղափարը, իսկ միւս կոզմից խնջոյքի պալատները, հովուական սիրուան դաշտերն ու բնութեան պերճ անսարանները բաւական էին, որ անեղ դատաստանով դատապարտեալների և երանեալների բնակութեան տեղը նկարագրէին (չէօլ, հաղէս, տարտարոս, օրբուս, ելիսէոն, դժոխք, սանդարամետ, երկինք, վալհալա, ևն):

§ 11. Էսթէտիքական շարժառիթներից գոյացած կրօնական համոզմունքներին միշտ կցորդվում են մարդկային տեսականութեակ աշխոյժ հակմունքներ, զղացմունքներ և հոգեկան ներքին ազգութեաներ. Արտի խորքից բղասած հիացում աներենոյթէակի համար, միսիթարուած ողի, ջերմ և չնորհապարտ սէր, սրբազնացած երկիւղ, անսահման պատկառանք, անդրդուելի վըստահութիւն, անսասան հաւատարմութիւն, անսարտունջ խոնարհումն անմահ աստուածների վճռին, անկեղծ պաշտամունք, խոր յարգանք, մարդկային տկարութեան զդացմունք գերբնական զօրութիւնների մեծութեան համեմատութեամբ, — ահա այս են այն արդինքները, որ բնականապէս ազատ էսթէտիքական արտադրողութեամբ կրօնապաշտութիւնից յառաջացել են. Եթէպէտ այդպիսի կրօնքը նոյն մաքրութեամբ, ինչպէս որ մենք նկարագրեցինք, միայն մանուկ ազգերի մէջ զարդանալ կարող էր և հեթանոսութեան արմատական մասն է յիշեցնում, — բայց այնու ամենայնիւ մենք մեր այժմեան կրօնական տեսակէտիքարձրութիւնից չպէտք է ծաղրենք և առ ոչինչ համարենք կամ թէ ընարեալների գուողութեամբ՝ չպէտք է արհամարհելով նայենք այն ազգերի վրայ, որոնք զվասարապէս էսթէտիքական շարժառիթներից գրութած՝ ազատ բանաստեղծական ձեռով ըմբռնեցին աներենոյթ աշխարհքը Ծնդհակառակ այդ կրօնքների մէջ մենք տեսնում ենք շատ յարգելի ձգտում լսել խղճմտանքի ձայնին և ապրել երկրաւոր մասախ գործքերից աւելի բարձր սահմաններում. և անկասկած աշխարհքը իր քաղաքակրթութեան շատ մասով հին ազգերի կրօնական զաղափարներին է պարտական, — մենք մեր նախահայրերի թիկունքների վերայ ենք կոթնած. Եւ եթէ մեր սերունդը աւելի նորագոյն ժամանակների, մանաւանդ քրիստոնէութեան ազգեցութեամբ

աւելի վսեմ և խորհրդաւոր կրօնք նանաչեց, քան թէ հեթանութեան ժամանակին այդ նարաւոր էր, — գոնէ այս էլ պէտք է լուստովանինը, թէ և մեր ժամանակում նա և ամենազարգացած ազգերի մէջ, ի՞նչպէս երբեմն մարդուս աստուածացնում են, որովհետեւ նա պատիւ, պաշտօն, հարստութիւն ունի. մինչև անգամ մարդկային արժանաւորութեան անվայել ինչպիսի բաներ աստուածանում և պաշտում են. որբան մեծ է սիւթապաշտութիւնը, որ ի հարկէ աւելի սուր է, քան նեթանութեան ազնիւ և անմնղ ձևերը: Բայց դժուար չէ բացատրել, թէ այժմեան հանգամանքներում, քրիստոնակաւան ազգերի մէջ, կրօնական զարգացման էսթէտիքական շարժառիթները այնպէս մած և նախապատիւ նշանակութիւն չեն կարող ունենալ, ինչպէս որ ունեցել են հին ժամանակներում և այսակ, ուր զեռ յայտնի չեն հաւատոյ որոշ գաւանական մասունքը: Աշխարհքը փոխուել է: Ոյժմ մարզս պէտք է իր մտքերի ու հոգերը զվասարապէս իր ապրուստի հաստատութեան վրայ դարձնէ, կեանքի գործնական շահերը նորան շատ են դրակեցնում: Այս հոգեւոր կեանքի համար զրադուելու՝ այժմ շատերը ժամանակ չունին, նոցա թարմ ոյժը բոլորովին սպավում է քրանքի աշխատանքի մէջ, և էլ ոչինչ աշխատութիւն ոչինչ հետաքրքրութիւն չի մնում ուրիշ բաների համար, բոլորն այդ տեղթաղվում է: Բայց կայ և ուրիշ աւելի միսիթարական պատճառ, քան այս նիւթականը: Նախապաշարմունքից և թիւթեամութիւնից ազատ, ողջամիտ բնագիտութիւնը աւելի խոր ձշմարտութիւններ տարածեց արտաքին աշխարհքի և մարդկային հոգեւոյ մասին, որի պակասութեամբ միայն հին ազգերը կարողացան կրօնական գաղափարների այնքան հարուստ գանձ գիգել: Այս յառաջադիմութեան նորհքով բազմաթիւ երեակայական ցնորդքները արմատով կտրուեցան, որով առաջ մարդիկ նիմապուր կենդանացնում էին: Բայց այս այժմ կըրթութիւնը մանուկի կրօնական զարգացման սկզբնաւորութեան համար որոշ ուղղութիւն է տալիս: Քրիստոնէութիւնն էլ անդար այդպէս է ազդում իր գաւանակիցների վրայ: Բայց այնպէս զարձեալ չպէտք է մոռանակը կրօնական զարգացման

Էսթէտիքական պատճառների մեծ նշանակութիւնը։ Զոր օր՝ իսրայելացոց ազգը մի դրական կրօնք ժառանգեց։ և նա դառնաւ միաստուածական։ Բայց այս մի Աստուծոյ հաւատով պահպանուեցաւ նա, միայն անդադար յիշեցնելով նորան Աստուծոյ մեծամեծ գործքերն ու նորհ քները։ Աւ սաղմոսների մեծ մասը, մարգարէների ամենագեղցիկ խօսքերը, Յովերի վեհական գիրքը, են, ինչո՞վ են յայտնում իրանց խոր ներգործութիւնը, և թէ ոչ նոցա մէջ հիւսուած էսթէտիքական տարելքով, այսինքն յիշեցնելով սրտաձմիկ մարդկային դրութիւններն ու վիճակները, նկարագրելով բնութեան պահնչելի երեցթները, որի հարկէ աստուածային իմաստութեան և փառքի հետքերն են ցոյց տալիս։ Այս միաբը Պօղոսը այս գեղցիկ խօսքերով է յայտնում։ Աներեսոյթքն Աստուծոյ խոկքանիէ աշխարհի արարածովք իմացեալ տեսանին։ Ամենավսեմ՝ Կրօնական համարտութեանը պակասումէ իր խարիսխը՝ մարդուս՝ սրտի մէջ, եթէ սա էսթէտիքական նախապատրաստութիւն չէ ունեցել։ Մենք շուտով կը տեսնեաք, թէ ուրիշ նոյնպէս նշանաւոր չարժառիթներով մարդու մարդկային կեղեցից եւ նիւթականութիւնից՝ բարձրանում դըսիր մարդկային կեղեցից եւ նիւթականութիւնից՝ բարձրանում է։ սակայն միայն էսթէտիքական տպաւորութեամբ անմիջապէս և շուտով իմանում է, թէ ուր պէտք է զիմէ իր բռնած ընթացքով, Բաւական է մէկ անգամ ել յիշել, թէ ամեն ուրեկայ և ներգործող Աստուծոյ շունչի մասին համոզմունք, նորա փառաւորութեան, բարութեան, իմաստութեան և զօրութեան մասին գաղափար, նոյնպէս և բարեպաշտութեան զգացմունքներն ու տրամադրութիւնները, յափշտակութիւն, վսեմութիւն, սէր, երկիւղածութիւն, խոնարհութիւն և հաւատարմութիւն, ուրեմն ամենայն կրօնքի նշանաւորագուն մասերը իրանց առատարութիւն աղբիւր ունին էսթէտիքական գործողութեանց մէջ։

II
ԿՐՈՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱԼՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ։

§ 12. Մարդուս գործնական կեանքը զարձած է մասամբ

երջանկութեանց մասամբ թշուառութեանց վրայ։ Առաջինները պէտք է ստանանք, վերջններից պէտք է խորշենք, Կեանքի առատութիւնն ու առողջութիւնը, ձմ'արտութիւնն ու առ արինութիւնը հաճելի են և ուրախացնում են մարդուն, ուստի և զնահատվում են նորա, ցանկալի, բաղձալի են դառնում, կամք և գործք են յառաջացնում։ Մեր առողջութեան խանդարմունքը, մեր գիտութեան և ձգտման սահմանները անհաճոյ են և ցաւեն պատճառում մեղ և զրդում են մեղ այդ բաների առաջն առնել, ընդդիմանալ դոցա և պաշտպանութիւնց։ Այսպէս գոյանում է ցանկութիւնների, ձգտումների և գործողութիւնների շատ կամ քիչ քանակութեամբ մի գումար, որոնք մէկ կողմից բարութիւններին տիրելու, միւս կողմից չարութիւնները հեռացնելու համար են գործում, և որոնք բոլորը միասին մեր գործնական կեանքն են կազմում։ Ահա այս կեանքն էլ իր զանազան ձեերով կրօնական զարգացման շարժառիթ է դառնում, որովհետեւ ամենայն տեսակ կարօտութիւններով մարդուս անդադար այս տեղ էլ ինքն իրա թուլութիւնը հանաչում է և անիմանալի գորութիւնից է օգնութիւն սպասում։ Մարդու կեանք է ստանում՝ մեծամեծ պիտոքներ ու կարօտութիւններ էլ հետքը բերում է։ Առանց սնունդի և խնամքի մարմինը չի կարող պահպանութիւն, հոգին էլ չի կարող զարգանալ, եթէ մի արտաքին աշխարհը չունենայ իր առաջ, որ նորանից տպաւորութիւններ ստանայ և ապա ուրեմն զաղափարներ ևս կազմէ։ Բայց ի հարկէ քանի որ մարդուս տեսանելի աշխարհը նորա պէտքերը լրացնում է, զործնական ցուցերը գերբնական աշխարհը մասին մեռած կը մնան նորա մէջ։ Սակայն շատ շուտովէ երեսում այս աշխարհը անգոհացուցիչները, և այս ժամանակ մարդու իր գորութիւնն ու խաղաղութիւնը միայն գերբնականի մէջ կարող է գտնել։ Ահա այս մտքերի մանրամասնութիւնը պիտի քննուի հետևեալ տողերի մէջ։

§ 13. Մանկան առաջին աստուածներն են նորա ծնողները. նորա նեղ մտաւոր պաշարը գեռ չէ ճանաչում ոչ մէկ էակ, որ նոցանից աւելի բարձր լինի, իր կախման զգացմունքը, ամենայն ուրախութեան ակնկալութիւնը, իր սէրն ու

յարգանքը մանուկը կապում է հօր և մօր հետ։ Բայց շատով
իմանում է, պատանին, թէ ամենակատարեալ ծնողներն ան-
դամ չեն կարող նորան բոլոր վիսամներից պաշտպանել և ամե-
նայն վտանգներից պատել։ Նորա իրանց սիրելի զաւակին
ցոյց են տալիս այն բարձր էակը, որի առաջ իրանք էլ պէտք
է խոնարհեն։ Եւ ո՞ր տեղ է գտնում մարդու մի այնպիսի
առարկայ այս աշխարհքում, որ տեսողապէս երաշխաւորէ իր
կեանքի բախտաւորութիւնը։—Մեր զօրութիւնը սահմանափա-
կուած է, մինչեւ անդամ ամենազօրեղ իշխանը չի կարող տա-
րածել իր բարուկը ամենայն տեղ։ Ամենառողջը հիւանդութիւ-
նից, քաջակաղմբ մահից ազահով չէ։ Մարդուս ոչ մի զգու-
շութիւնը չի պաշտպանում նորան վտանգներից, ամենաճարպի՛-
կըն անդամ մնե զգուարտութիւնների է հանդիպում։ Ամենասուր
աշքը էլթափանցում մութ ապագայի մէջ։ Ամենասիելօք հաշիւն
ու նախատեսութիւնը խայտառակիվում է։ Աղքատին ճնշում է
վիշտ, թշուառութիւն և արհ ամարհանք։ Հարուստը խեղտվում
է հոգսերով, որ իր գանձերը չը կորցնէ այլ շահեցնէ։ Աղքական-
ներն ու բարեկամները ինչպէս բախտաւոր են իրանց կեանքով և
ձեռք ձեռքի տուած միմեանց օդնում են խորհրդով և զործով.
սակայն մահը բարեկամներին բաժանում է, բախտաւոր որդոց
գարձում է ամենուց մոռացած ոքրեր, հօրից խում է պրուն,
իր միակ յոյսը, միսիթարութիւնն ու ապաւէնը ծերութեան մէջ։
Ամենավտան հաւատարմութիւնը շատ անդամ պիլով դաւաճա-
նութեամբ է հատուցանվում։ Տրէշի չարագործութեամբ խզվում
են ամենասուրբ կապերը։ Մեր ուրախութիւնն ու երջանկու-
թիւնը մեզանից յափշտակում են գաղտնի դարաններով և բաց-
արձակ թշնամութեամբ։ անբիժ անունը ապահովէ ըսմէրասան-
քից։ Ամենամաքուր առաքինութիւնն անդամ, ամենազնիւ-
ծգուղութիւնն անդամ ազատ չէ վշտերից, այլ ընդհաւառակ-
այդպիսի վշտերով է վարձատրվում։ Կամ միթէ այս աշխարհքում
առ հաստրակ առաքինին բախտաւոր է և բախտաւորը առա-
քինի։—Քաղաքական կարգը ամենուն չի կարողանում տալ
ինչ որ արդարութեամբ նորան կը վայելէ։ Շատ անդամ
վնասվում է խոնարհ առաքինութիւնը. այն ինչ յամփող չա-

րութիւնը խնդում է և անդուսպ ծաղրում է ամենասուրբ
օրէնքների վրայ։ Կեղծաւոր խափեփան, յանդուզն կողոպաթ-
շը շատ անգամ անվրով ուրախ կեանք է վարում, ազգեցու-
թիւն, անուն, պատիւ է ստանում։ Ասում են, թէ խղճմտան-
քը տանջում է վատին, արդար պատուհասին կարժանանայ
չարագործը։ Բայց քանի անդամ հակառակն ենք տեսնում։ Եւ
ինչպէս է վարձատրում աշխարհքը իր մեծ բարերարներին։
Քրիստոսը միայն խաչի վրայ հանգստութիւն գտաւ։ Միայն
Երուսաղէմը չչալածեց իր մարգարէներին և բարերարներին,
այժմ էլ շատ նման գործեր են կատարվում։ Միթէ չի պատա-
հում, որ ազնիւ մշակը իր կեանքը ուրախութեամբ զոհում է
ազնիւ շահերին, իսկ կուրսութիւնն ու չարութիւնը ամենայն օր
թոյն է ատլիս նորան խմելու, այնպէս որ միայն մահն է փր-
կում նորիան։
Ինչպէս այս վորքը հանգամանքների մէջ, այնպէս էլընդհան-
րապէս ամենայն մարդկացին զործը անհաստատ և անբաւարար
է երեսում։ Տիեզերական պատմութիւնը անհերքելի կերպով
ցոյց է տալիս մարդկապին անկարողութեան, մոլորութեան, վշտի
և կարօտի հետքերը։ Ո՞վ է կարողացել կանգնեցնել հեղեղների,
երկրաշարժի, ժանափառի կոտորածքն ու աւերմունքը։ Ո՞վ է
փոթորկին հրամայում, որ նաւը չփրէ։ Ո՞վ է փոփոխում ան-
յաջող եղանակը և պաշտպանում է քրտնաջան դիւզականի
վաստակը։—Այսպէս են և մարզուս հոգեկան բարոյական հան-
գամանքները։ Կուրութիւնն ու չարութիւնը շատ անդամ իր
ազնիւ շահերի դէմ է հանդիսացել և հալածել է բանտով, խա-
չով, կախաղանով, հաւատաքննութեամբ։ Եւ մինչեւ այս օր էլ
ամենազնիւ կամեցողութիւնը, ամենալուսաւորեալ միտքը,
բանականութեամբ կառավարող մարդկային հանգամանքները,
անհանձիր աշխատանքը, ամբողջ ազգերի ճիշը—չեն կարողա-
նում արդիւել, որ պատերազմի չար ոգին միայն մէկ չարադրէպ
կայծով իր ջահը չփառէ և միլինաւորների վրայ յուսահատու-
թիւնութիւնը չափառութիւն չտարածէ։
§ 14. Կրօնական զարգացման գործնական շարժառիթը
ցոյց տալու համար, մենք պէտք է մի հայեացք ձգէինք մարդ-

կային, համգամանքների պակասաւորութեան, անբաւովթեան, ունայնութեան, անհաստատութեան և անձեռնհասութեան վրայ։ Այս հայեացքը ի հարկէ գոռողին կարող է խոնարհեցնել, թեթեամտին զգուշացնել։ Թէպէտ և միւս կողմից մարդկային ունայնասիրութիւնը իրողութիւն պէտք է համարենք, որ առ ոչինչ է համարում կեանքի խրատը, —մեզ դարձեալ այդ բաները չեն վհատեցնում և թուլացնում։ Այդ ամայի տեսարանի վրայ բացարձակ և աներկիւղ հայեացք ենք ծգում և դորահետիւ աւելի երջանիկ տեսարանի գոյութիւնը չենք երկրայում։ Կոտրտած նաև վշտուրի ափերի կշտին, եթէ մենք երկնքին ապավինում ենք և դեռ էլի ուրախ կեանքի հաւատքն ունինք։

Ո՞ւր են ամսում ուրեմն մարդուն այս աշխարհից ստացած փոքրերը: — Մի կողմից նոքա գոյացնում են գոհութիւն և բաւականութիւն մարդու զիտակցութեան մէջ, լինի այս մարմնական հաճութիւնից, թէ զիտութեան զուարձութիւնից և բարոյ-ականութեան յալթութիւնից—այս մի և նոյն է: Իսկ միւս կողմից աշխարհը մարդուն չի բաւականացնում, թշնամնում է, և նորա մէջ ամենայն տեսակ ցաւեր է գոյացնում: Եւ այս իր հոգւոյ վիճակները զգալու ժամանակ՝ գոյանում են նորա մէջ բաղդանքներ և խորչումներ, որոնցից մարդս այլ ես չի պահանջում, որովհետև աշխարհից դեռ չէ ազատուել. նա չի կարող իր կարօտութիւններից թօթափուիլ, քանի որ կեանքից չէ թօթափուել: Կ'ոչ անէ ուրեմն. նա ի հարիէ ազատ է հետեւալ վիճակներից մէկը ընարել: — Մարդս կարող է այնքան ճաշակել աշխարհը, որքան որ նորա համար այն ճաշակելի է. կարողութեան չափ ամենայն անյարմարութիւններից հեռու քաշուել և վտահանալ միայն իր անձի վրայ. իր կարօտութիւնները պակասացնել. իր գործունէութիւնը եսասիրութեամբ սահմանահակել, ապօւշի պէս անխոհեմութեամբ նորա մէջ ասլրել՝ ինչպէս և քանի որ այդ հնարաւոր է, կամ վերջապէս յուսահատութեամբ և առանց խարսխի անձնատուր լինել ճակատի հարուածի ճիրանին: Իսկ ով որ տեսզական եր ջանկութիւն և գոհութիւն է վնտուում, ով մանաւանդ բարոյական

օրէնքի վսեմութիւնը կենզանի զգումէ և իր ցանկութիւնները, ամքն ու ձգտողութիւնը իր մոլով սահմանափակում, այլ աւելի ընդարձակում է իր ընկերի և ապագայի համար ևս, նա անդադար տեսանելի աշխարհքի անձեռնահասութիւնը կ'զգայ և տեսդական հանդիսատ կը գտնէ գերբնական տահմաններում: Այս, երկրաւոր ոչինչ բանի վրայ հասատած վսահութիւն ունենալ չենք կարող: Ինչի վրայ որ մեր հաւատարմութիւնը հիմնում ենք, ինչի վրայ որ մեր ապագան կանգնեցնում ենք, ինչի հետ որ մենք մեր գործունէութիւնն ու մեր բարեկախսառութիւնը կապում ենք, այն բոլորը կարող են մեղանից յափշտակել: Ինչ որ այս օր մեզ նպաստում է, անակնկալ կերպով կարող է մեզ հետ թշնամութիւն սկսել: Մինչև անդամ մենք մեր անձի վիակատար իշխանը չենք: Հոգեկան հիւանդութիւնները կարող են ամենապայծառ հանճարը խաւարեցնել: Ախալները, անշնորհակալութիւնը, նենդութիւնը, չարութիւնը, թշնամութիւնը, հալածանքը, անարգանքը, երախտամոռութիւնը վերջապէս—կարող են նա և ամենակորովի կամքը տկարացնել և խափտել: Եւ որովհետեւ այս աշխարհքում ոչ մեկ տեղ հաստատած խարիսխ գտնել կարելի չէ: մարդս դառնում է վերին աշխարհքը և միայն Աստուածային նախարէնամութիւնից է ակընկալում այն, ինչ որ այս աշխարհքը տալ չի կարող: Ուրեմն գործնական շարժառիթներով ևս՝ բաւականութիւն չստացած բազանքով, անկախար մնացած կարուսով, չքաւորութեան ճնշմանք, վշտի հարուածով, երջանկութեան պահանջով և անդաման կախման զգացմունքով: մարդս կրօնքի առաջնորդվում է: Անշուշտ երկրաւոր բաների անձեռնահասութիւնն զգացմունքը թելաղրեց այս միխիթարական խօսքը: «Աստուածուն յայտնիր քո ճանապարհները, և Ձեր բոլոր հոգսերը նորան թողեցէք», «Աչքերս զէսի լեռները բարձրացուցի, որ աեղից ինձ օգնութիւնը պէտք է դարձ:

§ 15. Բայց ի հարկէ եթէ մարդկային թուլութիւնն ու օգնութեան կարօտութիւնը տանում է դէպի կրօնք, եթէ զկարիքը ազօթել է սովորեցնումը, եթէ վտանգի երկիւը, թշուառութեան վախը դէպի Աստուած է առաջնորդում, —այնու

ամենայնիւնոյն նեղութեան անմիջական զգացումն դեռ ևս կրօնք չպէտք է համարովի. այս զգացումներն ընդհակառակ միայն նորա շարժառիթներն են, իսկ ինքը կրօնքը սրտի յամբարձումն է վեր քան մարդկային տառապանքները: Նա այն ժամանակ միայն կայ, երբ որ մարդս խւր պղտոր տրամադրութիւնների վրայ քաջութեամբ իշխում է, չի ճշվում նոցա տակ, իր վշտին յաղթում է, նիւթական աշխարհին անձնատուր չի լինում: Սիրու սղմած և տրտնջող անձնաւորութիւնը, հոգեկան ցնցողութիւնն ու անհաստանութիւնը, հալումաշ լինելն ու ինքնատանջութիւնը, մեղբի մէջ թաթախուած աշխարհի մասին լացը և մարդկային կրօստեան մասին հառաջանքն ու վայնասունը, անյաջող բախուից կամ Աստուծոյ մարսափիլի բարկութիւնից դողան: — սոքա կրօնքինշաններ չեն, այլ մարդու տիարութեան նշաններ, որ դժուարացնում են ճշմարիտ կրօնքի լոյսը տեսնելու, ուր վիշտը մարդու վրայ տիրում, իշխում է և բոլորովին վայր էտապալում նորան, այն տեղ ճշմարիտ կրօնք չկայ: Կրօնքը տալիս է խաղաղութիւն, վատահութիւն, զօրութիւն, խնդութիւն, աղտատութիւն, համբերութիւն և ապաէէնք: Ինչ որ մարդու ոյժը, բանականութիւնը և գործունէութիւնը չի կարող կատարել, ճշմարիտ կրօնասէրը նախախնամութեան է յանձնում վատահութեամբ և առանց տրտունջի: Հաւատը «յաղթութիւն» է աշխարհի թշուառութեան վրայ: Ճշմարիտ կրօնքը միշտ այսպէս կազմուրող է եղել, ինչպէս որ այն մարդոց պատութիւնը մեղ ուսուցանում է, որոնք ամենայն մաքրութեամբ և լիակատար կերպով զարդացել են կրօնքով: Յիշնք օրինակի համար Արքահամբն, մի քանի սաղմոս երգողներին, յիշնք Յիսուսի հալածեալ առաքեալների և քրիստոնէական հաւատոյ մարտիրոսների ուրախութիւնը: Եւ զօրութիւն ներչնչող եկեղեցական երգերն ու շարականները այն մարդկերանց արդիւնքն են, որոնք կրօնքի զօրութեամբ ամենանյաջող հանգամանքներում անգամ չեն տկարացել: Եղիշէի պատմութիւնը կրօնքի յաղթանակի փառաւորնկարագիրն է: Ուրեմն կեանքի փոփոխութիւններից բարձր և անմասն մնալ, հարուածներից չվատել, մսիթարուիլ երկնքով, ուր որ երկրի թշուա-

ռութիւնը չի հասնում, վերանալ գէպի ասաուածութիւնը: որ աշխարհքի բոլոր ունայնութիւններից բարձր է և ամենակարող է, այս յամբարձումն է կրօնքի բուն նշանակը, որ գործնական արմատներից է զարգանում: Ովոր այդ աստիճանին հասել է, նա իր բոլոր մտքերը, ցանկութիւնները, յոյսերը և ձգտողութիւնները այլ ևս կոյլ վատահութեամբ սոսկ երկրաւոր բաների հետ չի կապի, բայց և իր երկրաւոր պարտականութիւնները ամենայն ճշմարտութեամբ կը հակը օգնութեան վրայ վստահանալով: Ճշմարիտ կրօնասէրը ինչպէս յաջողութիւնը նոյնակէս և անյաջողութիւնը անվրդով հանգստութիւնը է ընդունում: որովհետեւ յոյսը նորան չի վհատեցնում, իսկ բախտի փոփոխութեան հաւասարիքն ևս ունենալով, նա պաշտպանուած է, որ անխօնեմութեամբ անհոգ չը մնայ, այլ միշտ աշխատէ, և իւրոյժերի վատահութիւնն ունենայ:

§ 16. Որովհետեւ կրօնքի վերոյիշեալ գործնական շարժառ պիթները զանազան ծագում և գորութիւն ունին, ապա ուրեմն նոցանից ևս կրօնքը զանազան կերպ և տարբեր աստիճանով կը գարգանայ: Ով որ սոսկ բաղադաւորութիւն է զգում, ով որ գրէթէ կարօտութիւն չէ ունեցել, որի ձեռնարկութիւնները հաշմարեա միշտ յաջողուել են, ում որ առ հասարակ տեսանելի աշխարհքը բաւականութիւն է տալիս: — նա գործնական շարժառիթով հազիւ թէ կարողանայ աներեւայթ աշխարհքի գոյութիւնը ըմբռնել: Բայց այս գաղափարից բոլորսին զուրկ ոչ մէկ մարդ չի մնայ, և ով որ իր ներքին ձայնին ականջէ գնում, հենց ամենուրախ օրերին մտերիմ չորհակալութեամբ կը նայէ երկնային ջօրը, որ մարդուն անհաստատ աշխարհքի մէջ օրհնութիւն և լիութիւն է տալիս: Շատ անգամ այն մարդիկ, որոնք գործնական գրդիշներով չեն հասնում մինչի կրօնքը, աւելի զօրեղ կերպով բռնվում են վերև նկարագրած էսթէտիքական հարապարութիւններով ինչպէս այս անսանք արևելեան ազգերի զարգացման մէջ: Երբ որ գեռ մարդու պէտքերը չատ իսկ սակաւագետութիւնն էլ պտղաբեր և նուազաբնակ աշխարհքներում հեշտութեամբ լրութիւն էր ստանում: — այն ժամանակ ոչ թէ կարօտութեան զգացմունքը, այլ էսթէտիքական

աշխարհա հայեացքը շարժառիթ պիտի լինէր կրօնքի զարդացման համար։ Սակայն աժմ այս փոխուել է, ծաղկող բադաքակրտութիւնը մարդուս կարօտութիւնները թէպէտ և բաւականացնում է, բայց և անդադար նոր նոր պէտքեր է ծնանում։ Կեանքի դժուարութիւնները այժմ աւելի սաստկութեամբ, աւելի ընդարձակութեամբ զգացվում է, քան հին ժամանակ։ Ուստի և ներկայումս մարդկանց մեծ բազմութիւնը դիմաւորապէս գործնական հետաքրքրութիւններով և հագուստով դէպի աստուածածանօթութիւն է առաջնորդվում։ Թշուառութիւնը այն սիւնն է, ինչպէս բանաստեղծն ասում է, որ երկրի վրայ է կանգնած և մինչի երկինքն է համոււմ։ Թշուառութիւնն է ծնանում տեսակ տեսակ կրօնական զգացմունքներ, կանչում է մարդուն փոշու միջից և սովորեցնում է նորան երկնքին դիմել։ Դժբախտութեան մէջ շատ անդամ մնջաւորը Աստուծոյ պատուահասող ձեռքն է տեսնում, մոլորեալը մի կողմնացոյց, երկրաւորի պաշտողը իր կուռքերի ոչնչութիւնը։ Կարգից դուրս տարաբախտութիւնները ամբողջ աղքերի կրօնական հաւատը կաղդուրում և հաստատում են։ Այս կողմից նայելով՝ ուրեմն տառապանքները աստուածային ողորմութիւն են, ինչպէս և Ա. գիրքն ասում է։ «Տիրոջ դաստիարակութիւնը նոււազ մի համարիր, որովհետեւ ում որ Տէրը սիրում է, նորան խրատում է»։ Ինչպէս որ բախարի և անբախտութեան մասով, այնպէս էլ զանուղան հասակներում կրօնական զարդացման զործնական շարժառիթները զանազան չափով են աղջումն Մանուկը ապրում է անհոգ նիւթական աշխարհում, պատանին համարձակ գաղափարներում, արիահասակը քրտնաջան աշխատութեան մէջ, ալենը մի ուրիշ աշխարհում։ Տարիքների հետ աւելանում են երկնքի ցոյցերը, որ ամենից շատ են ծէրութեան հասակին, ուր մարդու հետզետէ երկրաւոր իրերից և աշխարհքից, բայց առաւելապէս մարդկերանցից շատ հեռացել է։ Այժմ հասկանալի է, թէ ինչու երբեմն իշխաններն ու ուրիշ անձինք բազմավերով կեանք վարելոց յետոյ, ցանկացել են վերջին օրերը ճգնել վանքի մէջ։ Բայց ոչ միայն ամենայն հասակ, այլ արդէն ամենայն որ ցոյց է տալիս

կրօնական զգացմունքի շարժումն ու աճելը։ Առաւետկան մեր զօրութեանց լիութեան զգացմունք ունինք, աշխատութեան ժամանակն արդէն յիշեցնում է մեզ շատ անգամ այս խօսքերը և ամենայն ինչ Աստուծոյ օրնութեամբ է։ Երեկոյին մեր ոյժերի սպառուիլը և թուլութիւնը բարձր աստիճանով մզում ենք, և սաստիկ կարօտում ենք վերին օգնութեան, ասգում ենք և սաստիկ կարօտում ենք վերին օգնութեան, ասուածածանութեան։

§ 17. Տեսակ տեսակ կարօտութիւններն և ցանկութիւնները կարող են առաջացնել իրանց համեմատ կրօնքի զարդացում։ ամենայն մարդու մէջ կարող է այն կրօնքը գոյանալ, գիմչ բանի համար որ նորա սիրտը բարախումն է։ Ահա հասկանականների է, թէ որ տեղից է ծագում կրօնքի այնքան զանազան կանելի է, թէ առ անդուի տարբեր տարբերն ու ձեւերը, այն կրօնքի, որ անհերքելի կերպով առանձին մարդկանց և ազգերի մէջ գոյացել է։ Այն կապերը, որ մարդուն Աստուծոյ, հետ կապում են, տալիս է Այն կապերը, կան նիւթական և հոգեոր, բաշտ զանազան են։ Կրօնքեր կան նիւթական և հոգեոր, բարոյական և անբարոյական, թէպէտ և ամենայն մաքրութեամբ շատ քիչ է պատահում այս կամ այն ձեւը, և միմեանց մէջ շատ քիչ է պատահում այս կամ այն ձեւը, և միմեանց մէջ խառնուելով զանազան աստիճանաւորութիւններ են ցոյց տալիս։

Կրօնքի ամենից աղդու, թէպէտ և ստէպ շատ պղոսոր, աղբիւրն է նիւթական բարօրութեան համար ինսամքը։ Ոչ միայն զուարիթ մանուկին, այլ և քիչ զարդացած ամբողջ ազգերին և մինչև անդամ քաղաքակիրթ ազգի մեծ ամբոխին այդ ինսամքը ամենաբարձր բարութիւն է երեսում, ուստի և իրանց կեանքը ամենաբարձր մարդու ինքը անձեռնքի նպատակն այդ է։ Բայց որովհետեւ մարդու ինքը անձեռնք հաս է իր բարօրութիւնը հաստատելու, ուստի իր ինսամքը Աստուծուն է թողնում, որից նա ակնկալում է «ամենօրուայ հացը», ամենայն ինչ, որ մարմնի սննդեան և կարօտութեան համար հարկաւոր է, յաջողակ եղանակ, առատ հունձ, ամեսան յայողութիւն, պաշտապանութիւն հարուածից, օգնութիւն այն վրկութիւն վանդից, առողջութիւն և երկար կեանք։ Այս տեսակէտից մարդու Աստուծոյ Էութիւնը ճանաչում է, որպէս ամենակարող, ամենաբարի և անսահման առատութեան աղ-

բիւր։ Այս նկարագրած կրօնը երբեմն մեծ եռանդով է երեւում և շատ անգամ ունախապաշտութիւն է դառնում այն մարդկանց մէջ, որոնք զիշէ միայն նիւթական իրերի համար շունչ սանին, ուղա ետեից ջերմեռանդով ընկնում են, իսկ աւելի հաստատ վատահութիւն համար Աստուծոյ օգնութեան տակ են պատսպարվում, Ուստի և շատ անգամ ամենակեղանքացել, ամենաշերլ, որոնց սիրաը բնաւ աղիւ զգացմունք չէ զգացել, ամենաշերլ աղօթող ու ժամաներներ են։

Համառօտութեամբ միայն յիշում ենք, թէ աւելի վասկերպով ապականվում է կրօնական զգացմունքը, եթէ նորա մէջ մարմնական զրդումն է դեր խաղում։ Լուսթեամբ ենք անցկենում ոչ միայն անունն յանկական անբարոյականութիւնները, որ մի քանի աղանդներում այդ ժամանակ կատարվում են, այլ և Ալսուծոյ փառքի համար մարմնի սպանութիւնը, որ նոյնպէս մի ուրիշ ծայրահեղութիւն է, Զզուելով յիշում ենք նաև և մեր ժամանակուայ մարդու ապականութիւնը, որ այնքան յանդգնութիւն ունի ամենամաքուր, ամենավաեմ, ամենապատկառելի բանը փոշու մէջ ձգել կամ նաև աստուածային քրիստոնէութիւնը չարութեամբ որպէս քող զործածել գանձ վաստակելու և վայրենի մարմնական հաճոյքները լցուցանելու համար։

§ 18. Բայց դառնանք կրօնքի աւելի մաքուր գործնական շարժառիթներին և արմատներին։ — Լոյս է ուզում մարդկային աղիւ հանձարը, Սակայն չուտով տեսնում և զգում է իր զիտութեան ներ սահմանները, Ուր որ դարձնէ իր աչքը, ամենայն տեղ գաղտնիք և խորհուրդ է դանում, որ միայն մի Աստուծոյ հաւատով է լուծվում։ Մարդկային կեանքի դիտողութիւնը շատ անգամ ցոյց է տալիս մի լաբիրինթոսի անմատչելի նախադուռ, որ տեղից միայն վէրին կակի զգացմունքն է մեզ ճանապարհ ցոյց տալիս, մի կակի, որ ըստ երեսութիւ ամենախճանած եղելութիւնները իմաստութեամբ ձեացնում և կարգաւում է, բայց անշուշտ հայրական սիրով, թէ և շատ անգամ անքննելի կերպով, մարդկութեան վրայ իշխում է, և մի որպէս արդար ու ամենապէտ դատարոր ամենայն բան կը

լուսաւորէ և կը հատուցանէ, ինչ որ այժմ մովթ և անտաղար է երեւում։ Այսպէս միաստուածութեան հաւատը մթութեաւ և աններդաշնակութեան փոխարէն, որ մեր օիրար ձնչում ու յուսահատեցնում է, լոյս և ներդաշնակութիւն է կնում, որ մեղ բաւականութիւն և ուրախութիւն է պատճառուում։ Կրօնական զարգացման ամենազնիւ գործնական շարժառիթներն են բարոյական շարժառիթները, Եւ քանի որ մէկը շատ է աշխատել մարդկային բարձր շահերի համար, այնքան աւելի մաքուր կը լինին մտքերը, զգացմունքները և ցանկութիւնները, որ նորան Աստուծոյ հետ են կապում։ Ով որ բարձրական աղատութեան վեճութիւնը, զիտութեան, արդարութեան և հատուցման բարքի գեղեցկութիւնը խոր զգում է, նա ձրդուում է ամենայն զօրութեամբ մարդկութեան այս աղնուազոյն բարիքը ձեռք բերել, Բայց և ամենազնիւ մարդը մոլորուել և տկարանալ կարող է, իր թուլութիւնն ու ամենայն տեսակ գառն փորձերը շատ անգամ վհատեցնում են և արգելում են նորան, որ նպատակին համնէ, Ամենամաքուր առաքինութիւնը հարտատ չէ աշխարհքիս մէջ, ամենազնիւ կամքը վտանգի մէջ է, յազնութիւն, սառչութիւն, դառնութիւն կարող է նորա տեղը բանել։ Մարդ կարօտ է մի նաւահանգստի, պաշտպանութեան, ապահովութեան, որ չթուլանայ։ Ահա տեսանելի աշխարհքից դուրս է կնում Աստուծոյ հաւատով, որ որպէս աղբիւր բարոյական գաղափարների, բարձրագոյն սրբութեան, սիրոյ և արդարութեան՝ նախամեծար օրինակ է մարդու կամեցողութեան և գործողութիւնն համար, Եւ քանի որ բարեպաշտը Աստուծոյ գաղափարով լցում է, այնքան զգում է առաքինութեան մեծութիւնը, բորբոքվում է ամենայն աղնիւ գործի համար, զօրանում է համբերութեամբ և տոկունութեամբ պատերազմելու ներքին և արտաքին փորձութեանց հետ, Խոհարհութեամբ ճանաչում է իր սիսակները և Ամենասուըբի առաջ, բայց և խաղաղութիւն ու միխիթարութիւն է գտնում Աստուծոյ ողորմածութեան հաւատով։ Թէ բոլոր աշխարհը նորան չէ, ուզում ճանաչել, նաև ուրախութեամբ դառնում է Ամենատեսին և Ամենագէտին, որ ամենու արարքը տեսնում է, թէ Կ

ինքը անտեսանելի է, անվրդով խաղաղութեամբ տանում է անդիմադիւնի հարուածները:

Այլ և աւելի զօրեղ կերպով մարդը դէպի Աստուած է առաջնորդվում, երբ որ նորա բարոյական զգացմունքներն ու ձգուղութիւնները իր ընկերների վրայ էլ տարածում է: Ամենապիտասեր մարդը այնքան հանճար և զօրութիւն չունի, որ բոլորի թշուառութիւնն ու բարոյական անկումը փարատէ կամ պակասեցնէ: Մենք գարցում ենք, երբ տեսնում ենք թէ անմեղութիւնը մի զօրեղ բաղկով բռնարարվում է, բայց օդնել չենք կարող և պէտք է հանգատանանք հաւատով, թէ մի օր արդար հատուցում կը լինի: Մենք ցաւում ենք, որ կուրութիւնն ու ապականութիւնը, նեղութիւնն ու թշուառութիւնը ամենայն տեղ տարածուած է, և թէ մարդուս խելքն ու իշխանութիւնը բաւական՝ չեն այս չարիքի դէմ առնելու. մեր միխթարութիւնը միայն այն հաւատն է, թէ անսահման իմաստութիւնն ու բարութիւնը այս բալորին անշուշտ բարի վախճան կու տայ, ուր մենք անձեռնաս ենք և ոչինչ խորհուրդ չենք դանում: Ուրեմն ամենազնիւ և ամենընափր մարդն անգամ ազատ չէ վշտերից, և նա աւելի այնպիսի ցաւ է զգում, որ նիւթական մարդը բնաւ չէ ճանաչում, և այդ ցաւի դէմ այս այլարձը գեղ ու գարման չունի: Եւ դարձեալ միայն հաւատով այս ամենայն հանդամանքներում հանգատութիւն կը գըտնենք: Ուստի կրօնքը մի աւետարան է խաղաղութեան, յուսոյ և զօրութեան. նա մեզ երկիւղից դէպի բերկրութիւն է տանում:

Այս տեղ մանաւանդ պարզ է մեզ համար, թէ այն Աստուածը, որին գործնական շարժառիթներով ճանաչեցնք, մի իսկական և անձնական էակ է, կատարեալ կամնցողութիւնների տէր էակ է, որի ներքին էութիւնը թէպէտ և չենք ըմբռնում, բայց նորա հետ նկրքին կապով միանալ կարող ենք: Բայց այս միաքը միայն այն ժամանակ կարող է մեզ ճշմարիտ զգաստութիւն և երանութիւն տալ, երբ որ նախ մենք ինքներս Աստուծոյ ողորմածութեան, արժանի ենք հանդիսանում, ինչպէս այս սիրուն և ազդու կերպով ասում է Ա, Գիրքը

(1. Յով. գ. 21). «Սիրելիք, եթէ մեր սիրտը մեզ չի դատապարտում, համարձակութիւն ունինք Աստուծոյ առաջ. Այս համարձակութիւնը Աստուծոյ առաջ արտայայտում է մանաւանդ ազօթքի: մէջ երբ մենք մեղանից կախուածը արդէն կատարեած էնքնի ենք, իսկ մնացածը Նորա իմաստութիւնից ենք ելքնեղում, Արդէն էսթէտիքական շարժառիթներով, ինչպէս մենք փոքր ինչ վերե համոզուեցանք գոյանում է աստուածպաշտութիւնը. իսկ զիմել Նորան կարօտութեան ժամանակ, մաղթել և աղօթել.—այս ձգուղութիւնը ծագում է նաև և առաջ գործնական շարժառիթից Մարդս Աստուծոց խնդրում է ամենայն բան, ինչ որ իրան թանկ է, և որ միայն վերեից կարող է ստանալ. այսպէս է սքանչելի ռուբունական ազօթքը: Սական աղնիւ սիրար ոչ միայն խնդրում է, այլ և գորանում և չնորհակալութիւն է յայտնում: Եւ հազարաւոր առիթներ ունինք երկնային ջօրը չնորհակարա լինելու, որ ամենայն թշուառութիւններից և չարութիւններից փրկում է մեզ, Այսպէս կրօնասկը Աստուծոյ հետ անգագար հազօրդակցում է: Եւ այսպէս Անեղի հետ կապուելով մեր կեանքն ու աշխարհը մնը առաջ այլ կերպարանք և նշանակութիւն են ստանում: Ամենաշնչին բանը՝ չէ չնչին չէ, եթէ դէպի Աստուած է առաջնորդում: իսկ ամենամեծ բանը՝ ոչինչ է եթէ անցողական էլոյսը խաւարի թնամի է, ուրախութիւնը մեղմացնում է ցաւ, յոյսը չի խայտառակում. իսկ աղօթքը այս բաներ է մեզ ազդում: Այս միտքը նշանաւոր մասն է ամենայն կրօնքի: Ներկայի ճնշողութեան տակ մարդս դարձնում է իր աչքը ապագային: Արդէն այս այսպէս է, եթէ միայն ներկայ նիւթական աշխարհը աչքի առաջ ունինք. ամենայն մարդկանի օրերին է սպասում. հին ուստի մարզարէները իրանց ազնիւ ցանկութիւնները ամբողջ ազգի մէջ տարածում էին և խաղաղութեան ու փառաւորութեան արքայութեան յոյսը միշտ վառ էր նոյյա մաքի մէջ.—իսկ երբ որ մեր աչքը այս աշխարհից դուրս ենք դարձնում, այն ժամանակ մեր յոյսը—յաւիտնական կեանքն է:

§ 19. Արդէն մինչև այստեղ մեր խօսքերից պէտք է երեար, թէ կրօնական զարգացման գործնական շարժառիթ-

նորը, որովհետև մի արդար չատուցանողի հաւատք են ազդում, նաև մի յաւիտենական կեանք են խոստանում, Ամենայն բարոյապէս զարդացած մարդու մէջ անմիջապէս յարդանք է ծնանում հատուցման զարդափարի համար: Բարոյական զացմունքը պահանջում է, որ չարագործը զղայ և առաքինին ճանաչուի ու ասպարեզ ստանայ դործելու համար: Սակայն ներկայ կեանքը հազարաւոր անարդարութիւնների հանդէս է, ուստի և մեր սիրտը ասպագային է դիմում: Արանով է բացատրվում, որ ամենահին ժամանակներից մարդիկ հաւատում էին գերեզմաններից դուրս հատուցանող Նեմիդիսին: Եւ արդարեարդէն այն սրտաճմիկ զգացմունքները, որ այս ծշմարտութիւնից գոյանում են, թէ ամենք այս տեղ չունինք հաստատուն բնակարան» ուսուցանումն մեղ մի ասպագայ վնտուել: Թէ ինչ զգացմունքներ են նորա, այս լուսաբանելու համար մի օրինակ բաւական լինի: — Անակնկալ կերպով երկու աչքեր փակիւմ են, որ մեղ թանկ էին: Յանկարծակի մի վարդուրի ետե անյայտանում է մեր սիրեցեալ անձը, որ մի բուլէ առաջ այնպէս ուրախ այնպէս գողարիկ, այնպէս չքնաղ ասպրում էր մայր առաջ: Մեր կեանքի բախտոն այն ոէրն ու գութն էր, որ այժմ կտրուել է, մեր ամենաջիրմ յարդանքի և պաշտութեան առարկան հեռացրած է մեղանից անդարձ. մի կեանք, որի հետ ամենափառաւոր յոյսեր էին կալուած, անյոյս թառամեցաւ, Այսպէս է և մեր ամենուս վիճակը: Ի՞նչ օգուտ, եթէ մենք ոչինչ ջանք չխնայելով՝ մի որ և է բարձր նպատակին ծառայեցինք, և ոչինչ զո՞ւ չխնայեցինք այն նպատակին համսելու համար: — Մահը մեղ փախցնում է գեռ մեր աշխատանքը զրացած. մեր կանգնած շինութիւնը դարձեալ կործանվում է Եւ եթէ այսպէս յուսահատածը ապագային չդառնայ, պէտք է աւելացնէր, ապախոս զուր աշխատանք», և կանգնեցնէր բարի ծգտողութիւնները, որով միայն յառաջազիմութիւններ է անում մարդկութիւնը քաղաքակրթութեան մէջ, Մարդկութիւնը չը պէտք է յառաջանար առանց կրօնական յուսոյ:

§ 20. Ամենայն տեսակ ցանկութիւններն ու կարօտու-

թիւնները հարկաւ գոյացնում են հաւատք, թէ հոգին մահից յետոյ տեղութիւն ունի: — Մարդս ցանկանում է ապրել: Սարսափելի է մտածել այն բոպէի մասին, երբ մեր գիտակցութեան բոլոր զգացմունքները, ցանկութիւնները, մտքերը յափառեանս պէտք է ոչնչանան, և որից յետոյ էլ երբէք կենդանեաց մէջ չպէտք է գանուինք մենք: Դա և այն մարդը, որ շատ չարչարանքներից տանջուած՝ մահ է ցանկանում, նա էլ անդարձ չի հրամարվում կեանքի քաղցրութիւնից, նորա մէջ դռւ էլի յոյսը վառուած է, թէ գուցէ մի աւելի լաւ կեանք կը տեսնէ: Թէ ինչ է ակնկալում նա այն տեղից, ի հարկէ կախուած է նորա կրթութեան աստիճանից: Մարմասէր մարդիկն ու ազգերը նմանապէս մի մարմասկան երկինք ունին: Ինչ որ նորա սիրում և ցանկանում են՝ հանգստութիւն, յարմարութիւն, ախորժութիւն այն ևս յօյս ունին այնտեղ գտնել. այսպէս են ամբողջ ազգեր անցեալ և ներկայ ժամանակի, այսպէս և այժմ բազմաթիւ անհատներ ստոր զարդացման աստիճանին: Աւելի բարձր զարդացմար ցանկանում է պահպանել այն, ինչ որ շատ տարիների միջոցով. գուցէ և շատ չարչարանքով, իր հոգեկան գործունէութեամբ վաստանել է. նա ցանկանում է, որ իր գաղափարները ընդարձակուին և ճշուին, այս կամ այն խորհուրդները լուծուին, մարդու գիտութեան փոքրիչատութիւնը (1. կոր. ժգ. 12.) լուսայ: Բայց հարկաւոր չէ բոլոր այս աստիճանաւորութիւնները մի առ մի հաջուել:

Բաւական է այսքան խմանալ թէ զօրաւոր գործնական շարժաւիթներով մարդս ցանկանում և հաւատում է հոգոյ շարունակութիւն մահից յետոյ, հանգերձեալ կեանք: Այս հաւատքը հանգամանքներին նայելով՝ զանազան կերպ է ազգում մարդկանց վրայ: Հանդերձեալ կեանքը զգուշացնում է մարդուն հոգեկան և բարոյական ծովութիւնից, կանգնեցնում է նենգաւորին, երկիւղ է ազգում մեռանող չարագործի վրայ, մսիթարում է վշտացեալին, լուսաւորում է կեանքի մութւարիւնիթուր, ուրախութիւն և յօժարութիւն է տալիս աղմիւ գործեր գործելու համար, ոյժ է տալիս որ չդողմանք մահուան օրհասին հանդիպելու ժամանակ:

ԿՐՈՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԿՐՈՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՃԱՐՈՆԵՐԸ

§ 21. Կոթէտիքական և գործնական շարժառիթները
մարդուն հանում են երեկի աշխարհից՝ և սահնում են աներե-
ոյթ աշխարհը. Նոյնն անում են և տեսական պատճառն երբ։
Եթէ մինչև հրմա մարդու կրօնական դարդացումը ճանաչեցինք
նորա զգացմանքներ..վ, տրամադրութիւններով ու տպաւորու-
թիւններով, կարուութիւններով, ցանկվթիւններով և ձգտո-
ղութիւններով, -- այժմ պէտք է ապացուցանենք, թէ մեր զի-
տակցութեան մէջ կազմուած ծանօթութիւնները, մտքերը,
գաղափարները նոյնպէս ծնանեւմ են հաւատ առ Աստուած և
առ անմահութիւն։ Մենք խօսում ենք այժմ կրօնքի այն
պատճառների մասին, որ մեր հոգւոյ սոսկ պատկ երաց ու մ-
ն երից են յառաջանում և ուր մի և նոյն ժամանակ մեր
հոգին խակապէս ազատ է որ և զգացումի կամ բաղձանքի
ազգեցութիւններից։ Այսպիսի մտաւոր պատկերացումների
գումարը կազմում են մեր վերը յիշած տեսական մասը։ Տե-
սական մասն է այն, ինչ որ ընդարձակ մտքով զիտաւթիւն է
կոչվում, մեր ամբողջ մտաւոր շրջանը որ ծագում է մեր ներ-
քին և արտաքին զնուութիւններից և բազկացած է հազար ու մի կ
պատկերացումներից լիների գոյութեան, էութեան, յատկու-
թեանց, ձեերի, մասերի, տարածական, ժամանակական և
պատճառական հանգամանքների մասին։ Հոգւոյ տեսական
գործողութեան նպատակն այն է, որ մեր մտաւոր շրջանին կա-
տարելութեան դրոշմ տայ, այսինքն մեր դատողութիւնների և
գաղափարների պակասորդը, թերութիւնը, միութիւնը և հա-
կասութիւնը փարատէ և նոյնական մի ներդաշնակ ամբողջու-
թիւն ձևացնէ։

Բայց որ չափով և որ պայմաններով այս հնարաւոր է:
Մարդկանց մեծ բազմութիւնը շտապով և շուտով կազմում է

իր մտքերը, Հասարակ մարդը աշխարհքի հանգամանքներով միայն այնքան է զբաղուած, որքան նա նորա շահերին է զիալում: Ինչ որ իր պարապմունքի և կեանքի հետ մերձաւոր կապակցութիւն չունի, նորան նա չի շօշափում: Ոչ ժամանակ ոչ ներքին տրամադրութիւն չունի, որ իր հայեացքը աւելի հեռու անցեալի և ապազայի կամ աւելի հեռաւոր տարածութիւնների մէջ դարձնէ, քան իր գործնական կեանքն այդ տահանջում է: պատճառների և ներգործութիւնների, հմգերի և հետեանքների, նպատակների և միջոցների խնդիրները նորա ուղեղը զբաղեցնում են միայն այն նեղ սահմաններով, ինչ սահմանում որ նա գործում, աշխատում, վաստակում է, իսկ այն մեծ տիեզերքը, այն բնդարձակ մարդկութիւնը կարծես չկան նորա համար, այդ մասին հոգս չունի: Նա հասկանում է, ինչ որ իրողութեամբ է ամենայն բան է նորա աչքում, որովհետեւ է: աշխարհքը պատում է, որովհետեւ պատում է: Այս փիլիսոփայութիւնը այնպէս սովորական է նորա համար, որ հասկանելի է թէ ինչու շատ մարդիկ բնաւ տեսական ձգտում չունին, որով կարողանան համարձակ դուրս զալ մօտիկ նիւթական աշխարհց և իմանալ հոգեոր աշխարհի գոյութիւնը: Նորա կարօտութիւն չունին երեւլի աշխարհը աներեսոյթով լրացներ, իսկ ցաւու այն է, որ ով որ չէ մտածում, նորա համար շատ անդամեւ այն հաւանական է, ինչ որ մտածողի համար անհաւանական է: Բայց միայն մտածողը իր մտաւոր շրջանի ճիշտքնութեամբ գտնում է, թէ իր աշխարհատեսութիւնը թերի է և այնպիսի լրացման կարօտ է, որ միայն աներեսոյթ աշխարհց ստանալ կարող ենք: Պօղոս առաքեալն արդէն ստում է, և Մեր գիտութիւնը փոքր իշատէ է: Իսկ մեր գիտութեան թերութեան զգացումը մի և նոյն է, թէ մեր հոգին մի քանի այնպիսի խնդիրներ ճանաչեց, որ մենք չենք կարողանում լուծել, մի քանի այնպիսի հարցմանքներ, որոնց պատասխանը չենք կարողանում տալ, մինչև որ մենք ամենայն բան մեր նիւթական աշխարհով բացատրել ենք ուզում: Ահա այսպէս մեր հոգեկան գործողութիւնը տրամարանական, մտածողական, տեսական է դառնում է որոշ խնդիրներ լուծել, մեր ամբողջ աշ-

Խարհահայեցողութիւնը լրացնել, բուսաւորել և հաստատուն կացուցանել, Եւ հոգւոյ այս գործողութեան վերջին արդիւնք քը սրտի այն հաւատալիքն է, հաւատոյ այն համոզմունք է, որ մեր գիտութեան փոքրի ի շատէն լրացնում է,

§ 22. Մեր մանկութեան օրերից զարգանում է մեր մէջ պատճառականութեան դաղափարը, Բիւրաւոր հանգամանքներում իմանում ենք մէնք ներգործութեան և պատճառի, հետեամքի և հիմքի, նպատակի և միջոցի կապը. Ուստի և ամենայն իրողութիւն հարցմունք է առաջացնում թէ ուստի, ինչ պատճառով, ինչից է յառաջացնել, Եւ ամենայն տեղ մենք զըտնում ենք, որ մեզ ծանօթ բոլոր գոյութիւններն ու իրողութիւնները պայմանաւորած բաներ են, որ պայմանաւորող պատճառ ունին: Այս վերջին մասը գտնելու համար հասարակ մարդը շատ չի ցաւցնում իր զլովսը. առաջին կարծած պատճառը նորան բաւականացնում է, ուստի և նա աշխարհքի վերջին պատճառները չի խուզարկում. նորա մի մասնաւոր մասը ճանաչելուց յետոյ՝ հանգստացնում և խաղաղացնում է. իր մտախուզութիւնը:—Այլ է հեռու մտածողը. Նա ոչ միայն պատճառեալի պատճառ է խնդրում. այլ և պատճառի պատճառը և պատճառի սկզբնապատճառը, և այն: Իսկ այս դէպքում ինչպէս որ չափանիք մեր մտածողութիւնը՝ մեր աշխարհքի հանգամանքների սկզբնապատճառը գտնելու համար, մեր միտքէտք է անդադար մոլորուած մէկ պատճառից միւսին դառնայ: Մեր կարծած իրաքանչիւր վերջին պատճառը դարձեալ հետախուզելի նոր խնդիր է դառնում: Բնութեան և մարդկային բոլոր աշխարհքը անդադար փոփխութիւն է ցոյց տալիս մեզ, անցեալը ներկային տեղ տուեց, ներկայն ապագային տեղ բաց կանէ, մէկը գոյանում է միւսից. Որքան էլ որ անցեալները թափանցենք և տիեզերքը հետախուզենք, այս մեր աշխարհքում մի սկզբնապատճառ, անպայման գոյացութիւն չենք գտնում: Մէկ մէկուց բղսող պատճառների երկար օղակցութիւն առանց սկզբի—այս է մեր գտած արդիւնքը:

Բայց միթէ առանց պատճառի մի պատճառեալ կարող է լինել. անշուշտ այս մի հակասութիւն կը լինէր, որովհետեւ

եթէ մի բան կայ՝ նախ նորա պատճառը պէտք է մնի, Այսպէս ուրիմն, երբ որ մենք մեր աշխարհքի պատճառների սահմանին ենք համուռմ, մեր մէջ հաւատ է ծնանուռմ, թէ ամենայն գոյութեանց սկզբնապատճառ կայ, ամենան եղելութեանց Անեղ պատճառ կայ, երեսոյթ աշխարհքի աներեսոյթ պատճառ կայ, և այդ հաւատով մեր աշխարհայեցողութիւնը բաւական լինածնում է: Ա. Գրքի հետեւեալ խօսքի իմաստն այդ է (Երր. դ, 4). «Ոմենայն տոնն մէկից կազմվում է, իսկ ամենայն բանի արարիչը—Աստուած է»:

Ի հարկէ բացարձակ պէտք է խոստովանենք, թէ վերույշեալ մտքի ճիշդ իմաստով մենք գարձեալ չենք կարողանում Աստուծոյ գոյութիւնը հասկանալ: Բայց սրովինեան մենք չենք կարողանում աղատուել մեզ յուզող մտքից, թէ ամբողջ երեսի աշխարհքը մի սկզբունք և սկզբնապատճառ է ունեցել, որ մեր կամ ամառակ մարդու մտածողութեան հանգամանքներով այն ըմբռնել անհարին է: Թէ նոյն մտածողութեան հանգամանքները շատ նեղ են Աներեսոյթը իմանալու համար, Աստուածն էր արդէն առաջ քան մարդիկ կային, ուրիմն և առաջ քան մարդու հոգւույթը օրէնքնէրը կամ հոգւոյ տեսական գործողութեան օրէնքնէրը կային: Սոքա էլ կարգուած և հաստատուած են ամենայն արարածների Արարչով, Պատակ այն օրէնքներով մեր մտածողութիւնը այնպէս սահմանափակած է, որ նախաշխարհքի և գերբնականի գոյութիւնը չենք կարող հասկանալ թէպէտ և ամենայն ստուգութեամբ հաւատալու արամադրութիւն ունինք:

§ 23. Մենք պէտք է հաւատանք, թէ կայ մի սկզբնապս տճառ ամենայն բանի. այս ոչ ոք չէ ուրանում և առ հասարակ ընդունվում է. բայց այս սկզբնապատճառի գերբնական լինելու մասին ամենու մէջ մի և նոյն համոզմունք չէ կազմուած, Վերև ասածի հակառակ շատ անգամ լսվում է, թէ աշխարհքը ինքն իրմով շատ կը բացատրուի՝ առանց դերբնականի են թաղրութեան. ուրիմն մարդս հաւատի կարօտութիւն չունի, միայն գիտութիւնը նորան բաւական է: Այսպէս են վար-

դապետում զանաղան տեսակ համաստուածութեան (պանթէ-իզմի) փիլսոփիայութեան հետեղները, Ուստի հարկաւոր է աւելի խոր քննել և ապացուցանել այն ասածը, թէ մեր տեսանելի աշխարհի մէջ ոչ մի նիւթական և ոչ մի հոգեկան պատճառ չենք գտնում, որով որ կարողանայինք աշխարհի գոյութիւնը հասկանալ, և ուրեմն նոյն հաւատը դարձեալ պէտք է պահպանենք, Այս նպատակով մենք պէտք է նախ մեր աշխարհի բուն իրողութիւնը և առանձին յատկութիւնները մօտիկ աշբով քննենք, որպէս զի եթէ այդ հաւատը պէտք է խսիստուի, խսկական իրողութեամբ խախտուի:

Եթէ տիեզերքի սահմանն այն տեղ է, ուր որ վերջանում է տարածութիւնը, ապա ուրեմն ճիշճն ասելով նա պէտք է անսահման ծաւալ ունենայ: Որովհետեւ տարածութիւնը, որպէս ամբողջութէւն առնելով, չլ կարող ունենալ սահման, վերջ ծայր-տիեզերքի տարածութիւն և վերջին ծայր—սորա հակասող իմաստներ են: Ամենահամարձակ երեսակայութիւնն անդամ չի կարող թափանցել այն տեղ, «ուր ոչ մէկ չունչ էլ չէ փշում և արարչութեան սահմանի դադարն է հաստատուած»: Արդ ինչ ենք դանում այս անսահման տիեզերքում: —Արդէն մարդկային առաջին նեղ հայեացքին երեսում են անթիւ աստղեր, հազար տեսակ արարածների բլւրաւոր խմբեր: Թէպէտ բոլորներանք Տէ ամբողջութիւն են կազմում, բայց մենք տեսնում ենք, որ ամբողջ տիեզերքում բազմաթիւ առանձին աշխարհներ և անհատներ են գտնվում: որոնք միմեանց մասին ոչինչ տեղեկութիւն չունին և մեծաւ մասամբ ոչինչ զգալի յարաբերութիւն չունին: Արդ որն է այն իշխողը, այն սկիզբը այս տիեզերքի մէջ, որից ամենայն ինչ բղխել է, որ ամենայն արարածներին տիրապետում, կառավարում, միաւորում է մի ամբողջութեամբ: Արդեօք մեր մտքին հասանելի աշխարհի: մէջ գտնում ենք մի այնպիսի բան, որ իր բռնած տեղից իր զօրութիւնը անսահմանութեան մէջ տարածէ և մի և նոյն ժամանակ այնպիսի բնորոշիւն ունենայ, որ մենք կարողանայինք ամենայն ինչ նորանից բղխեցնել և բացատրել: Ո՞ր գոյութեանը տանք այս բարձրագոյն վեհութիւնը: Միթէ այն երկիրը, որ մեր ոտքը

տակն է, այն քարի կտորը, որ մենք փշուտում ենք, մարդու հոգւոյ ստեղծողն է: —Արդեօք ջուրը կրակից, թէ կրակը ջրից ծագեց: Կամ դոքա երկուքը կարմղ են մի բոյս, մի կենդանի գոյացնել: Արդեօք օդից ծնաւ ժայռը, խաւարից լոյսը, փայլակից սերմնահատը: Արեգակը, թէ մի ուրիշ լուսատուն կարակից սիեղերքը անթիւ արարածներով զարդարել: Մարդը ստեղծեծ արեգակին և Հայկ աստեղատունին: Ո՞վ է ուրեմն մեր ստեղծողը, ստեղծող բոյսը արարչութեան: —Խնչպէս որ այս արարչութիւնը այցմ է, մենք չենք կարող երևակայել ինքըն իրանից գոյացած: Որովհետո՞ւ ինչպէս էլ մտածենք, էլի պէտք է ուրեմն ամբողջը իր մասից գոյացնել տանք, որ մեր միտքը չէ ըմբռնում: Ուստի և քանի որ հեթանոս ազգերը էսթէտիքական հայեցողութեամբ որ և իցէ բնական իրի մէջ էսթէտիքական հայեցողութեամբ էսթէտիքական իրի դոյցութիւնը գտնուեցաւ, կարծում էին, թէ բարձրագոյն էակի դոյցութիւնը գտնուեցաւ, դարձեալ զալիս էր մի այնպիսի ժամանակ, երբ սորա անյարմարութիւնն էլ ամբողջութեան համար պարզ նշարելի էր վինում: այսպէս անյաջող էին նմանապէս տրամաք անապատուած: Արդ ինչ այն փորձերը, որ աշխարհի մի մասով, զոր օր ջրով, կան այն փորձերը, որ աշխարհի բոլոր այժմեան մասերը գուցէ մի մտքի գային, թէ աշխարհի բոլոր այժմեան մասերը կարծում են, թէ նախնական ամբողջից են գոյացել Շատերը կարծում են, թէ Աստուած աշխարհը ստեղծեց խաօսից: ոմանք էլ ենթադրում են, թէ ինքը աշխարհը խաօսից կազմուեցաւ: Արդեօք իրաւ են, թէ ինքը աշխարհը խաօսից կազմուեցաւ: հանք է անտի մի ահակազմուեցաւ ինքն իրան: —Ուրեմն ի սկզբանէ անտի մի ահակազմուեցաւ ինքն իրան: Աստոյ հաճեցաւ շարժուել և ձևանալ, գին անձեւ նիւթ էր, որ յետոյ հաճեցաւ շարժուել և ձևանալ, հանեց իրանից արեգակ և մոլորակներ, արբանեակներ և անթիւ աստղերի ու զիսւորների խումբ: հանեց իրանից ամենից մարդու հոգին, որից Արիստոտելիսի փիլափայութիւնն ու Հոմերոսի բանաստեղծութիւնը բղխեցան: Այս հայեցողութիւնը մեր միտքը չի կարող մարսել: Մի խաօսի ենթացողութիւնը մեր միտքը չի կարող մարսել, մեր միտքը չի կարող մարսել, մեր միտքը չի կարող մարսել, մեր միտքը չի կարող մարսել:

զիտակցութեան և դիտաւորութեան, ինքնին մեր այժմեան աշխարհը ձեացրեց, այս ոչ միայն չենք հասկանում, այլ հաւատալ ևս չենք կարող, Երկնային մարմնների, ծառի տերեների, ծաղիկների, բիւրեղների կանոնաւոր կազմութիւնը. օրէնք, որ յայտնվում է անձրեի կաթիլի տեղալու և աստղերի ընթացքի ժամանակ. նպատակայարմար հաստատութիւնները բնութեան մէջ, աշնան ժամանակ բոյսերի նիւթի նուազիլը, արեգակի ցածրանալը ձմեռը, անդրդուելի կարգը մոլորակների, ուր ամենայն կտորը կարծես կշեռքով քաշած, իւրաքանչիւրի զիրքը կանգունով չափած ու որոշած է, ամենայն տունիր և կենդանու կազմութեան հրաշալի արուեստը, աչքի, ականջի որրոտի, ձայնական դործիքի ճարտար շնչքը, տեսակ տեսակ ունակութիւնները կենդանիների, մարդկային հոգւոյ անիմանալի կազմութիւնը, ամենայն ամրողի մէջ մասերի յարմարութիւնը, աշխարհի ներդաշնակութիւնը,— այս ամենը միայն կոյր զիպուածքի, սոսկ պատահարքի ներդորութիւն է, — Ասում են, թէ խաօսը իսկզբանէ զօրութիւններ ուներ, բնութեան օրէնքները նոյնպէս մշտնչեն ական ժամանակից են ծագում և աշխարհի այժմեան կարգը իսկզբան անձեռ նիւթի և նորա մէջ օրինապատշաճ կերպով գործող զօրութիւնների արդիւնքն է. Ուրեմն այս տեղ էլ դարձեալ ընդունվում է այն ամենայն բանի մշտնչեն աւորութիւնը (իսկ նոցա տեսակետից նայելով՝ այս արդէն ան բնական բան է). բայց այս դեռ բաւական չէ, այլ անշուշտ հարկաւոր էր որ զանազան տեսակ նիւթերը կարգով բաղադրուեին և ոչթէ անկարգ. ընդդիմագրծող զօրութիւնները անտեսութեամբ կառավարուեին, բնական օրէնքները իրանց գործողութեանց համար որոշ հանգամանքների և յարակցութիւնների մէջ զրուէին, որպէս զիվերջապէս անձունի խաօսից մի կարգաւորած, հաղար տեսակ մասնաւորութիւններից ներդաշնակ ամբողջութիւն կազմուէր. Ապա թէ ոչ միթէ խաօսից միայն զիպուածով ձեացաւ մեր այս աշխարհը, ուր այնպիսի խմաստութիւն է յայտնվում, որ մեզ անսակի կերպով զարմացնում է. ինքը խաօսը անթիւ հնարաւորութիւն ունէր այսպէս կամ այլապէս կազմուելու,

ինչու անպատճառ ալսպէս զեղեցիկ կազմուեցաւ. միթէ միայն դիպուածով: Եւ ինչպէս պէտք է կարողանար նիւթը, այսինքն խաօսը, առանց զիտակցութեան և դիտաւորութեան, զայցնել մարդկայի հոգի: — Ոչ մեզ ուրիշ ոչնչ չէ մնում, մենք պէտք է հաւատանք մի էակ, որ զերբնական և բարձր է մեր աշխարհքից և կամաւ ու իմաստութեամբ բոլոր յարմարութիւնները հաստեց, աշխարհքի եղելութիւնը անիմանալի հանձարով և զօրութիւնամբ կառավարեց: Այս ևս միայն մէկ Աստուած, միայն մէկը պէտք է մնի ստեղծող. երաշխաւոր այս բանին է արաջութեան կազմութեան միութիւնն ու ներդաշնակութիւնը. Որչափ էլ որ մարդս կարողանայ բաներ բացատրել նիւթերից, զօրութիւններից, աշխարհքի գոյութիւնը հասկանալի է դառնում միայն մի ստուածութեան հաւատով, որին որ ամենայն ջերմեռանդութեամբ պաշտել են հենց նոքա, որոնք բնագիտական ճշմարտութիւնները խոր կերպով հետախուզել և ըմբռնել են.

§ 24. Ինչպէս բնութեան ամենայն իրողութիւն, մարդու կամքն ևս որոշ օրէնքներին է ենթարկուած: Սորա մանջենական կառավարչը — բարոյական բարիքն է: Զարմանալի է, որ մենք ամենքս հետեւեալ պատուեների վեմութիւնը ճանաչում ենք — մեր համոզմունքի համեմատ որոշել մեր կամքն ու գործը, ճշմարտութեան հաւատարիմ լինել, մեր ընկերների լաւութիւնը ցանկալ և հնարաւոր կացուցանել, իւրաքանչիւրին թողուլ ինչ որ իրանն է և տալ ինչին որ արժանի է, թէպէտ և բարոյական գաղափարը՝ որպէս մի պատրաստի միտք՝ մարդու մէջ բնածին չէ, բայց նորա ընդհանուր կարողութիւնները և զարգացման հանգամանքները այն տեսակ են, որ հարկաւնա հետզետէ բարոյական սկզբունքներ է կազմում և յարգութեան արժանի է ճանաչում: Ով որ այս աստիճանին չի համում, նա կամ ի բնէ թերի է և մարդկային կարողութիւններից զուրկ է ծնուած, կամ ճշմարտ մարդկային զարգացում չէ ստացել: Թէպէտ շատ անգամ բարոյական սկզբունքները ուստակում են մնում, բայց այդ ապացոյց է, թէ մարդու գործքերը հակառակ շարժառիթներով ևս յառաջ են դալիս, և

ոչ թէ բարոյականը անբարոյականից պակաս յարգ ունի։ Ապա
թէ ոչ ուստի է մեղապարտի խղճահարութիւնը։ Չարագործն
անգամսրտի խորքերի մէջ բարոյական սկզբունքներին տաճար
է կանգնեցնում և դատապարտում է անարդարութիւնն ու ոճ-
բագործութիւնը։ Զմարիտ չարութեան նուազ բացառութիւն-
ները, ուր խղճմտանքը խոպառ մեռած է, պէտք է համա-
րուին անբնական՝ այն է բնութեան օրէնքին հակառակ դէպ-
քեր, ինչպէս առանձին մարդկանց մէջ, այնպէս էլ ամբողջ
հասարակութեանց մէջ բարոյական կարգերը իշխում են, և այն
ևս այնքան աւելի, որքան հասարակութիւնը բարձր զարգա-
ցում ունի, թէ և մի քանի ընդդիմագործ տարերք բարոյական
գաղափարների իրագործութեան արգելք են լինում, սակայն նո-
ցա յարզը գոնի, միշտ ճանաչվում է, Եւ այսպէս մեզ յայտնի է
դառնում աշխարհքի բարոյական նպատակակէտը, որին յաջո-
ղութեամբ հասնել կարող է թէ անհատը և թէ բնկերութիւնը,
Արդ ուստի է այս հիանալի վսեմ և զօրեղ ընդհանուր մարդկա-
յին բարոյական օրէնքը։ Այսէլ խաօսից պէտք է գոյանար։—

Այս տեղ էլ երևում է մեզ Աստուծոյ մատը. Նա է որ կամաւ
և անձամբ բարոյական կարգը հաստատեց, իսկ եթէ բարոյ-
ական աշխարհը նորանից է ծագում, ապա ուրեմն Նա ինքը
վերին աստիճան բարոյական էակ պէտք է լինի։ Այս գաղա-
փարով մենք ճանաչում ենք աստուածային ամենասրբու-
թիւնը, որ միայն բարութիւն է սիրում, չարութիւնից դար-
շում է և անդադար մարդուն առաջնորդում է դէպի սրբու-
թիւն։ ճանաչում ենք աստուածային արդարութիւնը, որ իւ-
րաքանչիւրին ըստ արժանային կը վարձատիէ. ճանաշումնք
աստուածային ամենածշմարտութիւնը, որի աւետումներն ու
սպառնալիքը կը կատարուին. ճանաչում ենք աստուածային
ամենաբարութիւնը (սէրը, ողորմութիւնը, զթութիւնը, համ-
բերութիւնը, երկայնամտութիւնը) որ ամենայն զգացող արա-
րածի բարին է կամենում և տալիս է,

Այսպէս բաւական համոզուեցանք, թէ տեսական շարժա-
ռիթներն էլ վճռողապէս մարդուն առաջնորդում են, որ Աստու-
ծոյ գոյութիւնը հաւատայ, Ուր մեր գիտութիւնը վերջանումէ,

սկսվում է մեր հաւատքը։ «Աստուծոյ հաւատք, ասում է մի
փիլիտովայ, անհրաժեշտ է մեր գիտութեան կատարելութեան
համար»։ Ոչ թէ տղիտութիւնն ունախապաշարմունքը ասնում
են մեզ զէպի աստուածութիւն, այլ ընդհակառակ մեր ամբողջ
մտաւոր շրջանի անկանխակալ հետազօտութիւնը և այն ամե-
նայն բանի խոր քննութիւնը, ինչ որ մենք գիտենալ կարող
ենք։ Սուտ է, թէ առանց Աստուծոյ կարող ենք հասկանալ
աշխարհի գոյութիւնը, թէ մեզ բաւական է միայն գիտու-
թիւնը։ Խոհեմ մարդղ պէտք է խոստովանէ, թէ հենց ամենա-
մեծ հանգամանքների մասին ոչինչ չգիտէ, և թէ միայն Աստու-
ծոյ զաղափարով ամենադժուար խորհուրդները լուծել կա-
րող է։

§ 25. Իսկ ինչ հիմամբ մեր հաւատք անմահութիւն է
դաւանում։—ինչպէս գիտենք՝ հոգւոյ Էմթէտիքական գործո-
ղութիւնը, որ ամբողջ աշխարհը նշաւորեցնում է, երևակայու-
թեամբ ստեղծում է մի կեանք զերեղմանից էլ յետոյ։ մեր
ամբողջ կենցաղական գործնական վիճակը նոյնպէս այդ կողմն է
գարձնում մեր միտքը։ Արդ ինչ է ասում մեր դատողութիւնը
այդ մասին։ Կարող ենք արդեօք հոգւոյ տեսական գործողու-
թեամբ տեսնել մի բան այն վարագուրից դուրս, որ այս աշ-
խարհը հանդերձեալ կեանքից բաժանում է։

Կան հաւատացողներ և չհաւատացողներ, թէ մարդուա
հոգին մահից յետոյ շարունակ կեանք ունի (էլ չենք ասում,
թէ նոյն ինքն հոգւոյ գոյութեան մասին ևս ուրացողներ կան,
որոյ մասին յետոյ)։ Կթէ մարդկային հոգւոյ համար երբ և իցէ
վախճան պէտք է լինի, ապա ուրեմն պէտք է ընդունենք, թէ
գոյութիւնից առ ի չգոյութիւն մի անցողութիւն կայ։ Բայց մենք
չենք կարողանում մի բանի լիակատար ջնջուկլը մտածել, զոյ-
չենք կարողանում մի ոչինչ և մի ոչնչի մէջ անանց ան-
դունդ կայ։ Ոչ մէկ տեղ լիակատար ոչնչանալու օրինակ չենք
տեսնում։ միայն այլակերպութիւն ենք նշմարում։ Ինչ որ մէկ
անգամ կայ, նա մնում է. նա կարող է փոխուել, բայց ոչ ան-
յայտանալ։ գոյութեան ձեզ կարող է խախտուել, բայց ոչ
յայտանալ։ գոյութեան ինքը։ Եւ այսպէս մեզ անհասկանալի է, թէ ինչ-
գոյութիւնն ինքը։ Եւ այսպէս մեզ անհասկանալի է, թէ ինչ-

պէս մեր հոգին մի օր ոչինչ կարող է դառնալ: Մենք խօսում ենք միտյն մեր մտածողութեան մասին, որ նա այս չէ ընդունում, թէպէս և չենք ուզում պնդել, թէ թերութիւն չի կարող ունենալ նա ինքը: Եւ ուրեմն մեղ անյա տ կերպով, զոր օր. Աստուծոյ ամենակարողութեամբ, կարող է մեր հոգին մի անդամ բոլորովին ոչնչանալ, թէ և այս վերը ասած մաքերին բացարձակ հակառակում է, ևթէ ոչնչանալը ընդունենք, այն ժամանակ պէտք է ընդունենք, թէ այդ կատարվում է մեղ բոլորովին անյայտ և անսովոր կերպով, և ուրեմն այդ մասին ոչինչ գաղափար կազմել չենք կարող, այսինքն գիտութիւնը այդ տեղ բոլորովին անձեռնհաս է:

Հաստ անդամ իորձել են նիւթի փոփոխութիւնն ու մշտըն-ջենականութիւնը, որ փորձով յայտնի է, հոգւոյ գոյութեան ևս վերաբերել նմանութեամբ: Մարմինը, ասում են, միլուն մասերի լուծվում է, և աշխարհքի նիւթական ամբողջ քանակութիւնից մի ծիր անդամ չի կորցնում: այսպէս էլ հոգին տիեզերքի ամրողջ և անձարե կութեամբ և անձարե մէջ է մանում, կամ գոնէ իր ներկայ անհատականութիւնը լուծվում է և նա կայ դարձեալ այլօրինակ ձեւրով: Աական եթէ այս ընդունենք, այն ժամանակ պէտք է ասենք, թէ այսպէս մենք էլ չենք շարունակում տեղութիւնը, ոչ էլ մեր զգացմուքները, մտքերը, ձգողութիւնները և այլն, սոքա լուծվում են ուրեմն չը կան: Սյսպէս եթէ և շատ հաւանական է դառնում, թէ մարդուս հոգին ինչպէս և ամենայն գոյութիւն, մի որև է ձեռվ ու կերպով շարունակ մնում է, բայց դարձեալ զեռ մեղ պակասում է այն գաղափարը, թէ մեր մասնաւոր ևեար ճշմարիտ անմասութիւն ունի: Արդ ինչպէս է գոյանում մեր այն յոյսը, թէ մահից յետոյ ինքնապիտակցական կեանք ունինք, թէ մեր ես ու մնում է:

§ 26. Ինչպէս մենք չենք կարող մտածել որ և իցէ իրութիւն առանց պատճառի, նոյնպէս ևս մեղ անհատականաց է մարդկային հոգւոյ փոփոխութիւնը կամ ոչնչանալն երկրաւոր կեանքի վախճանին: որովհետեւ մեր ամբողջ իորձառական շրջանի մէջ ոչինչ հարկադրիչ պատճառ չենք գտնում զորանման իրութիւն համար:

Ուստի այլ ևս ոչինչ ապացուցի կարօտութիւն չունինք մեր եսի անձնական և անհատական մշտնջենականութեան համար: Մեզ բաւական է և այս, որ ոչ ոք հերքել չի կարող: ամսնայն բան ուրեմն և մարդկային հոգւոյ գոյութիւնը մնումէ ինչ որ է և ինչպէս որ է, եթէ մի պատճառ չկայ, որ նորան փոփոխէ կամ ոչնչացնէ: Բայց որովհետեւ այսպիսի պատճառներ ենթադրողներ եղել են, ապա մենք ես պէտք է հատացանք, որքան որ մեր փորձառութիւնն ու գիտութիւնը ներում է, թէ արդեօք նոքա խակութեաբ կան թէ ոչ: արդեօք վերջը թէ արդեօք նոքա խակութեաբ մէջ պէտք է մնանք, թէ նորանից պէտք է հրաժարուենք:

Ումանք ասում են: — մարդկային հոգին չի կարող առանց մարմնի գոյութիւն ունենալ, բայց որովհետեւ մահով նա նորանից բաժանվում է, ապա ուրեմն հարկաւ պէտք է ոչնչանայ, ինչպէս մի բոյս, որին իր գետնից տակուահան են անում: Բայց ինչ անդրդուելի հիմք ունինք, այս համարել որպէս մի անհերքելի ձշմարտութիւն: Միթէ անհնարին է կարծել, թէ հոգին, որ երկրաւոր կեանքի ժամանակ արդէն մարմնից շատ և զին, — որ երկրաւոր կեանքի ժամանակում է, մարդին թուլութիւններից, շատ անկախ վնել կարողանում է, մարդին թուլութիւններից, համանդութիւններից և ցաւերից անմասն վնելով դարձեալ կահիւանդութիւններից շատ անկախ կամ անդամ ուրախ ինել, րողանում է մտածել, կամնալ մինչեւ անդամ ուրախ ինել, մահից յետոյ կարող էր բոլորովին մարմնի կարիք չունենալ: Եթէ ասենք մինչեւ անդամ, թէ մարդկային հոգին անպատճառ միշտ մի կեղեւ պէտք է ունենայ, որ չենք էլ կարող բոլորովին հերքել, — այն ժամանակ միթէ միայն մեր այժմեան մարմնը բնակարան կարող է լինել մեր հանձարի համար: — Մի բոյս առանց վնասի կարող է տեղափոխուիլ, մինչեւ անդամ իր աճման և գոյութեան համար շատ անդամ անպատճառ հարկաւոր է լինում, որ իր յարմար տեղը տանուի: Միթէ ուրեմն միայն հոգին չպէտք է կարողանայ առանց իր այժմեան մարմնի հարքել մի նոր, աւելի ազնուական, իր զամգացման համար աւելի յաջողակ, շարունակ կեանքըով:

Աական, ասում են միւսները, այս տեղ ենթադրած զանազանութիւնը հոգւոյ և մարմնի մէջ ամենսին չկայ: իրանց

սոսկ ճշմարտութեամբ ասելով՝ հոգիներ բնաւ չկան, այլ կան միայն մարմիններ: Եւ աւելացնում են. հոգեկան ասուած կարողութիւնները ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ նիւթական մարմնի աղնիւ մասի գործողութիւնները. մեր հանճարը՝ մեր նիւթական ուղեղն է: Եւ եթէ մարմինը մի օր լուծվում է և աշխարհի ամենայն կողմերը ցրվում է, այն ժամանակ բնական է, որ հոգի ասուած բանն էլ չըանում է:—Այս է կոպիտ և վայրախօս նիւթապաշտութեան լեզուն, որ միշտ միայն երեսի վրայ է մնում կանդնած և աշմատը ճանաչելու չի յետախուզում, ըմբռնում է իրերի երևոյթը և ոչ թէ նոյն խել իրերը, պայմանաւորածն ու ներգործածը և ոչ թէ նոյն խել պայմանաւորողն ու ներգործողը: Շատ հեռու պիտի դնայինք, եթէ ուղենայինք մանրամասն քննել, թէ ինչ է հանճարն ու նիւթը, որ հոգեբանութեան ու փոլիստիայութեան քննելու առարկայ է, բայց դարձեալ պէտք է այն իրողութիւնը յիշենք. թէ շատ անզամ երևելի բժիշկները խանգարուած ուղեղ են գտել այնպիսի մարդկանց գիտակների մէջ, որոնք մինչև իրանց կեանքի վերջին րոպէն ամենապայծառ միտք են ունեցել: Իսկ կողմնակի թող ամենայն ոք փորձէ, թէ արդեօք նա կարող է բաւականաւալ այն մտքով, իրը թէ զոր օր. մեր այս բոլոր քննութիւնը, որ մի որոշ զիտաւորութեամբ և մի որոշ կարգով մինչ այստեղ հասցրինք, կամ Նատոլէնի պատերազմական նախագիծները, կամ Յէթհովլինի սիմֆոնիաները, կամ Կիկերոնի ատենաբանութիւնները, կամ Շեքսպիրի բոլոր գործերը սոսկ նիւթական ուղեղի ցնցմանց ծնունդը են:—Եթէ մահից յետոյ մարմնի մէջ էլ չեն ծնանում մտքեր, կամ ցողովութիւններ և զգացմունքներ, այս այն պատճառով կարող է լինել, որ մտածող, կամնցող և զգացող մասը, որ միայն ինքնազիտակցութեան մէջ կարելի է գտնել և չէ թէ որ և է անդամատողական դանակով, թողել է մարմինը և նորանից հեռացել է: Մինչև անգամ մարմինն եւ անհնարին է վերստին բաղադրել այն փլատակներից, որ նորա լուծուելուց յետոյ մնացին: Այժմ պակաս ոռում է նորան մի բան, որ առաջնութեան մարմինը իրար չէ բարձրացնել անդիւ անցուշտ: Մանաւանդ որ զիտենք, թէ երկրիս վրայ առաքինութիւնն ու բախտն այնպէս անհաւասար կերպով է բա-

պում էր ի մի ամբողջութիւն, բայց որը ձեռքով շօշափել չենք կարող և էլ ոչ մէկ տեղ գտնել չենք կարող: Արդ այս մի բանն արդեօք զնաց ոչնչացաւ, թէ գուցէ մահից յետոյ մեր հոգւոյ նոր մարմինն է կաղմում: Գոնք ամարմնի յարութեան մասին հաւատոյ հիմքը, կարծեն, այս գաղափարն է յատնում:

§ 27. Ինչ որ մինչև հիմայ ասուեցաւ մարդկային հոգւոյ մշտնջնականութեան հաւատոյ դէմ, այն ի հարկ է զեռ չի կարող խախտել այդ հաւատոր: Իսկ միւսը. գուցէ ամենակարող Աստուած ինքը ոչնչացնում է հոգիներ: Հոգին, որչափ որ մեր փորձառութիւնից զիտենք, Աստուծոյ ամենապնիւ, անդաշար կատարելագործութեանց ընդունակ, դէպի ճշմարտութիւն և առաքինութիւն ձգտող, արարած է: Իսկ մահը չատ կաթնաւուն մատղաչներին յափշտակում է, որոնց կատարելագործութիւնը հազիւ սկսուել էր. շատերը մեռնում են. իրանց բարի գործքերը չվերջացուցած և ոչ նէկ ծերունին չի հասնում լիակատար կատարելութեան: Մարդուս ամենամեծ նպատակին, այն է բարոյականութեան. ամենապնիւ մարդն անգամ չի հասնում: Միթէ ուրեմն աստուածային իմաստութիւնը մարդու հոգին այսպէս փառաւոր կերպով պէտք է զարդարէր, որպէս զի վերստին ոչնչացնէ նորան այն ժամանակ, երբ նա զեռ չէ կատարելագործուել. մեզ էլ մի նպատակ ցոյց տար, որ չհասնենք նորան:—Այլ գուցէ միայն վերջին մարդիկ անմահութեան վիճակին պէտք է արժանանան, որովհետեւ տեղ չկայ ապրելու ամենու համար: Բայց այն ժամանակ մենք պէտք է տարակուսէինք Աստուծոյ արգարութեան վրայ: Մանաւանդ որ աշխարհն էլ անսահման ընդարձակ է, ինչպէս որ զիտենք, անթիւ բազմութիւնը կարող էր նորա մէջ տեղ գտնել և ապրել: Շիմ հօր տան մէջ, ասում է Քրիստոս, շատ բնակարաններ կան: Յիշենք և այն, որ հաղարաւոր մարդկանց ամբողջ կեանքը թշուառութիւն և տառապանք է: Աստուծոյ ամենա բարութիւնը մարդուն միայն այդ վիճակի համար չէր ստեղծիւ անցուշտ: Մանաւանդ որ զիտենք, թէ երկրիս վրայ առաքինութիւնն ու բախտն այնպէս անհաւասար կերպով է բա-

ժանուած, որ մի ուրիշ կեանք պէտք է լինի, ուր այդ հաւասարութիւնը թագաւորում է:

§ 28. Վերջապէս անցիշատակ չպէտք է թողնել և մէկ հակածառութիւն, որ մճուրդապէս ասվում է անմահութեան հաւատոյ դէմ: Ասում են, կեանքի մի որոշեալ հասակից յետոյ մարդ հետզետէ թուլանում և տկարանում է: Ոչ միայն նորա մարմինը գորութիւն է կորցնում, այլ և նորա հոգեկան գործողութիւներն աւելի դանդաղանում և անաշխոյժ են դառնում: մինչև անգամ ծերութեան ապօւշութիւն շատ յայտնի է: Այս բանը անհերթելի կերպով ապացուցանում է, թէ հոգին անդադար նոււղանում է և վերջապէս բոլորովին պէտք է լուծուի, մաշուի: Այս հաւանական է դառնում, քանի որ հոգւոյ մեծագոյն տկարութիւնը աւելի այնպիսի մարդկանց մէջ է նկատուած, որոնք իրանց ամբողջ կեանքին անխոնջ մտածել են և բարձր կրթութիւն են վաստակել:

Մեր պատասխանն այս է: Նախ՝ ծերութեան ապօւշութիւնը, ինչպէս փորձով գիտենք, ամենայն ծերացածի մէջ զգալի կերպով չի նշմարվում, մանաւանդ երբ որ այդ տկարութեան պատճառները, որոնց մասին իսկոյն կը խօսենք, առանձին կերպով չեն յայտնվում, բայց և երկրորդ՝ հոգեկան տկարութիւնը բոլորովին այլ պատճառներից է յառաջանում, և բոլորովին այլ եղակցութիւն ծնանում, քան վերոյիշեալը: Մենք այդ երեսոյթները այսպէս ենք բացարձում: Հոգւոյ ներքին որպիսութիւնը մանկութիւնից անդադար աճում է, ամենայն տարի աւելի հարստանում և զօրանում է: Որովհետեւ անդադար նորանոր իմացումներ են կազմվում, հիները միշտ վերարտադրվում են և մի և նոյն ժամանակ նորովվում, զօրանում են և տեսակ տեսակ մոտաւոր շղթաներ և մոտաւոր խումբեր են հիւառմ: Իսկ ինչ որ մէկ անգամ հոգու մէջ գոյացել է, պատրաստ կազմուել և հաստատուել է, այն ևս մնում է անջինչ: Թէպէտ և հոգեկան վիճակները, (միտքը, զգացմունքը, բաղձանքը) շատ անգամ գիտակցութիւնից երկար կամ կարծ ժամանակով անցյատանում են, բայց ոչ հոգուց: Ուրիշ անգամ նոքա դարձեալ արթնանում են (յիշողու-

թիւն): Լիակատար մոռացութիւն գուցէ և ոչ երբէք չի պատահում, ոՊայծառ տեսողութեանց բուպէներում շատ անդամ ամենաբթամիտ անձինք ցոյց են տալիս, թէ այն մտքերը, որ վաղուց անյայտացած պէտք է համարուէին, գեռ դարձեական նոցա մէջ կատարեալ պայծառութեամբ, կարգով և զօրով թեամբ: Արտաքոյ կարգի զրդուման ժամանակ, զոր օր. տենդային հիւանդութեանց ժամանակ, մոռացած լեզուները յիշվում են, այն մտքերը զարթնում են, որ առողջ ժամանակ շատ տարի ամենավայր չէին շարժվում և իզուր աշխատում էր զիտակցութիւնը յիշել և զրգուել նոցա: Ուրեմն եթէ զիտակցութեան մէջ մէկ բան չկայ, այդ ապացոյց չէ, թէ նա հոգու մէջ ևս չէ: Եւ ծերութեան ապօւչութիւնը հոգու մէջ չունի իր դահը, այլ դա գոյանում է, երբ որ զիւրագրգութիւնն ու գործողութիւնը պակասում է, երբ որ հոգույ մէջ եղածը խափանվում և արգելվում է (այն երկու պատճառով) զիտակցութիւն դառնալու: Ուրեմն ոչ թէ զուրկ է մի բան, այլ ճանապարհ չի գտնում ծածուկ աեղից յայտնի երեալու: Խակ զիտակցութեան պակասութիւնը գոյանում է հոգին զրգուղ տարրերի պակասութիւնից: Թէպէտ և արտաքին աշխարհը ծերի համար դարձեալ նոյն է մնում, ինչ որ է և մանկան համար. բայց նա այնպէս էլ չի աղջում ծերի վրայ, ինչպէս մանուկի վրայ, որովհետեւ տարիներով մարդս ինքը փոխվում է: Մարդու մարմինը հնարինետէ թուլանում է, մաքսողութիւնն ու մնանդը խափանվում է, քունը պակասում է և այնպէս հանգիստ ու կազզուրող չէ, ինչպէս առաջ էր: Այժմ հոգին, որ անդադար իր մարմինը մաշեցնում է, էլ առաջուայ պէս բաւական չի պահպանվում այս վերջինով և շարժող ու զըրգուղ տարրեր չի ստանում. զգայրանքները բթանում են. ծերը նմանապէս քիչ է հաղորդակցում լնութեան հետ. այս երկու պատճառով արտաքին աշխարհն էլ այնպէս չի աշխուժեցնում նորան. հոգեկան նոր վիճակներ էլ չեն կազմվում. նա սկսում է ապշանալ: Ոչ միայն ծեր հասակը, այլ և մեր ամենօրուայ փորձը նոյնը ապացուցանում է: Մենք ամենքս փորձով զիտենք, որ մեր զիտակցութիւնը մեր հոգւոյ պաշարից միայն մի անհան մասն ոճնի իր մէջ և թէ նա

մանկութիւնից սկսած անդադար փոխվում է. հոգւոյ պաշարը բարձրանում և իջնում է, մէկ անգամ աւելի է, միւս անգամ պակաս է գիտակցութեան մէջ: Համեմատենք մեր հոգեկան վիճակը առաւտօտեան և երեկոյին, արթնութեան և քնի ժամանակ, առողջութեան և տկարութեան ժամանակ. Միթէ այս փոփոխութեանց ժամանակ արդարև մեր հոգին է փոխվում, միթէ մեր հոգւոյ պաշարը երբեմ յանկարծ անյայտանում և յանկարծ վերադառնում է: Ոչ, նոքա երբեմ գիտակցելի են մեզ և երբեմ անգիտակցելի: Այս այս վերջինները յիշեալ պատճառներով մանաւանդ ծերութեան ժամանակ է պատահում: Այն ինչ մանուկը, որի հոգեկան կազմութիւնը դեռ շատ սահմանափակուած է և տպաւորութիւններ ընդունելու նորա կարողութիւնը շատ մեծ է, գրէթէ բոլորովն ապրում է արտաքին աշխարհի մէջ և տպաւորութիւններ է ամբարում իր հոգւոյ մէջ,—ծերը աւելի յետ է քաշվում արտաքին աշխարհից, ամփոփում է իր ներքին աշխարհի մէջ և ապրում է աւելի յիշողութիւններով, երեակայութեամբ և խորհրդածութիւններով: Այս իրողութեանը վերջնական է տալիս մահը: Բայց մահը ոչ թէ հոգւոյ նուազ առ նուազ ոչնչանան է, այլ նորա բաժանումը մարմնուց: Եթէ մենք հոգւոյ այն երկութական տկարութեան մէջ ընդհակառակ հարկաւ պէտք է ընդունենք հոգւոյ անդադար աճումը և միայն գիտակցութեան տարրների նուազիլը,—ուրեմն մարդու կեանքի մէջ ոչնչնչ նշան չենք տեսնում հոգւոյ ոչնչանալու համար, և չենք հասկանում թէ ինչպէս պէտք է կատարուէր: Մեզ թուում է, թէ մահից յետոյ էլ հոգին կլինի այն, ինչ որ երկրաւոր կեանքի ժամանակ հետզետէ դարձաւ: Մի նոր, աշխայժմանքներից աղատ, կեանք կ'սկսէ վարելնա, երբ որ կ'ազատովի իր մաշուող, փչացած, ճնշվող մարմնից: Այդ նոր կեանքի տեղի, առանձին հանդամանքների, նպատակի և ուղղութեան մասին հազար բան կարող ենք մտածել, քանի տիեզերքը անսահման մեծ և բազմաձև է: Աւ այս տեղ կանգնած ենք մենք մարդու գիտութեան սահմանի ծայրին և մանում ենք հաւատոյ ընդադակ շրջանի մէջ:

Եթէ մեր հետազոտութիւնները հոգւոյ անմահութեան մասին լաւ շրջանայենք, մենք անզգոյշ և շտապովի դատողութիւն չենք անի, իբր թէ այն քննութիւնները անհերքելի համոզեցուցիչ գորութիւն ունին, որովհետեւ այն և այս աշխարհի մէջ մի վարագոյր կայ, ուր ոչ մէկ մահկանացու աչք թափանցել չի կարող: Բայց մենք այն ևս համոզուեցանք, թէ մեր ամբողջ փորձառական գիտութեան շրջանի մէջ չկայ ոչինչ, որ կարողանայ ապացուցանել մարդու: Հոգւոյ ջնջումը. թէ ընդհակառակ մեր մշտնջնականութիւնը աւելի հաւանական է.

IV

ԿՐՈՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԱՐԴԻՒԽՆՔԸ ԿԱՄ ԱՌ ՀԱՍՏԱՐԱԿ ԿՐՕՆՔ:

§ 29. Առաջիկայ քննութիւններով, բայց և միայն դոցանով, բազմիցս և արժանահաւատ կերպով ճանաչում ենք ամենայն կրօնքի բուն էութիւնը: Մենք տեսանք, որ նա մեր հոգեկան զար գաց ման մի անհրաժեշտ մասն է, որոյ մասին միայն մեր ինքնագիտակցութիւնը կարող է տեղեկութիւն տալ: Բայց վերսի զլուխնարի մէջ ներկայացրեցինք կրօնքի միայն գոյացման և ձեանալու գործողութիւնը: այժմ կը քննենք և կը դատենք նոյնը որպէս արդէն մի պատրաստի արդիւնք (մարդկային հոգւոյ գործողութեան): Ի հարկէ մենք միշտ աշքի առաջ պէտք է ունենանք այն ճանապարհը, որ արդէն անցել ենք, ի մի ամփոփենք, գործադրենք և միաւորենք այն, ինչ որ մասնաւորապէս քննել ենք:

Այժմ հասկանալի է մեզ համար աշխարհի ամենայն ծայրին կրօնքի տարածուած լինելը: Ով որ ասում է թէ կրօնքը բնածին է մեր մէջ, նա բացարձակ միանք և շտապովի կարծիք է յայտնում, չի տեսնում մի նորածին և մի զարգացած մարդու մէջ եղած սար ու ձոր տարբերութիւնը: Չի աշխատում հոգեկան պաշարի ձեանալու կամաց ու խճճուած գործողութիւնը ճանաչել և աւելի սիրով՝ իր ծոյլ մտքի յարմարութեան համար՝ զրօից ուղղակի մի «մէկ» է շնուռմ: Ծննդեան օրը և

կեանքի առաջին միջոցին՝ մասուկը բնաւ գաղափար չունի. Աստուծոյ և անմահութեան մասին. և մեր սեպէական յիշողութիւնն էլ վճռապէս մեզ համոզում է, թէ կար ժամանակ, երբ դեռ չենք ունեցել մեր այժմեան բոլոր կրօնական համոզմունքները, զգացմունքները և այլն, ինչ որ վերև ցոյց տուեցինք, և թէ միայն հետզետէ որոշ հանգամանքների միջոցով կազմեցինք նոյնը:

Այլ և բան ական ութիւնը նմանապէս չէ առաջին սկզբնական աղբիւր կրօնքի. այժմեան հոգեբանութիւնը ապացուցանում է, որ բնածին բանականութիւն ևս չկայ. Սա ինքը նախ պէտք է գոյանայ, և ինչպէս դիտողութիւնը ցոյց է տալիս, շատ մարդկանց մէջ չի հասնում իր կատարելութեան չափին:

Զգայաբանքների գործողութիւնները (տեսնեմ, լսելը և այլն) են հոգւոյ այն առաջին գործողութիւնները, որ տեղից որ կազմվում և գոյանում է հոգւոյ պաշարը. Ուրեմն և կրօնական զարգացումն ևս սկսվում է այդպիսի տպաւորութիւններից, հոգւոյ պարզ և փոփախող վիճակներից, պարզ զգացումներից և տրամադրութիւններից, որոնք մեր կեանքի և զարգացման հանգամանքներից են առաջանում. կրօնքը հիմնուած է փորձ առութեան վրայ, և սա է ամենայն զարգացման արմատ:

Մենք տեսանք, որ մեր ամբողջ ենթակայ (տեսանելի) աշխարհով բաւականանալ չենք կարող, մենք պէտք է նոյնը անենթակայ այսինքն փորձառութեան սահմանից դուրս եղած, աշխարհքով լրացնենք, որպէս զի մեր էսթէտիքական, գործնական և տեսական աշխարհայեցողութիւնը ամբողջանայ և թերի չը մնայ. Մեր հաւատը բացարձակ ստեղծում է մի գերզգայական աշխարհք, ուր մեզ քաշում է մեր հոգւոյ բոլոր զարգացումը, և որ մեր հանճարի ստեղծած արարածներով ենք լցում և կենդանացնում. Լոկ միայն մէկ տեսակէտից չենք համում այն տեղ, ինչպէս որ ոմանք՝ միակողմանի կերպով մտածելով և նախապաշարուած դատելով այդ կարծել են. ոչ միայն մեր երևակայութեան հաճոյքը, ոչ

միայն մարդու կարօտութիւնն և պիտոյքը, ոչ միայն մեր մտածողութիւնն ու ճանաչմունքը գոյացնում են հաւատք առ Աստուած և անմահութիւն, այլ այս ամենը ի միասին. Երբ որ կրօնքի բնական գոյացման աճիլը ամենացն կողմից քննում էինք, մենք տեսանք, որ արմաներն ու տարերքը այնքան շատ և զանգվանատեսակ են, ինչպէս ընդհանրապէս մեր հոգեկան զարգացման հանգամանքները. Ամենայն կողմից զըտնում ենք ուղղեցոյներ դէպի երկինք, այն տեղ տանող կամուրջներ և այն ճանապարհը լուսաւորող աստղեր, Եւ որովհեան մենք այս բանի մէջ համոզուեցանք, ապա ուրեմն մեր աչքում մարդու մէջ կրօնքի մինիլ որպէս կանոն, իսկ նորապակասութիւնը որպէս շատ նուազ բացառութիւն պէտք է համարուի.

Եւ արդարե վաղուց յայտնի է որպէս փաստ՝ ազգերի և անհատների այսպիսի միօրինակ զարգացումը, բայց այդ փաստից հանած եղակացութիւնը շատ հեռու գնաց. այսինքն ոմանք այդ փաստը ալ աց ոյց համարեցին Աստուծոյ գոյութեան և հոգւոյ անմահութեան համար, ասելով թէ ամենայն ժամանակների և աղքերի համոզմունքը պէտք է մի ճշմարտութեան վրաց հիմնուած լինի. Սակայն համոզմունքը ոչինչ չէ ապացուցանում կրօնքի առ արկան երի մասին, մեր փորձառութիւնից դուրս եղած իրականութեան, գերբնական աշխարհքի (օրյեկտիւականի մասին, այլ նա ապացուցանում է մեր մէջ եղած, մեր անձին սեպհական եղած, նոյն ինքը կրօնքի մասին (սուրյեկտիվ կանի մասին). Այն ընդհանուր միօրինակութիւնը միայն համարական տատում է, թէ կրօնական, զարգացումը մարդուն սեպհական է, ընդհանուր մարդկային կարողութեան արդիւնք է, թէ ամենայն մարդու մէջ անշուշտ կրօնք պէտք է զարգանայ.

§ 30. Կրօնքը ոչ թէ լոկ միայն մէկ սոսկ գաղափար է, այլ հոգեկան պաշարի կամ վիճակների մի ամբողջ և մեծ հիւսուածք է. Աստուծոյ գոյութեան, Նորաստորոգութեանց և մահից յետոյ կեանքի մասին՝ գաղափարներ և պատ կերաց ու մներ ենք կազմում. երկիւզածութիւնն ու խոնարհութիւնն առաջանի առաջ, մեր առ Ամենարարին, կեանքի տանը Անսահմանի առաջ, մեր երևակայութեան հաճոյքը, ոչ

ռապանքներից դէպի աստուածային երանութեան ամբառնալը՝ զգաց մունքներ են. մշտնջենաւոր կեանքի յոյսը վերին օգնութեան փափազը, աստուածնանութեան ձգտիլը՝ բաղանքներ ու միտումներ են. Եւ ինչպէս որ սովորաբար այս հոգեկան գարգացման ձևերը դրէթէ բնաւ անխառն չեն լինում, այլ շատ անգամ միմեանց մէջ ձուլվում, միմեանց ներգործութիւնը զօրացնում, միմեանց կցորդվում են,—այսպէս էլ մանաւանդ կրօնական հանգամանքներում՝ տեսականը, զգացածը և գործնականը շատ անգամ միմեանց հետ միացած են. Առ Աստուած վերանալը՝ միրնք գաղափարի միայն մէկ կողմն է, նա է նմանապէս միմիթարութեան և ուրախութեան վառ զգացմունք, նա պաշտել է տալիս Ամենասուրբին, երկիւղ է ազդում մեղք գործելու համար, զօրութիւն է տալիս համբերելու և վատահանալու, ձգտողութիւն է ծնանում սրբանալու, կրօնքը իր կատարեալ կաղմութեամբ միանդամայն և զգացմունք և ձգտողութիւն և միտք է, որովհետեւ, ինչպէս զիտենք, նա ծագում է և էսթէտիքական և գործնական և տեսական շարժառիթներով և ամենայն տեսակ տարբերք ունի իր մէջ, նա վառուած, ուժեղ և պայծառ է միանգամայն, նա է մեր հանճարի կեանք, գործողութիւն և գոյութիւն Աստուծոյ մէջ:

Ի հարկէ կրօնքի այսպիսի ներդաշնակ կատարելութիւնը, որի փառաւոր օրինակը մազ Քրիստոսն է տալիւ. շատ քիչ ենք տեսնում: Մէկի մէջ այս ձեզ, միւսի մէջ այն ձեն աւելի է գերազուում. երբեմն գտնում ենք շատ նուազ պայծառութեամբ, սակաւ գործող լոկ միայն զգացմունքի կրօնք, երբեմն չափազանցութեան հասած եռանդ, երբեմն ևս խոճական պայծառութեան հետ շատ քիչ ջերմութիւն և աշխոյժ: Նաև մի և նոյն մարդու մէջ երբեմն այս, երբեմն այն կրօնական հանգամանքը արթուն է. այժմ ինդում ենք օրհնութիւն պարգևող Ամենաբարութեան վրայ, առաջ Աստուած ներկայանում էր մեզ որպէս նախապատճառ ամենայն արարչութեան, յետոյ մենք ամենայն զօրութեամբ կը սթափուինք, որ միամտութեամբ հնագանդունք ամենասուրբ Հօրը. մի անգամ մեր կրօնական

տրամադրութիւնը շատ ուժեղ է, ուրիշ անգամ նուազացած. կամ երբեմն ևս բոլորովին վերացած է: Մի խօսքով ոչ մէկ ներքին կամ արտաքին ներգործութիւն չի կարող մեր բոլոր կրօնական վիճակները բոլորովին հանդէս հանել մեր գիտակցութեան մէջ:

Արդեօք մինչի որ աստիճան և Բնչ կերպով կրօնքը մարդու մէջ զարգանալ կարող է, այս կախուած է մէկ կողմից սորա անհատական ընդունակութիւններից, միւս կողմից սորա կրթութեան հանգամանքներից: Բժամիտ, դանդաղաշրժ և թոյլ հոգիները ամենայն տեսակ վիճակներով էլ թերի կը զարգանան. նոցա կրօնական զգացմունքները պատկերացումները և ձգտողութիւններն էլ միայն ստուերի պէս անշուրք կլինին: Ուրիշ է ի բնէ բազմակողմանի չնոհներով զարդարուած մարդու զարգացումը: Եթէ նորան չի պակասում հարկաւոր չափով վերը յիշած զարգացման հանգամանքները, նա կը բարձրանայ մինչեւ այն կրօնքը, որ լիութիւն, զօրութիւն և պայծառութիւն է միացնում իր մէջ: Գրգռականութիւնն ու աշխուժութիւնը աւելի վառ միտութիւնը և զգացմունքներ է յառաջացնում: Խգական սեռը մանաւանդ հարուստ է այդ յատկութիւններով, ուստի և շատ անգամ ջերմ և զոհողական կրօնք, զգացմունքի կրօնք հաստատուած է նորա մէջ: Խակ եթէ աւելի գերազանց է հոգեկան ընդունակութեան ուժեղութիւնը, ինչպէս որ ընդհանրապէս արական սեռի մէջ տեսնում ենք, այն ժամանակ շատ հեշտ կը կազմուեն աւելի պայծառ գաղափարներ աստուածային հանգամանքների մասին: Սակայն մեր ակնարկը միայն աստիաճանական տարբերութեանց մասին է, այս կամ այն յատկութեան գ եր աղանց ութեան մասին է միւների համեմատութեամբ, ամեննեին չմոռանալով որ ընդհանուր մարդկայինը միշտ մի նոյն է: և ոչ մէկ յատկութիւնից զուրկ չէ, մէկ խօսքով ամենայն առողջ ծնած անհատ ընդունակ է զարգայնել իր մէջ կրօնքի բոլոր կերպերը անխափիր, թէպէտ զանազան աստիճանաւորութեամբ:

§ 31. Եթէ այժմ կրօնական զարգացման արտաքին գործիչներն ևս քննենք, այստեղ ևս կը գտնենք, որ նոցանից ոչ մէկ առանձին չի ներգործում, ընդհակառակ դոքա ևս մի և կը առանձին չի ներգործում, ընդհակառակ դոքա ևս մի առդու վըայ ընկերովի են աղդում, —բայց երբեմն մէկը

երբեմն միւսն աւելի իշխում է զանազան մարդոց մէջ և իրանց տեսակ տեսակ բազագութիւններով տարբեր ներգործութիւններ են յառաջացնում:

Նախ ինչ որ կը վերաբերի տեսական տարրերին, որ կրօնական զարգացում են առթում, հասկանալի է որ նոցակարապետը պէտք է լինի անշուշտ մի մտածական դորդութիւն: Թէպէտ հասարակ ժողովրդեան մէջ հասկանալի պատճառներով այդ տարրերը տիրապետել չեն կարող, սակայն ուսումը, մասնաւորապէս կրօնքի ուսումը, տալիս է նոցագաղափարը, և աստուածապաշտութեամբ, քարողով, ընթերցմունքով, մտքերի փոփոխութեամբ անդադար արթուն են պահպոմ: Հարկաւ աւելի նոքա գերզգայական հանդամանքներով ևս զբաղվում են՝ մեր կեանքի որոշ խնդիրներ լուծելու ժամանակ, որոնք գիտութիւններ են մշակում, այս է պատճառ, որ գիտնականների կրօնքը շատ անդամ վերին աստիճան վերացական բնութիւն ունի: Բայց որովհետեւ նոյն իսկ ուսումնական քննողը շատ անդամ այնպիսի առարկաններին է հանդիպում, որ նորա մէջ էսթէտիքական աշխարհատեսութիւն են հաստատում (օրինակ՝ ամբողջ տիեզերքի կամ մարդկային հոգու քննութիւնը) և հետեապէս Ստեղծողի իմաստութեան համար խոր զարմացը են ազդում, — ապա ուրեմն կրօնական հաւատի, հնարաւոր պայծառութեան հետ կարող է զարդանալ նաև ջերմովորութիւն կամ աստուածպաշտութիւն, իսկ մեր ասածներից այս ևս հետեւում է, որ միայն հոգույ տեսական գործողութեամբ կարող է կազմուել Աստուծոյ միութեան, այն է միաստուածութեան գաղափարը:

Կրօնքի գործնական արմատները և տարրերը աւելի ազդու ներգործում են ընտանեկան և հասարակական կեանքի մէջ, գոյացնում են բուն ազդային ժողովրդական կրօնք, մասնաւանդ առաջուայ ժամանակներում: Այս տեղ կրօնքի նշանաւոր մասունքը Աստուծոյ և անմահութեան մասին պայծառներ չեն, այլ աւելի երջանիկ կեանքի կարօտութիւն, աստուածային օգնութեան քափագ, վստահութիւն այն էակի վրայ, որոյ մէջն է ամենայն երանութիւն և որ ամենայն երկրա-

որ փոփոխութիւններից աղատ ու բարձր է: Իսկ ինքն ըստ ինքեան գործառիթների համար միաստուածութիւնը կամ բազմատուածութիւնը անտարբեր բան է: Այս հանգամանքում մարդս կարօտում է միայն, որ աներեւոյթ կեանքի մէջ մի անդրդուելի նեցովկ գտնէ, և հաւասարապէս կը պաշտէ, եթէ այդ օգնութիւնը մէկ կամ շատ էակների մէջ տեսնէ: Սակայն գործնական կարօտութիւններից շատ հեշտութեամբ հաւատ է զարգանում միջնորդող էակների մասին աստուծութեան և մարդկանց մէջ, այն է հրեշտակների կամ աստուծածային պատգամաբերների մասին, բարեխօնների և պաշտպան սրբերի մասին:

Վերջապէս հոգույ է սթէտիք ական գործողութիւնը, որ նոյնպէս և անմիջապէս գերերկրային զօրութեանց մասին հաւատ է գոյացնում, այն տեղ աւելի կերևայ, ուր գեռ գործնական պիտոյները չեն ճնշում մարդուն և զժուարալոյց խընդիրները չեն ծանրացնում նորա միտքը, այնպէս որ հանձարն անարգել կարող է սաւասնել վերին աշխարհներում: Երիտասարդի պէս անհոգ, կայտառ և զրէթէ անկարօտ ազգերը (օրինակի համար յիշենք յին Յոյներին) աւելի էսթէտիքական դրոշմ ունեցող կրօնք կ'ունենան. այս տեղ նշանաւոր մասերն են միամիտ հաւատ, հետ տղաւորող զգացմունք, վառ և խոր սրտի միտում, զարմացք և հիացումն, երկրպագութիւն, սուրբ երկիւղ, աղատ երեակայութեան խաղ: Եւ ինչպէս որ մենք տեսանք աւելի էսթէտիքական գերազանցութեամբ գոյացած կրօնքը հարկաւ բազմաստուածութիւն պէտք է ստեղծէ: Թէպէտ և կրօնքի այս ձեր այժմ մեր մէջ տեղի չի կարող ունենալ, այնու ամենայնիւն անես ամենամաքուր միաստուածութեան մէջ՝ էսթէտիքական զաղափարները մնեն նշանակութիւն ունին: Միաստուածութեան զաղափարը չի խորտակում այն զաղափարները, միայն թէ ուրիշ ուղղութեամբ է գործածում, այն է բոլոր էլ մի բարձրագոյն էակի հետ կցորդելով՝ ի մի ամբողջութիւն է միաւորում նոցաւ եւ յիրավի որովհետեւ կրօնքի էսթէտիքական մասունքը աւելի մաքուր, անշահասիրական, զաղափական, գեղեցկական և վսեմական դրոշմ ունին, առանձին կենդանութիւն, աշխանութիւն և

ազնուական հրճուանք է պատճառում, ուստի և ուրախալի է, որ նոքա միշտ յարգի և խնամքի են արժանացել, այն է գեղարուեսաներով. Ստեղծող ճարտար արուեստագործը բոլոր հոգով խորասուղվում է գեղեցիկ և վեհ բնութեան ու մարդկային աշխարհի նշանաւոր երևոյթների մէջ և այդ տեղ է տեսնում մի անհուն տիեզերական հանձարի հաղարաւոր նշաններ, որ ի հարկէ և նա իր մտածական անդրադարձութիւններով որպէս ստեղծողութեան արգասիք է ճանաչում և մէկ աստուածութան է վերաբերում. Մկնահանձար բանաստեղծների կրօնքը աւելի էսթէտիֆական է. հին աստուածները մեծ գեր էին խաղումնոց աստեղծողութեանց մէջ, այնպէս որ կարծես նոքա որպէս բանաստեղծներ աւելի դէպի բազմաստուածութիւն են հակում. — Սակայն ամենայն ժամանակ էսթէտիֆականի հետ ոչ միայն գործնական, այլ և տեսական կարօտութիւն է զգացվում մեր համօրէն մտքերի և մտածողութեանց մէջ, որ միութեան և ամբողջութեան զաղափար կազմենք: Արդէն հին ժամանակներում, երբ որ բազմաստուածութիւնը ընդհանրացած էր, շատ հանգամանքներում նշարելի է եղել հակումն դէպի միաստուածութիւն: Այսպէս նախ իւրաքանչիւր բազմաթիւ նման երևոյթները մէկ սկզբունքի էին ստորագրում, որը որեւէ մի մեծ շրջան, զոր օրինակ ստորեկրեայ պետութիւնը, ծովալին, երկնային աշխարհը, սիրոյ արքայութիւնը, բանաստեղծութեան արուեստը կամ ուրիշ այսպէս բան կառավարում է, և այսպէս աստուածների թիւը պակասեցնում էին. ուրիշ տեղ հաւատացին միայն երկու հզօրագոյն էակներին, մինչև անգամ շատ կանուխ միայն մի աստուածութեան (բախտ, փատում) նախազգացմունք յայտնի եղաւ, որ հեթանոս ազգերի իմաստնագոյն անձաց համար համոզմունք դառաւ:

§ 32. Այսպէս ուրեմն թէպէտ և կրօնական պատճառուների երեք գլխաւոր խմբերից սովորաբար մէկը կամ միաը աւելի գերակռում է, սակայն ոչ մէկը նոցանից երկար ժամանակ բացառապէս չէ կարողանում լիխել, իսկ շատ անգամ միատեղ և ներդաշնակութեամբ ներգործում են: Եւ կրօնական գաղափարները որպէս պատճառութեան առաջնային մարդ չէ անպատճառ գիտնական, կամ հանճարարուեստ և կամ սոսկ արհեստաւոր, և ոչ էլ իւրաքանչիւրը դոցանից իր ընկերի մասնաւոր գործքի լծակից է. բայց ամենայն ոք կարող է կրօնք ունենալ, և կրօնքի լինելութիւնը մի իրողութիւն և կանոն է: Սակայն իւրաքանչիւրն ունի մի ուրիշ, իր սեպհական կրօնք, մինչև անգամ մի և նոյն դաւանութեան անձինք աղատ չեն իրանց անհատական փորձառութեան և հոգեկան գործողութեանց առանձին և որիշ աղղեցութիւններից: Ուստի և Աստուած, ինչպէս մի բանաստեղծ ասում է, «իւրաքանչիւրի համար մի այլ աստուածէ», Մանուկը, արիահասակը, ծերը, միանձնականը, ընտանեաց հայրը, ուկը, սումնականը, զինուորականը, բանաստեղծը, արհեստաւորը,

բղխեն, որպիսի գերագոյն աշխարհ ևս ստեղծեն, — նոքա բոլորեկանք անխղելի կապեր են երկրի և երկնքի համար և այս կողմանէ իրար մէջ նոյն և նման են. այս պատճառաւ ամենայն անհատի մէջ նոքա ի մի ամբողջութիւն միանում են, որոյ առանձին մասունքը անդադար միմեանց վրայ աղդում, միմեանց քարշում, զօրացնում, լրացնում, լուսաւորում և բարձրացնումեն, նոքա շղթաներ և խմբեր են կազմում և տեսակ տեսակ հիւսուածքներով (ներքին) նոր նոր արտադրութիւններ են կազմում: Հոգեկան ոչ մէկ շրջանն այնպէս անգուապ և աղատ չէ, ինչպէս կրօնականը, և որովհետեւ կրօնքը մտածողութեան նորոգելովը, նոր նոր փորձառութեամբն ու ու ըմբռնողութիւններովը անդադար մնունդ և զարկ է ստանում, ուստի և նա ոչ միայն միշտ աւելի խոր հաստատվում և կազմակերպվում է, այլ և վերին աստիճան ընդունակ է դառնում անպիսի նոր երեակայական և գաղափարական աշխարհ ձևացնել, որ կեանքի և բախտի չարաբատիկ, միտքը պղտորիչ, հանգամանքներով չի խախտվում, այլ նոցած դէմ աւելի հզօրացած հանդէս է դուրս գալիս: Եւ եթէ կրօնքը իւրաքանչիւր անձի մէջ հաղար տեսակ առանձին անհատական կերպ է ստանում, այս կախուած է նորանից, որ մարդկային զարգացման միւս հանգամանքների մէջ նա աւելի գերազանցում է, կեանքի մէջ նա աւելի նշանակութիւն, իշխանութիւն և գործադրութիւն ունի: Ամենայն մարդ չէ անպատճառ գիտնական, կամ հանճարարուեստ և կամ սոսկ արհեստաւոր, և ոչ էլ իւրաքանչիւրը դոցանից իր ընկերի մասնաւոր գործքի լծակից է. բայց ամենայն ոք կարող է կրօնք ունենալ, և կրօնքի լինելութիւնը մի իրողութիւն և կանոն է: Սակայն իւրաքանչիւրն ունի մի ուրիշ, իր սեպհական կրօնք, մինչև անգամ մի և նոյն դաւանութեան անձինք աղատ չեն իրանց անհատական փորձառութեան և հոգեկան գործողութեանց առանձին և որիշ աղղեցութիւններից: Ուստի և Աստուած, ինչպէս մի բանաստեղծ ասում է, «իւրաքանչիւրի համար մի այլ աստուածէ», Մանուկը, արիահասակը, ծերը, միանձնականը, ընտանեաց հայրը, ուկը, սումնականը, զինուորականը, բանաստեղծը, արհեստաւորը,

աղքատը, հպատակառը, որբը, վախկոսը, անզօրը, վշտացածը, յուսացածը, երջանիկը, առաքինին, մողաւորը, ապաշխարողը, գոհացողը, մեռնողը,—սոքա ամենքը ամենայն բան դանում էն մի աստուածութեան մէջ։ Բայց իւրաքանչիւրը իր առանձին գաղափար ունի, առանձին ակնկալութիւն, առանձին զգացմունք, մէկ խօսքով առանձին անհատականութիւն, որ իր կրօնքի կաղմակերպողն է։ Ո՞վ է կարող այն ամենայն մաքերը, յոյսերը, փափազները, ձգտողութիւնները, սրտի միտումները և զգացմունքները մի առ մի թուել, որ երկրից երկինք են վեր առաքվում և երկնքից երկիր են վար բերսում։

§ 33. «ինչպէս մէկն է, այնպէս է և նորա Աստուածը»—
ասում է բանաստեղծը. մարդս իր պատկերով է պատկերաց-
նում իր աստուածութիւնը: Ինչ որ իր մէջ արդէն զարգացրել
է, ինչ որ ինքնապիտակցութեան մէջ գոյացած է գանում, այն
միայն կարող է նորա համար մի կապ դառնալ, որ զգայական
աշխարհը գերզգայականի հետ շաղկապէ. ինչ աստիճանով որ
մէկը աղնուանում է, այն չափով ևս աղնուանում են նորա
պատկերացումները, զգացմունքներն ու ձգտողութիւնները:
Ինչպէս որ մարդուս զարգացման առանձին հանգամանքներն
են, այնպէս կլինի և նորա ընդհանուր զարգացումը. ինչ աստի-
ճանի որ նորա մտքերը հասունացել են մտաւոր, բարոյական և
էսթէտիքական կողմից, ան աստիճանով լինքն էլ հասունա-
նում է: Ուստի և մարդու տարրական զարգացման աստիճա-
նով նորա կրօնքն ևս աւելի զգայական կամ հոգեկան, անբա-
րյական կամ բարյական, աճ ու դող սաստող կամ խըն-
դութիւն ու վստահութիւն աղդող դրոշմ կը ստանայ: Սորա
ապացուցն է մեր ամենօրեւայ փորձը և գիտողութիւնը, ինչպէս
և պատմութիւնը: Ինչպէս որ մարդուս շրջահայեցը ընդար-
ձակեցաւ, այնպէս էլ ընդարձակեցաւ նորա զաղափարը Աս-
տուծոյ մասին: Սակայն հազար տարիներ անցան, մինչև որ
առանձին մարդկանց, առանձին ընտանիքների, առանձին ցե-
ղերի ու ժողովուրդների աստուածները նսեմացան հա-
մօրէն մարդկայն ազգի և ամբողջ տիեզերքի Աստուծոյ
առաջ: Որովհեան միայն քրիստոնէութեան մէջ գտնում

Ենք բարձրագոյն հակի աներկրայելի միտթիւնը։ Եւ մինչև որ
բոլոր տեսական, գործնական և էսթէտիֆական հայեացքը
քնութեան և մարդու մասին դեռ սահմանափակ և աւելի զգա-
յական էր, — ամենամնջ բարիքը արտաքին մարմնական բա-
րիքն էր, և մարդիկ դեռ փորձ չունեին, թէ մի հանրական բա-
նականութիւն և եօալկանութիւնից աղատ բարոյականութիւն
կայ, ուստի և Աստուծուց ակնկալում էին միայն երկրաւոր
բաներ, և նորան ևո պատկերացնում էին որպէս մի զգայա-
կան էակ ստոր մարդկայն բնաւորութեամբ։ Մարդը փոր-
ձում էր նորան տալ և զրկել, օժանդակել և թշնամացնել,
բարութիւն և չարութիւն անել նորա հետ մրցել նորան յիշեց-
նել, ուսուցանել խրատել, մէկ խօսքով զբեթէ նորան հաւա-
սար լինել, Ոչ միայն աւելի հեթանոս ազգերի մէջ տեսնում
ենք այսպիսի անհաս կրօնք, այլ և զոր օրինակ Յակոբի պատ-
մութեան մէջ (Համեմատիր Գրք, ծննդ. ի՛լ, 20—22, լ՛ի, 24, և
այլն)։ — Մինչև անգամ սաղմոներում շատ անգամ Ամենագէ-
տի համար մանրամասն բացատրուած է մարդու թչուառ վի-
ճակը, խորայէլցոց պաշտօնի անկումը, և այլն. յետոյ վրէժ-
ինդրութեան է կանչվում Նա և ազդարարութիւն ստանում թէ
ինչ պատուհասով պատուհասէ, Ամենագէտին, ինչակ մէկ մո-
ռացող մարդուն, շատ անգամ լիշեցնում են հին ժամանակներն
ու հին ուխտը. Նորանից պահանջում են, որ անսատուածներին
և անհաւասներին չարաշար կրօնանէ, և մինչև անգամ այս
թոյլ արարած մարդը համարձակվում է ամենաբարի Անսահ-
մանին նախատել Նորա իմաստուն համբերութեան և երկայ-
նամտութեան համար բանաստեղծի ասելով, Քարեկամ, տես
մարդու անմտութիւնը, որ Աստծուն հաւասարեցնում է իր
քնութեան։

Մարդկային ազգը ի սկզբանէ անտի բանական չէ: Բանականութիւնը, այն է հոգւոյ բարձրագոյն և ազնուական զարգացման հաւաքական ոյժը, ամենամաքուր զգացումները, ծըգտողութիւններն ու գաղափարները, միշտ միխան բոլոր ժամանակների և ազգերի իմաստնագոյնների արտադրութիւնն է: Իւրաքանչիւր նոր սերունդը իր նախորդ սերունդի ուսի վրայ է

կանգնում, ուստի կրօնքն ևս պատմութեան դաւակ է: Բայց ամենայն սերունդ ունի իր ընտրեալներ և իր ամբոխը: Մարդը ո նախ պէտք է ազնուանայ, որ նորա կրօնքն էլ ազնուանայ: Երբ որ Արքար թալաւորը իր ցաւերից բժշկուեցաւ և իր վաղեմի պաշտած կռքերի անզօրութիւնը տեսաւ, միայն այն ժամանակ թողեց իր մոլար հաւատքը և մաքուր համոզմունքների ընդունակ դառաւ, Երբ որ Բահալը թողեց, որ նորա սեղանը փշուի և էլ չկարողացաւ իւր սպասաւորներին ոչինչ պատախան տալ, մարդիկ ճանաչեցին թէ նա մի ոչնչական կուռք է (Դատ. Զ, 31. Նըրորդ թագ. ԺԸ, 20): — Եւ վերջապէս մինչև որ մարդիկ մարմնական հաճոյքը մեծագոյն բարութիւն էին համարում, իրանց չար մտազրութիւնների համար վերին օգնութիւն էին ցանկանում, սուստ բարոյական գաղափարներ և չար գերի երկիւղ ունեին, — պէտք է որ անբարոյական աստուածութիւններն էլ պաշտէին: Եւ այս մենք տեսնում ենք ոչ միայն հեթանոս աղդերի մէջ, այլ և այն մտքերը, որ Յակոբը իր խարդախ բնաւորութեամբ Աստուծուն էր վերաբերում, ինչ ասել կ'ուղէ որ Ամենասրբութեան գաղափարին բոլորովին խորթ են. և Խարայելացոց կրօնքի մէջ անկասկած մի քանի անբարոյական տարրեր սպողել են:

Հին Յոյների կրօնքը թէ և հեթանոսական, բայց ազնուածոյն է հեթանոսութեան մէջ. նա արդէն բաւական բարձր է կանգնած ամենայն տեսակ զգայական, եսական և անբարոյական գաղափարներից, եթէ աչքի առաջն ունենանք նոցա այն գաղափարը, թէ մարդու ծիրքերը և հոգեկան գեղեցկութիւնները զթաւէր աստուածների պարզեներ են, և թէ սոցա մէջն է բարձր բանականութիւնն և բարութիւնը, Բայց ամենայն կողմից կատարելագոյն կրօնքը քրիստոնէականն է. Սորա մէջ վսեմ արմատները շատ գերազանցում են. սա բացէ ի բաց բարոյական է. ամենայն միջոց է տալիս մարդուն, որ լաւանայ, բարութեան մէջ հաստատուի, զօրանայ և Ամենասուրբի ճշմարիտ վունութիւնը ճանաչէ և պաշտէ. Այս կրօնքը չունի միայն այս ինչ ընտանիքի, ցեղի կամ աղջի Աստուած, ոչ էլ մի ընտրեալ ժողովուրդ, այլ միայն մի Աստուած, որ բոլոր աշ-

խարհի խնամատարն է, որ մի չայր է մարդկային համօրէն ազգի և առաջնորդում է սորան, որ իր հետ միանալով, որդեգրուի և իրար հետ միանալով ընկերական սէր ունենալու Ոչ թէ երկիւղը, որ քաղաքական բռնութեան և ստրկութեան ազգեցութեամբ շատ անզամ կրօնական բռնութիւն և սպիլութիւն ես յառաջացրել է, այլ մէրն է քրիստոնէական կրօնքի բռն նշանակը:

§ 34. Այսպէս ուրիմի պատմութեան մէջ ուր որ նայենք, ամենայն տեղ կը գտնինք մարդու մի տեսակ կապակցութիւն և հաղորդացութիւն գերբնական աշխարհի հետ: Եւ ամենայն կրօնքի էական գաղափարը այս է, նա է միաւորութիւն մարդու և աստուածութիւն մէջ, կամ մեր հոգեկան զարդացման (պատկերացումների, զգացմունքների, ձգողութիւնների) բոլոր այն մասը, որ վերաբերում է գերմարդկարին և գերբնական հանգամանքներին, և որ մարդկային հոգեկան ու արտաքին կենակցութեանը մի աստուածային և ոչ երկրաւոր խորհուրդ ունպատակ է տալիս:

Յէպէտ պէտք է ընդունենք, թէ մարդկային ազգը, ինչ պէս և ամենայն բանով նոյնպէս և ընդհանրապէս կրօնքով անդադար կառարելազորդվում է, բայց նորա ստէպ ստէպ յետագիմութիւն բազմաթիւ օրինակները յայանի են և չպէտք է հերքենք, ինչպէս որ իմաստնագոյն և ազնուածոյն մարդիկ իրանց ժամանակի և աղջի մէջ դաւանած կրօնքի այն մասունքներից միշտ և հանապազ բարձր են հանապազ զիսացել, որ զգայական, սահմանափակ և անբարոյական զրոյմ են ունեցել, այնպէս և ընդհակառակ առանձին մարդիկ և ամբողջ բազմութիւնք շատ անզամ խորշել և ուրացել են արդէն կազմուած աւելի մաքուր կրօնական համոզմունքներից, զգացմունքներից և ձգառութիւններից և յառաջադիմութեան ընթացքը երբեմն երբեմն և մասամբ ընդհատել են իրանց յետապիմութեամբ: Չոր օր, նահապետական կրօնքի մէջ թէպէտ և մեր արդի զաղափարներով վերին աստիճան պարզ միամտութիւն է իշխում, — այնու ամենայնիւ մենք գտնում

ենք՝ մանաւանդ Աբրահամի մէջ՝ այնպիսի բերկրալից աստուածպաշտութիւն և այնպիսի հաստատ և անձնուեր հաւատ, որ նորա պատկերը այժմ էլ իմաստնագոյն մարդուն վերին աստիճան ազնիւ և սիրելի պէտք է թուի, Բայց ինչ ենք տեսնում այս պատկառելի նահապետի մերձաւոր յաջորդների և մինչև անդամ ամբողջ Խարայէլի մեծագոյն բասի մէջ։—Որքան որ Մովսէսն աշխատեց իր ազգը պահպանել մի Աստուծոյ հաւատով, թէպէտ և լոկ միայն «Խօրայէլի Աստուծով», — այնու ամենայնիւ այդ ժողովուրիլը յետոյ բաղմից նևխուեցաւ հին անձաշակ կրապաշտութեան մէջ և, մարդարէների եռանդուն իմաստքին հակառակ, միշտ երկու կողմն էր կապում (Արրորդ թագ. Ճ. 21): Սակայն ոչ մէկ տեղ այնպէս զգալի անկումն վերագոյն զազափարից դէպի ստորագոյնը չենք տեսնում, ինչպէս քրիստոնէական կրօնքի պատմութեան մէջ։ Շատ շուտով նկատուեցաւ հոդով և ճշմարտութեամբ աղօթելու տեղ լոկ միայն սպանեցուցիչ ձեռապաշտութիւն, ուր սիրտն էլ ոչինչ մասն չունի. քրիստոնէութեան զոդի մէջ նորից աճեցաւ բաղմաստուածութիւնն ու կրապաշտութիւնը, մարդիկ իրանց երեսը դարձրին ամենավսեմ վարդապետութիւնը կամ նոյնը դաւադրութեամբ կեղծեցին. նոքախաղաղութեան աւետարանը ծաղրեցին արեան դատաստանով և հաւատագննութեամբ, աստուածային խօսքը ծուռութիւնն ու սատանայական մեքենայութիւնը արդարացնելու համար։

Այսպիսի յետադիմութիւնները այժմ մեղ համար անլուծելի խորհուրդներ չեն։ Նոքա հնարաւոր էին և են, երբ սրտերի մէջ այն էր պակասում և պակասում է, որը որ կրօնքի համար կարող է միայն բուն արմատ լինել։ Զըմոռանանք որ այս հանգամանքում այն իրողութիւնն էլ զործակից է եղել. որ աշխարհը, ինչպէս ամենայն բանում, այնպէս էլ փարիսականութեամբ և հոգու միուլութէամբ, օգտակար հաւատութեամբ, պատկանութեամբ, կեղծապատիր սրբութեամբ և վաճառական ծառայականութեամբ ես միշտ յառաջադէմ քայլեր է արել. այնպէս որ ենց մեր ժամանակներում և ամենաքաղաքակիրթ աղգերի մէջ անդամ, ուր բացի այն որ կեանքի ձնչողութիւնն և

մոլորեցուցիչ անդրադարձութիւնը շատ անգամ սրտերը սառեցնում է, մարդուս կրօնական զարգացման վրայ, շատ նաև տող հանգամանքների հետ՝ նաև շատ խանգարիչ և վարակիչ հանգամանքներ են ներգործում։

§ 35. Ամբողջ բազմութիւնների այս ակամայ յետաղիմութիւններին շատ նպաստում է առանձին մարդիկների տեսակ տեսակ մոլորութիւնները։ Մեր բոլոր կրօնական համոզմունքները զուրկ են ակնյանդիման համոզեցուցիչ ստուգութիւնից, նոքա միշտ եղել են և կլինին միայն հաւատք և նախաղգածութիւնն, ուստի և դիւրաւ կարող են թուլանալ երկմտութեան և տարակութեան սերմով։ Որպէսետև ձմարտութեամբ պէտք է խոստովանենք, որ միր փորձառութեան և զիստութեան մէջ մէկ կողմից, և աստուածային սիրոյ, իմաստութեան, սրբութեան և արդարութեան մասին գաղափարների մէջ միւս կողմից—մեծ անհուն կայ։ Յրբ որ անթիւ պայծառ օրինակներ ենք տեսնում, թէ ինչպէս տնհամեմատ կերպով է բաժանուած մարդկանց մէջ առաքինութիւնն ու բախտաւորութիւնը, միթէ սիէտք է զարմանանք, որ երբեմն նաև զօրեղագոյն հաւատը՝ գոնէ ժամանակաւորապէս՝ տկարանում և մոլորում է։ Ոտէպ կրկնուող դառը փորձերը, ուր անմեղութիւնը յաղթայարփում է նենգութեան ճիշճներով, քանիսին կարողացել են ստիպել, որ յուսանատութեամբ աղաղակեն. «Երկնային Նախախնամութիւն, փրկիր, ոչ փրկիր իմ տկարացող հաւատը»—ինչպէս բանաստեղծը իր մէկ հերոսին այս ասել է տալիս. Մարդկութեան մէջ իրօք տարածուած պէտքէս թուլութիւնները և բարոյական ապականութիւնները արդարե կարող են թուլացնել Աստուծոյ գոյութեան մասին համոզմունքը. Սակայն այսպիսի հանգամանքներում չեն պակասում նաև այնպիսի հանգամանքներ, որ տկարացած կրօնապաշտութիւնը զիռ էլի կացուցանում է։ Մանաւանդ էօթէտիքական աշխարհայեցողութիւնը, որ ստուգիւ գանում է մի գերախարհային, անսահման գթառատ և վեհագոյն էակի ներգործութիւնները նոյնպէս ևս հանդիսաւ և բաղմակողմանի կերպով խորհած տեսական խորհրդածութիւնները, որ նա և ամենախը-

ճճռած իրողութիւնը լուսաբանում է Աստուծոյ և անմահութեան գաղափարներով,—ահա այս հանգամանքները միշտ կրօնքի տկարանալու առաջն են առնում, և չեն թողնում, որ միշտ միատեսակ նիւթեական կեանքի ճնշման տակ և միակողմանի խմաստակութեամբ՝ հաւատի աղբեւրները նուազին։ Բացէ ի բաց ամենայն համոզմունքով արտայատած աւտուածութեամբ առաջ առաջ ութիւնը (աեսական աթէլում), կարող է գրյանալ միայն սահմանափակ հայեազրի աղղեցութեամբ և շտապովի դատողութեամբ։ Որովհետեւ եթէ մեր բոլոր ասածը աչքիր առաջ ունենանք, գոնէ այսքան ամենայն հաստատութեամբ ամենայն մարդ մեզ հետ պէտք է ասէ, թէ անհնարին է որ և իցէ ապացոյց հանդէս հանել Աստուծոյ չգոյութեամն համար։ Եւ եթէ մենք ևս այնքան մեծամիտ չնը լինի հաստատելով, թէ հակառակը արդէն ապացուցած կամ ապացուցանելի է, այս բառի խիստ նշանակութեամբ, —սակայն մենք անշուշտ համոզուեցանք, թէ որքան ամուր են մեր կրօնական հաւատոյ նեցուկները մեր հոգու մէջ։ Իսկ եթէ մեզ շատ սնդամ սրատահում է աստուածուրացութեան լոկ արտաքին դիմակը, այս ծագում է մեծաւ մասամբ նորանից, որ մի փիլիսոփայի ասելով «միշտ եղել են և անպակաս կիմին այսպիսի ունայնասէր մարդիկ, որոնք մեծ պարձանք են համարում երկմտողի» (մեֆիստոֆելիսի) դեր խաղալն։ Բայց և այն հանգամանքները չը մոռանանք, թէ ոմանք բոլոր սրտով ց անկանում են, որ ոչ Աստուած և ոչ անմահութիւն լինի։ Զարագործը սարսափում է այս մտքերից։ Որովհետեւ խճմտանքը նրան ասում է, թէ նա վերին գատասատանում ոչնչով չի արդարանաց, Ահա այսպէս ճիգ է թափվում, որ կրօնական հաւատոյ դէմ ամենայն տեսակ ապացոյց գտնուի, և երկմտութեան ախտասիրութիւնը հայտած է գոյներով։ Հետո կարող է աղղեցութեամբ աղղակը վիճակը գոյներով նկարագրել է հոգեկան այսպիսի վիճակը Ֆրանց Մօօրի անձնաւորութեան մէջ («Աւազակներ»), որ մեր թատերական բեմից ևս շատերին անյայտ չէ։ Այս մարդու մէջ հաւատը սարսափելի կերպով բաղխում է չար խիզը, բայց նա էլ կարողաւթիւն չունի Աստուծոյ և անմահութեան մասին

ինչ և իցէ լսել ուստի և իր բոլոր հնարագիտութիւնը մինչի ծայրը թափում է, որ հանդերձեալ կեանքի գոյութիւնը ուրանաց։ Բոլորովին ուրիշ տեսակ, բայց նոյնպէս վնասակար մուղրութիւններ կարող են գոյանալ, եթէ եսթէ տիքական և գործնական աղբիւներից աշխոյժ և լարուած կրօնական հետաքրքրութիւն է շարժվում, բայց իրա համեմատ տեսական նեցուկներ չէ գտնում բաւական կերպով, այնպէս որ մտքի անդպրութիւնը պակասաւոր է մնում։ Միայն այս պայմաններով խորհրդաւոր է կանք և առաջ անդպրութիւնը (միտիցիկմ)։ Կարող է գոյանալ, որ սոսկ մտացածին ու երեւակայական պատուղները ստոյդ ճշմարտութեամբ է ընդունում և կարծում է, թէ շատ յարմարում է այն բանին, ինչ որ խոնդ սրտի վկայութեամբ անդին ու հածելի է։ Երեակայական երազները համարիւմ են որպէս Սուրբ Հոգույ աղղեցութիւններ և զթառատ չնորհներ։ Իսկ ով ով կարծում է թէ այնպիսի չնորհներին արժանացել է, շատ հեշտ կիսարուի այն մտքով, թէ ինքը աւելի ընտիր և լաւ, միանգամայն և սուրբ, անօթ է, քան միւս մահկանացուները։ Եթէ այս հաւատը միամիտ անկեղծ է, այն ժամանակ նա դառնում է տեսաւոր ութիւն և մուգ ու անդ ութիւն։ Զգացմունքի քաղցր օրօններ, յափշտակուած ձգտողութիւններ և հրաշալի չնորհներ կենդանացնում են հոգույ ներքին գոյութիւնը։ այս տեղից կարող են ծագել գործնական կեանքի մէջ տեսակ տեսակ անբացատրելի տարօինակ գործքեր և խելացնոր վարմունք, մինչև անգամ շատ անգամ մարդը, որպէս դի այս մեղաւոր աշխարհի տառապանքներից բոլորովին աղատուի և վերին կեանքի արժանի գառնայ, ինքն իրան նահատակում է, կամ սպանում է նա և իր սիրելի որդոց, որ չուտով Աստուծոյ հրեշտակներ դառնան։

§ 36. Բայց շատ անգամ մեր տեսած աստուածպաշտութիւնը լոկ միայն կեղծաւոր ութիւն է, ինչպէս փորձով գիտենք, կրօնափոխութիւնը երբեմն հանդերձափոխութեան պէս մի նորաձեռութիւն է դառնում, հաց և յաջողութիւն ստա-

համու համար, կամ կրօնքը՝ չարովթիւնը վարագութելու համար է դործածվում: Յանուն կրօնքի մահացու մեղքը առաջինութիւն է դառնում, օճաւիրու հրեշտականման է հռչակվում, «Աստուծոյ սիրոյն և փառքի» համար սպանութիւններ են կատարվում, Աստուած նենգաւարի աղօթքը լսում է և սորա ատած մարդուն պատուհասում է:

Բայց երբեմն ոմանք ճշմարիտ համոզուած են, թէ Աստուած նոցա կարծածի պէս է շարժվում, և այդ արդէն ոչ թէ կեղծաւորութիւն է, այլ նախապահած արմունք: Նախապաշարմունքը գոյանում է բարոյական և մտաւորական կոպութիւնից, այն է տղիտութիւնից և անզարդացնութիւնից, այն ինչ մարդկանց մաքուր սուրբ հաւատը կամաւ ի չար գործածեն և կեղծ սրբութիւնը մի բարոյապէս նեխուածի, չարագիտի և փուչ զարգացածի նշանակն է, որ իր բոլոր խելքը գարշելի գործին է ծառայեցնում: Նախապաշարմունքը շատ տեսակ է, բայց միշտ սոսակ մարդկային բնական բաներին՝ գերբնական նշանակութիւն է տալիս և այնպիսի բաներին է հաւատում, որ չկայ: Նա ուրեմն նման է խորհրդաւորական նրբաքննութեան, այն զանազանութեամբ միայն, որ այս վերջինը ներքին փորձերից և տպաւորութիւններից է ծագում, նախապաշարմունքը կապվում է արտաքին աշխարհի հետ: Երկնային երեսովներն ել այնպէս չեն ընդունվում, ինչ որ նորա են, այլ որպէս Աստուծոյ կամաւոր գուշակութիւններ և նշաններ մարդկանց բան ազդելու համար. կոքի պէս և նիւթապէս պաշտած պատկերները իբրև թէ արցունք են թափում և Աստուծոյ անօրէնութիւնները փոխում են. դժոխանոգու աղօթքին և նորա լարած որոգայթներին Աստուած լսում և յաջողութիւն է յարդարում. ամեն բանի մէջ գերբնական նշան են տեսնում, հաւատում են մեռեալների վերսակին գալստեան, նոյսա նոր հայրենիքից ուղարկած լուրերին, հմայութեան, անէծքին, աչք տալուն, փալ բաց անելուն, ջադոներին, զրողի խփածին: Եւ մարդկային աղքի կրօնական զարդացման ամբողջ պատմութիւնը մեզ աւելի նախապաշարմունք և թերահաւատութիւն է ցոյց աալիս, քան մաքուր

հաւատ: Առաջուայ կռապաշտութիւնը և զոհապաշտութիւնը նախապաշարմունք էր, բայց և քրիստոնէութեան գողի մէջ նոյն նախապաշարմունք է՝ հոռած մասունքը, տախտակէ պատկերի պաշտելլ, թողութեան թուղթը, Քրիստոսի իշոյ ծ ուր, և այլն: Այսպիսի նախապաշարմունքների բաւական աղբիւրը էսթէտիկական հայեացքն է, որ ամենայն բանի մէջ գերբնականութիւն է տեսնում, եթէ պայծառ գաղափարներով և խոհուն մտածողութեամբ կարգի ու սահմանի մէջ չի պահպում: Եթէ երեսակայութիւնը անդուսպ է՝ ի հարկէ կարող են բազմաթիւ գաղափարներ կազմուել բարի և չար ոգիների, հրեշտակաների, սատանաների և ուրիշ այսպիսի բաների մասին: Սորա հետ կցվում է նաև ժողովրդի երեսակայութեան բանաստեղծութիւնը, որ ամենայն բան չափազանցութեամբ զարդարում է, նոր նոր բաներ է հիւսում և բերանէ բերան ծաւալում է. մարդկային և բնութեան ծանօթութեան պակասութեամբ աւելի յաջողվում է թերահաւատութիւնն ու հրաշամօւթիւնը. ծուռը դաստիարակութեամբ անձոռնի մոքեր ժառանգվում են պասարից թոռներին, վերջապէս մարդուս շահապիրութիւնը արհեստ է շնորհ փակել ժողովրդեան աչքը և նորա ականջին ամենայն տեսակ ափեղցիեղ բաներ շնջալ: Ով որ այս մասին մանրամասն տեղեկութիւններ կամենում է Ով որ այս մասին մանրամասն տեղեկութիւնների յաղագս պապին և ժողովոյնորա ունենալ թող կարդայցանոսի յաղագս պապին և ժողովոյնորա թարգմանութիւն գաբր. Այբեկ. Այվազեանի, ուր ամենայն թարգմանութիւն է անդառակութիւններ են լուսաւորեալ ժամանակերես մի իմայտառակութիւններ իմանակներին ինչ խայտառակ ների համար: Թէ նորագոյն ժամանակներին ինչ խայտառակ ների համար: Գործուել, բաւական է յիշել այն վաճառականութիւններ է գործուել, բաւական է յիշել այն գերկնային նամակը, որը հաւատացնում էին իրը թէ Քրիստոս ինքը իր ձեռքով զբել է, որ Աստուծոյ անունը արատաւորող, ամենասարսափելի մեղքերի և յանցանքների թողութեան թուղթն է, և վայել է որ ամենայն աւազակ, մարդասպան և ոճագործ որպէս հմայութիւն կուրծքի վրայ կախ տայ, և որ այնքան թուով գնուեցաւ և գործա ծուեցաւ: Որովհետև նա աւետում է. «Ով որ այս նամակը իր տան մէջ ունի, նորան ևս (Քրիստոս) պաշտպանում եմ, որ ոչ կայծակ և ոչ հուր

ամսզամ չվնառէ, Եւ ով որ այնքան մեղք է գործել, որքան աւազ կայ ծովի մէջ, տերե ու խոտ երկրի վրայ և աստղեր երկնաքում, եթէ խոստովասում, ապաշխարում և ցաւում է իր մեղքերի վրայ, նորան թողովթիւն ևմ տալիսա—ի հարկէ մարդու մեղքերը այսպէս չի թեթեացնում հասարակ, ծողովդատկան, աւելի բնականապէս ծագած և միամիտ նախապաշարմունքը, Նա իսկապէս աւելի երկոտ, սարսափահար, ճնշուած բնաւորովթիւն ունի, մթութեան պատող և խաւար հոգւոյ ծնունդ և, Եւ երբեմն նա կարող է այնպէս իշխել և ընդարձակ անդ բանել դժակովթեան մէջ, որ կարող է կատարեալ կրօնական խելացն որ ութիւն պատճառել մարդուն, որը որ ամենայն իր խարէ ական ցնորդը սասոյդ իրականութիւն է ընդունում և աշխարհի հետ ճշմարիտ կապը իսպառ կորցնում է, Արդեօք հարկաւոր է օրինակներ բերել, թէ ինչպէս երբեմն մարդ անդադար ափեղցինդ մաքերով զրադուելով հետզհետէ այնպիսի և այնքան անսունի զազափարներ է կազմում սատանաների, դեելի, հրեշտակների, աստուածային յայսնութեան, դժոխքի և ուրիշ բաների վրայ, որ բոլորովն չփոթվում է նորա խելքը—երբեմն ինքն իրան Յիսուս, Քրիստոս կարծելով կամինում է կորի աշքը բանալ, երբեմն քրիչի հետ խօսելու և խաղալիս է լինում, երբեմն երկնի և երկրի մէջ եղած տարածութեան վրայ թափառում է, դժոխքը բաց է տեսնում և այն. վերջապէս անտառի մէջ մի փայտ կարողին տևանելով, նորա ճակատին պողեր է նկատում, և նորան գոռնարադ կամ սատսնայ համարելով ձեռքից կացինն առնում և նորա դլուխն է ճղում:

§ 37. Այսպիսի կրօնական չփոթութեանց աւաջն առնելու համար միակ հնարն է ճշմարիտ լուսաւորովթիւն, ինքնակախ մոածողութեան համար առաջնորդութիւն, և վերջապէս մանաւանդ մաքուր բարյականութեան աղեցովթիւն, Ով որ չէ մտածում և բարյական օրէնքները չէ ըմբռնել, նա ընդունակ է Աստուծոյ և գերբականութեան մասին ամենանմիտ աղափարներ կաղմել, Եւ եթէ մարդս մի անզամ իր կրօնական զարգացումը ծուռ ճանապարհով է տարել, այնուհետեւ

շատ դժուար է նորան թժկել, Նախապաշարմունքը, որի մէջ որ մենք մնածացել ենք, իր իշխանութիւնը մեր վրայ այն ժամանակ էլ չի կորցնում, երբ որ մենք նորան արժանապէ՛, ճանաչեցինք. Եւ թող ոչ ոք չպարծենայ, թէ ինքը նախապաշարմունքից բոլորովին ազատ է, ով որ նորա լուծը ծաղրում է, ինչ որ հոգու մէջ մի անզամ պիտու նստեց, այն տեղից էլ չի կարող հանուիլ, հոգու համար դանակ չկայ, որ աւելորդը կարենք, դուքը ծգենք: Մոլար զազափարները թէպէտ կարող են ճշմարիտ զազափարներով լուսաւորուել և իրանց վարկը կորցնել, սակայն յիշողութեան մէջ զեռ էլի մնում են: Երբեմն հին նսեմացածը էլի կարող է, գոնէ ժամանակաւորապէս, վերստին իշխանութիւն ստանալ զիտակցութեան մէջ, չոգու մէջ մինչև անզամ որոշեալ աստիճանով ամենաներհակ բաները իրար կշտին կարող են տեղ բանել, Եւ որովհետեւ, ինչպէս մենք զիտենք, կրօնական զարգացումը զանգան պատճառներից յառաջանալ կարող է ուստի և համկանալի է մեղ համար, թէ ինչու մի և նոյն մարդու մէջ զանազան կերպ խառնուած են կատարեալ և անկատար կրօնական զազափարները, Շատ անզամ մեղ պատահում են խօսքով աստուածուրացներ, գործով և որավ աստուածանզատներ, և ընդհակառակ, կան և այսպիսի մարդիկ, որ անդադար հաւատով երերպւմ և տատանվում են, երբեմն փթած կղերամօլից աղատամիտ զանալով, երբեմն աղատամիտ կղերամօլ փոխուելով: Այս գոյցէ շատ անզամ անազնի շարժառիթներից է պատահում, բայց և համախ հոգուոյ ներքին վիճակից է գոյանում: Ուրեմն ցանկալի է, որ իւրաքանչիւր անհատի մէջ կրօնական զարգացումը բազմական իւնի, թէ էսթէտիքական, թէ գործնական և թէ տեսական կողմից, որ ամենայն կողմից ներդրութիւնը անպակաս լինի, հաւասարակշութիւններ և ներգանակութիւն գոյացնեն:

§ 38. Արդ մի անզամ ևս ամփոփելով յիշատակենց մեր ձեռք բերած կրօնական այն համոզմունքները, որոնց միակողմանի զարգանալով վերցիւեալ չփոթութիւններ կարող են գոյանալ: — Կախ մենք համար ամփոփելու անդադար է մահից յետոյ

և մարդու հոգին իր լիակատար անձնաւորութիւնը պահպանում է։ Այս մասին մենք ել կարեորութիւն չունիք ինչ և իցէ աւելացնելու մեր վերը ասածներին։ Մեր հաւատող միւս գլխաւոր առարկան—աստուածութիւնն է։ Սա է մը միայն, ճշմարիտ, անձնաւորկան, հոգեկան և գերնական էակ, և ոչ տիեզերքի նոյն ամբողջութիւն, կամ թէ աշխարհքի մէջ եղած անդիտակցական բնական զօրութեանց և բնական օրէնքների գումարը, կամ մարդու մէջ եղած ինքնազիտակցութիւնն ու տեսական գիտութիւնը, կամ տիեզերական պատմութեան։ Մէջ գործող անգիտակցական աշխարհային ոգին, կամ բարոյականութեան գումարը, կամ հաւատացեալների ժողովի (եկեղեցւոյ) բարի ոգին, ինչպէս որ շատ անդամ փորձել են բացատրել Նորա էութիւնը։ Աստուած է—կամաւ ներգործող արարիչ, պահող և կառավարող աշխարհքի, մշտնջենական, ամենուրեք, հզօրագոյն և իմաստնագոյն, ամենաբաւական, ամենասուրբ, վեր քան մարդկային տկարութիւններ, արդար և ամենաբարի, և իր բոլոր յատկութեամբ կատարեալ և անփոփոխ։ Մենք ուրեմն այնպէս ենք ներկայացնում, որ մեզ ծանօթ բոլոր կատարելութիւնները ամենաբարձր չափով Նորան ենք յատկացնում, որպէս նոցա նախագաղափարին, իսկ ամենայն անկատարելութեանց անմասն ենք համարում Նորան։ Պարզ է, որ մենք աստուածութեան գաղափարը մեր մարդկային պատկերով ենք ձևացնում։ Եւ այս միագը չպէտք է անբարեպաշտ միտք համարուի, որովհետեւ մենք հաւատում ենք, թէ Աստուած մեզ ստեղծեց իր պատկերով, ուրեմն մեր էութիւնը Աստուածոյ էութեան յար և նման է։ Սակայն մեր ամբողջ կրօնական համոզմունքներին չենք կարող ակնյամնդիման (ապօղիկական) ստուգութիւն տալ։ նոքա են և կլինին սոսկ մեր անձնական գաղափարներ, որոյ իրական ճշմարտութեան մասին անհարին է ճշգր զիտութիւն ունենալ։ Աստուածոյ էութիւնը անհասանելի է մեզ։ Նորա ստորոգութեանց, մարդկային հոգւոյ հանգերձեալ կիսաց մասին կատարեալ ստուգութիւն երբէք չենք կարող ստանալ, որովհետեւ մենք հնար չունինք ոչ այն աշխարհքը գնալու, ոչ աստուած դառնալու և ոչ էլ դեռ

մարմնից բաժանուած հոգի ենք դարձել։ Ուրեմն մեր սահմանափակ խելքով չենք կարող որոց գաղափար կազմել Նորա մասին, որ ամենայն ինչ ստեղծեց և հաստատեց։ Ճիճուն չի կարող մարդ, մարդ չի կարող Աստուած ըմբռնել։ Եւ եթէ մենք մեր ամենասիր գաղափարները՝ իրանց ամենաբարձր աստիճանով մտածենք, նոքա ևս դեռ համապատասխան չեն իփնի Աստուածոյ էութեան, միշտ ճշմարիտ կը մնայ բանաստեղծի այս խօսքը, Ավելի մեծ է Աստուած, քան դու, առաքինիդ, քո բարեպաշտութեամբ կարծում ես։—Եւ որովհետեւ մեր կրօնական համոզմանց համար ճիշտ սահմանած բովանդակութիւն և ատոյդ ապացոյց գտնել անհարին է, նոքա հարկաւ պէտք է լոկ նախա զգած ութեան և հաւատոյց, այն է սա հմանափակ գիտութեան ձեւ ունենան, Ավկայն հաւատը մեր անձնական գաղափարներին իրականութիւն է տալիս, դա անձնական համոզեցուցիչ համոզմունք է գերբնական աշխարհի գոյութեան մասին, որ անմիջապէս մեր փորձով ու զիտութեամբ չենք կարողանում ճանաչել ։ Հաւատը իրերի հաստատութիւն և չերենեցած բաների մասին եղած տարակուաի փարատումն (Եբր. ԺԱ, 1)։ Եւ ուրեմն հաւատը բնաւ գիտութեան արգելք չի կարող լինիլ, ընդհակառակ միշտ նորա լրացնողը կը լինի։ Որովհետեւ զոյց երկուսի ասպարէզները խիստ տարբեր և որոշ սահմանով բաժանած են միմեանցից։ ուր զիտութիւնը վերջանում է, սկսվում է հաւատ։ Սիայն հաւատը աւելի առաջ է ընթանում և զիտութեան հետաքրքրութիւնն է շարժում, հաւատով զիտութիւնն էլ յառաջադիմութիւն է անում, ձգտողութիւն է ստանում հաւատեալ տալեայ մթութիւնը՝ որչափ որ դեռ դարձեալ հաւատուր է փարատել, առանց հաւատի զիտութիւնը անշարժ կանգնած է, որովհետեւ նա այլ ևս լուծելու ինդիրներ չ'ունի, ուրեմն ամենապէտ (?) է։

§ 39 Դոյցա սահմանները աւելի բացատրելու համար պէտք է ասել, թէ զիտութեան է պատկանում այն ամենայն, ինչ որ անմիջապէս արտաքին կամ ներքին կողմից մեզ իմանալի է, և ինչ որ իմանալի եղածից մտածողութեամբ եղան-

կացնել կարող ենք, ուրեմն ամենայն զգայական և հոգեբանականը, բոլոր ըմբռնելի երկրառոր հանդամանքները կամ նաև հեռաւոր աշխարի հանդամանքները, որքան որ մեր կացած մոլորակից ճանաչելի են դօքա, խմել հաւատին է պատկանում գերբնական աշխարհը, Ուրեմն միայն այն ժամանակ, երբ որ մէկը կամ միւսը, իր սահմանից դուրս, օտարի սահմանի մէջ է իմաստակում, երբ գիտութիւնը սիրալ և մեծամիտ է, և հաւատը մոլորուած է, ու իշխանաւթեան կրքի մէջ թաթակուած, —միայն այդ ժամանակ վէճ կարող է ծագել դոցա մէջ, Զոր օրինակ շատ անտեղի է, երբ որ սահմանը աշխատում են իր թէ գիտութեան զէնքերով ցոյց տալ, թէ նոքա իրաւունք ունին արդկային ազգի մէջ աստուածային յայտնութեանց (յայտնական) կրօնի հսարաւորութիւնը բոլորովին հերքել Սորա համար ունիչ ապացոյց չըկայ, ուստի և հաւատացոյզը իրաւունք ունի պահանջել, որ իր հսամողունքը ամենայն զօրութեամբ յարգուի, Բայց սա էլ այնքան մեծամիտ չպէտք է լինի, որ ուրիշներին իր հաւատը բռնի ընդունել տայ և անիծէ նորան, Կթէ իւր կամբին հակառակում են: Նոյնը պէտք է ասենք հրաշքների մասին, Ոչ մէկ փիլիսոփայութիւն չի կարողանում ապացոյցանել նորա անհնարութիւնը, այսքան միայն հաստատում են նորա, թէ ամենայն պատահարը իր պատճառը պէտք է ունենայ: Արդ Կթէ մի իրողութիւն քննելիս՝ այս պատճառը բնական հանապարհով չի դանվում, այն ժամանակ հաւատը կարող է գերբնականին դիմել Այսպէս էլ սատանայի գոյութիւնը շատ անգամ վճռահատութեամբ հերքուած է, Բայց ինչ ապացոյց կայ, թէ երբ և իցէ նա չէր կարող լինել, Խակ ով այդ մասին տեղեկութիւն ունի (ասենք աւանդութեամբ) Այս իրաւունքով չի թող տայ, որ իրանից այդ հաւատը խին: Սակայն հաստատել, թէ սատանան կարող է գիտութեան ցընութիւնը քմահաճութեամբ խաղալ և իշխել և մարդու կարող է ամենայն տեսակ անմտութիւն և չարութիւն ներչնչել, —այս պէտք է հոգեբանութիւնը միստէ ամենայն վճռահատութեամբ, որովհետեւ այժմ շատ բաւ յայտնի է, թէ

ինչ օրէնքներով մարդուս հոգու մէջ զաղափարներ են կազմը-վում: Եւ ինչպէս որ պատմութիւնը ուսուցանում է, իսկապէս միշտ այսպիսի ուսումնական վէճներ, հակառակութիւններ են եղել հինու և անոր աշխարհահայեցողութեանց մէջ, որ տգիտութեամբ կրօնի ցընանի մէջ են տնկել: Հետո էլ շատ անդամ ընկերանում է իշխանասիրութեան կիրքը, անձնապաշտութիւնը, փառամիրութիւնը, որ բռնի փորձում է անմիտ կարծիքներին անդամ հիմք և հաստատութիւն տալ, Բայց այդ գէպում ոչ թէ կրօնական, այլ աշխարհական շահերն են ուսումնական շահերին պատերազմ յայտնում: Ընդհակառակ հասկացողը վիտէ, որ հաւատի շահերի համար ցանկալի է գիտութիւնների կատարեալ յառաջազիմութիւնը: Աթէ վերեկ նկարագրութիւնները յաջողուցան, պէտք է ասենք, թէ գիտութիւնները չեն կարող վտանգաւոր լինել կրօնին, Քանի ազատ, անարդի, խոր և բնական կերպով են նոքա ծաղկում, այնքան աւելի նոքա ստիպողական կերպով գերբնականի գէմ յանդիման կանգնուում են և հարկաւ պէտք է ճանաչեն նորան: Եւ եթէ բնական գիտութիւնները երբեմն երբեմն Աստուծուց հեռացրել և էլի հեռացնուում են, այս պատահել և պատահում է նորա արդասիքներ ցափաղանցրութեամբ յափշտակուելով իսկ այս չափաղանցութիւնը այն ժամանակ կ'անդորրանայ, երբ որ հիմնաւոր զիթիւնը և կատարեալ լուսաւորութիւն կը տիրէ մարդուս հոգու մէջ: Արտաքին ընութեան և մարդկային հոգուց խուզարկութիւնը խորտակում է միայն նախապաշտմանք և թեզ զարկութիւնը խորտակում է իշխանասիրութիւնը, իսկ ծշմարիտ հաւատի նեցուկն է նա, Խուզարկուն պէտք է խուզարկէ, ինչ որ քննելի է, այս նորա իրաւունքն է, հաւատացոյզը պէտք է հաւատայ, ինչ որ անքըննելի է, այս էլ սորա իրաւունքն է: Այս իրաւունքները զեղձել կարող է միայն նա, ով չի ճանաչում մարդկային քաղաքակրթութեան սպատակակէտը, որ գիտութեան հետ և անդորրութիւն է տալիս յուզուող մտքին:

V

ՅԱՅՑՆՈԿԱՆ ԵԽ ԴՐԱԿԱՆ ԿՐՈՒՔ:

§ 40. ՄԵԽՔ ԹԵԽԱՆՔ, թէ որ չափով և ինչ կերպով կրօնքը մարդուս բնութեան մէջ դիւրածին է, և ինչ չափով որ այս կրօնքը մարդուս մէջ զարգանում է ինքն ըստ ինքեան և նորա ընդունակութեան չափով, նա կոչվում է բնական կրօնք, որով բնաւ չպէտք է հասկացուի բնութեան երկրպագութիւնը, այսինքն բնութիւնն աստուածացնելը և ոչ էլ բանական կրօնքի հետ նոյնանշան պէտք է համարուի, ինչպէս որ մեր քննութիւններից տեխանք, բնական կրօնքը մարդուս անհատական զարգացման արդիւնք է, մի որ և իցէ կերպարանքով նա նորա անձնական, սերքին սեղճականութիւն և առաջնորդողն է, և ուրեմն բոլորովին ներհակ բան է, քան գրական կրօնքը, Այս վերջինը ընկերական զարգացման արդիւնք է, կազմուած է որոշ դաւանական մասունքներից, որ հաւատացեալների ժողովը (Եկեղեցին) որպէս դաւանութիւն հաստատում և ընդունում է և նորա աւանդապահն է դառնում: Այսողէս ուրեմն ընդհանրապէս աւելի ձևական, քան նիւթեական զանազանութիւն կայ բնական և դրական կրօնքի մէջ: Խակապէս վերջինը հիմնուած է առաջնի վրայ և ծագել է նորանից: Ինչպէս ասացինք մի ազգի մէջ որ և իցէ կերպով դոյացած և ընդունած կրօնական դադախարները, զգացումները, ծէսերը և այլն հետորդներին ամենայն ճշտութեամբ և հաւատարմութեամբ աւան դ գ ո ւ մ են, իսկ սոքա պահպանում կամ թողնում են, աւելի աղնուացնում կամ խանդարում են, իրանց սրտի մէջ հաստատում կամ միայն շրթունքներով են դաւանում: Այս տեղ մեծ դեր է խաղում այն հանգամանքը, թէ արդեօք մարդը իրան աւանդուած դրական կրօնքը հասկանալու և պահպանելու համար ունի բաւական զարգացած իր սեղճական բնական կրօնքը թէ զուրկ է այդ բանից: Որովհետև աւանդուած կրօնքն էլ իր խարիսխը մարդու ընդհանուր զարգացման օրէնքների մէջ պէտք է ունենայ: Բայց որովհետև մարդուս ընդհանուր զարգացումը շատ

անգամ շատ նուազ և չուաքանման ծագում ունի, ուստի և նորա մննդով սնուած դրական կրօնքն էլ ոչ աշխատութիւն և ոչ կենդանութիւն կոննենայ: Եւ փորձը ցոյց է տալիս, թէ շատերը զրկթէ բնաւ չունին ինքնարուխ ճշմարիտ հաւատ, այլ բերանով են յայտնում միայն այն, ինչ որ յարտաքաւատ պատուաստել են իրանց վրայ կամ պատուիրել են դաւանել:

Դրական կրօնք և յայտնական կրօնք նոյն և մի չը պէտք է համարել: Այս վերջինը եթէ մէկ անհատի սեղճականութիւն է՝ հարկաւ: Բոլոր հասարկութեան մէջ մուտք չի զըսնում, որ առնենքը զաւանեն: յայտնի է, որ շատ անգամ մարդկութիւնը իրան չնորուածը չի ընդունում, բայց միւս կողմից ամենայն դրական կրօնքն էլ չի կարող աւատուածային ծագումով պարծենալ և յայտնեալ կրօնք կոչովիլ, այս բառի նեղ և սովորական նշանակութեամբ: Ընդպարծակ մուգով յայտնութիւնս բառը դորձ է ածվում երբ որ կրօնքը մեր նկարազրած կերպով է գոյանում, ուր մարդս իր էսթէտիքական, գործնական և տեխնական զարգացմամբ գերզգայական աշխարհքի մասին հաւասարիք չէ ստանում: Բայց այս ընդհանուր յայտնութիւնը, որ անմիջապէս կրօնքի հիմնադիրների, իսկ սոյց ձեռքով (մի ջնորդութեամբ) մարդկութեանը յայտնի դառած աստուածային լոյս է: Ով որ առաջնի անգամ այս յայտնում է, նորա հետ է միանում ամբոխի բազմութիւնը: Նա ընտրում է առաքեալներ, վարդապետում է նոյսա, որոնք նորա չնշմամբ են գործում: բանաւոր աւանդութիւններն ու գրաւոր յիշատակարանները պահպանվում են և անդադար նորոգող ժողովրդեան մէջ՝ տարածվում են քահանաների, քարոզիչների, և վարդապետների միջնորդութեամբ: կազմվում է մի ժողով հաւատացեալների (Եկեղեցի), ուր այս յայտնութեան կրօնքը արդէն դրական է դառնում: Կրօնական դաւանութիւնների ծագումն ու շրթունակութիւնը հիմնուած է այն հանգամանքի վրայ, որ դաւանակիցների մեծամասնութեան մէջ կրօնքի ընդհանուր մարդկային դիւրածնութիւնը շատ նուազ և թերի կեր-

պովէ կատարվում, ուստի և նորա կարօտութիւն ունին միանալ այն մարդկանց հետ, որ կատարելութեամբ զարգացած իրանց կրօնական համոզմունքներով, զգացմունքներով և ձըգտողութիւններով մեծ բազմութեան բաւականութիւն ևն տալիս: Եւ որովհետեւ աներեսոյթքների մասին կազմուած մեր զարգափարների համար ընդհանրապէս որոշ ապացոյցներ չունինք, և կրօնքի հիմնադիրներն ես առանց այդպիսի ապացուցի իրանց վարդապետութիւնները յայտնում են՝ որպէս լոկ միայն մեր ներքին սեպհական ազգմունքի արդիւնք, ուստի և ամենայն դրական կրօնքի մէջ անդադար իշխում է հեղինակութեան ութեան ոյ ժը. սարդիկ հաւատում և հաւատարիմ են իրանց պաշտոծ նախասահմանող հիմնադրին, ապա առաքեալ ներքին և վերջապէս երէցներին, վարդապետներին և ուսուցիչներին: Այժմ կարող ենք հասկանալ աւանդութեամբ վարդապետած կրօնքի մեծ պատմական նշանակութիւնը, ուր մենք իմացանք, թէ առանձին մարդիկ քանի տեսակ մոլորութեանց ենթարկուած են, և ուրեմն որքան կարօտ են վերին առաջնորդող աստղի և բարութեան անդադար ցուցմունքի, որ նորքա հաւատացեալների ժողովի (եկեղեցւոյ) մէջ են զտնում: Մարդկայն սերունդի ամենայն տեսակ յառաջադիմութիւնները կատարուել են ընկերական միաբանութեամբ և արդէն ձեռք բերած կատարնլութիւնները ժառանգելով: Այսպէս էլ կրօնական զարգացումը, Աւանդապահ կրօնքը կրթողականնշանակութիւն ունի, այսինքն նա մեր կրօնական զարգացումը արագացնում է, նա մեզ յանդիման է կացուցանում, արթնեցնում է մեր մէջ ընդհանուր մարդկային տարերքը, մեզ այն պիսի զարկ է տալիս, առանց որոյ՝ եթէ մենք մեզ թողնուած լինիք՝ շատ ուշ, իսկ ոմանք զուցէ և բնաւ չէին հասնի հարկաւոր զարգացման աստիճանին: Եթէ մեր այս հազար տարիների միջոցին զոր օրինակ Ա. Գրոց ներգործութիւնը պակասէր, մեր այժմեան կրօնական զգացմունքները, զաղափարներն ու ձգտողութիւնները չէին կարող զոյանալ: Ուստի եթէ զրական կրօնքը այսպէս բեղմնաւոր կերպով ազդում է բնական կրօնքի վրայ, այս վերջինն էլ առաջնին անդադար մուցացնում, թար-

մայնում և նորոգում է: Ամենայն մարդէ աւանդում վարդկապետութեան հետ իր ներքին ազդունքն էլ պէտք է բերէ, որպէս զի կարողանայ այն համկանալ, նա պէտք է մեր վերջայոց տուած էնթէտիքական, գործնական և տեսական պաշտրի մի բնական մայրագումարով կենդանացնէ հաւատայ մասունքները, որպէս զի նորա մեռած տառ չմնան և զաւանութիւնը ցշմարէտ բուն հաստատէ: սրտի մէջ: Անա ուրեմն անդադար փոխադարձ ազդեցութիւն է երեսում արդէն պատրաստ զրական կրօնքի և շարունակ նորինորոյ զարգացող բնական կրօնքի մնջ և ոչ թէ զրքա միմնաց հակառակում են: Ընդհանրապէս երկուսն էլ նոյն վախճան և նոյն բովանդակութիւն ունին: Ամենայն զիսութիւն և ամենայն արուեստ աւանդաձը ժառանգում է և նոյնը այնքան ժամանակի է զարգացնում, մինչև որ գերազանց օրինակներ կազմուին, որոնք այնուենեան հետարդիմների համար հասկանալու, պահպանելու և օրինակելու նիւթ են դաւնում: այսպէս են և կրօնական հանգամանքները:

§ 41. Արդէն յայտնի է, թէ ինչու շատ զրական կրօնքներ կան՝ հեթանոսական, մոխիսական, քրիստոնէական, մահմետական: Արդ գոյանից որն արժանի է իր յատուկ ճշմարիտ էռթեամբ որ տարածուի և ընդունուի ամբողջ մարդկութեան մէջ, Բմանքը չին կամնուում այսպիսի հարցմունքը լույսանաեղի կամնան գուր համարելով: Սակայն որովհետեւ մեր առաջն շատ տեսակ հեղինակութիւն եր կրօնա որ շատ տարբեր են մեզ ամենքը աւագ գութիւն են մեզ պահանջում, առա տրեմն մասուդ մարզը ատիսուած է լուրջ քննել նոյն համեմատել և տեսնել, թէ արդեօք համոզ մունք ով կարող է որ և իցէ վարդապետութիւն հետեւ: Այստեղ պէտք է երեայ մարդու ահովերանական հասունութիւնը և փորձաքարը Եւ մեր հարցմունքը այս պէտք է լինի: Կրօնքներից նրն է համապատասխան թիւ մի բաղմակուղմանի կրթուած մարդու էնթէտիքական, գործնական և պեսական աշխարհածանոթութեանը:

թիւններ չունի, իր կատարելութիւններով պարտականէն աքիստոնէութեան, իսկ նորա անկատարելութիւնները (մարմբնական տարերքը, փաթաղիկոսութիւնը, ձևապաշտութիւնը և այլն) արդէն հեթանոս և հրէից ազգերին ծանօթ էին.

Անշուշտ հեթանոսութեան հնութեան ժամանակ արդէն պէտք է յայտնուելին այնպիսի մարդիկ, որոնք իրանց ազգի մէջ հատ հատ և հետզհետէ գոյացած կրօնական գաղափարները առանձին կատարելութեամբ և ամբողջութեամբ զգացել են և իրանց անհատական փորձերի համեմատ աւելի զարդացուցել են. Նոքա այսպէս թէպէտ և ընդհանուր մարդկային և մանաւանդ ազգային տարերքների վրայ յենուած՝ ամբոխից բարձր կանգնեցան, դարձեալ նորա հետ հալորդակցութիւն պահպանեցին, առաջնորդութեան ջահը ձեռվն՝ կրօնական աշխոյժ տալով նոցա: Այդպիսի մարդկանցից բղացած պատրամների գերազանցութիւնն ու հեղինակութեան ոյժը մեծ համարում պատրաստեցին դոցա. մի անհատի կրօնքը արժանի համարուցաւ, որ ժողովրդեան մէջ տարածուի և պահպանուի, և այսպէս կազմուեցաւ մի քրմական դաս, որ աւանդութիւնը որոյ պատուիրանքների աստիճանին բարձրացրեց, շարունակ պահպանեց և բազմացրեց: Հաստատուեցան ծէսեր, արարողութիւններ, տօնախմբութիւններ նոյնը արտաքին կերպով, հրապարակաւ, արտայայտելու համար, բայց ի հարկէ նոքա շատ անդամ պատճառ դառան, որ բուն էական մասը շփոթուեցաւ ցնորական կերպերով, այնպէս որ զանազան հեթանոս ազգերի կրօնապաշտութեան մէջ գտնում ենք իսկզբան աւելի մաքուր և խորհրդաւոր եղած գաղափարների միայն խանգարումն ու ապականութիւնը: Շատ շուտով քրմական դասի շահասիրութիւնից բուսեց նենդաւոր ապերախտութիւն, որ նորա այն խորամանկ աշխատութեան մէջ է երևում՝ թէ ժողովրդը լոկ ձեապաշտութիւններով կշտացնէ և ծածուկ պահէ նորանից այն, ինչ որ իսկզբան նա ինքը իր բնազդումներով զարգացուցել և ձևացուցել էր: Աւելորդ է երկարօրէն խօսել, թէ հեթանոսութեան մէջ բնաւ հոգեբանական հասունութիւն չենք տեսնում. այս ճշմարիտ է նորա բոլոր ձեերի համար, ինչ ձեերով որ նա որպէս ազգային կրօնք այստեղ կամ այնտեղ յայտնացել է:

§ 42. Մովիսական կրօնքը բնաւ չը հաստատեց այնպիսի նոր գաղափար, որ առաջուց ծանօթ գաղափար-ներից բոլորովին զերազանց լինէր: Մինչև անդամ կարելի է ասել, թէ նա հազիւ բարձրացաւ այն աստիճանին, ինչ աստիճանի վրայ որ տեսնում ենք Աբրահամի ազնիւ, մաքուր և ջերմ ողին: Բայց Մովսէն է մի դրական կրօնքի հիմնադիր: Նա որոյ պատուիրանքներ հրատարակեց, արարողութիւններով և տօներով իր ազգի մէջ արմատացրեց և նորանից մի հաւատացեալների ժողով կազմեց: Բոլոր հեթանոսական կրօնքներից մովսիսականը նորանով է զանազան վում, որ սորա մէջ միայն ամէկը Աստուած է ճանաչվում պաշտելու համար, և թէ նա մի աներեսոյթ էակ է, որ զգալի կերպով կարելի չէ և պէտք չէ պատկերացնել: Եւ եթէ այսպէս աներեսոյթ աշխարհի միութեան գաղափարով ըմբռնուեցաւ և հեթանոսական զարդարանքներից ազատուեցաւ, դարձեալ խրայէլացւոց կրօնքը մի սահմանած և նորա մէջ զործադրելի միաստուածութիւն էր: Մովսիսական Աստուածոյ գաղափարը շատ նեղ էր, նա միայն Շարայէլի Աստուած է ըմբռնում, և ոչ թէ մարդկութեան և տիեզերքի Աստուած: Այսպէս հասկանալի է, որ թէպէտ և հրէականութիւնն այն չափով միաստուածութիւն էր, մինչև որ նորա զաւանակիցները միայն ինքն իրանց էին նկատում, մինչև որ իրանց հայեացքը միայն ընտրեալ ժողովրդի սահմանով էին տարածում: Բայց այդ սահմանից դուրս հեթանոսական կուռքերը դարձեալ որպէս ներգործող պիտի նշմարուէին: Եւ իրաք էլ խրայէլացիք նոցա տալիս էին երբեմն աւելի և երբեմն պակաս զօրութիւն՝ նաև Մինայի վրայ օրէնք ստանալուց յետոյ. միայն նոցա համարում էին Եհովայիցից աւելի թոյլ: Ուրիշ խօսքով ինքը կհոգան միայն աւագ ազգայի ին Աստուածուածն էր իր ժողովրդի համար, որ սորա հետ թափառում էր, սորա մէջ ապրում էր, իրա համար մի տուն (խորան) շնել տուեց և վերջապէս Երուսաղեմի տաճարի մէջ իր նիստը հաստատեց, — այսինքն գեռ պակասում էր Աստուածոյ ամենազիտութեան, ամենուրեք

լինելու և դործելու. գաղափարը՝ Ուրեմն մոլխսական կրօնքի տեսական մասը բոլորովին անհաս է. նորանում երեւմ է շատ նեղ այսարհաճացեացը, ուստի և շատ անդամ Խորայէլացոց մէջ հնարաւոր եղաւ, որ ամենակոպիտ կրապաշտութիւնը երբեմն երբեմն լոյս տեսնէ. — Բայց և գործն ական կողմից այդ կրօնքը անհաս է երեւում. Կորավրայ երեւում է մի սարկացած, բարոյապէս կոչտ, եսական և արիմածարաւ աղդի զրոշմը, մի անպիսի աղդի, որ ընդունակ է Աստծուն յատկացնել մարմնական պիտոյքներ. ամենաթշուառ առեստրական ողի և ամենանդուստ կրքեր, Աստուած ինքը առաջնորդում է (մոլխսական դրբերից այս բաւական յայտնի է) Խորայէլացիներին, որ խարեն և զողութիւն անեն. նա զապանձեցնում է ֆարաւոնին և Եգիպտացիներուն, որպէս զի նոցա ցոյց տայ նշաններ և հրաշքներ և օինքք փառաւորուի, և ինչ բաներով այդ ներդրծութիւնն է անում նոցա վրայ. — գորտերով, մժեղներով, շանաձանձերով, ժանտախտով, ու ծաղկով (կեղ), հրախառն կարկտով. մարախով և անդրանկաց կոտորածքով. Աստուած օրէնն երկու անդամ զոհ (կերակուր) է պահանջում, ամենայն օր խուռնկ՝ քթի անուշանոսութեան համար, նա զրոնվ և փողով իր բարկութիւնը թողնում է. նա հանգըտանում և կազդուրվում է, այնպիսի սաստկութեամբ ցածնում է, որ ինքը վախենում է, թէ չը լինի որ մողովրդեան ուտէ. նա տատանում է, փոխուսական է, շտապում է և բարկութիւնը ցածուցանում է, երբ որ Մոլխէսը նորան հանգստացնում և միսիթարում է: Գործ է և համար կրօնական շարժառիթ չամարիում է պատմի երկիւղը, որ սոսկալի անէծքներով սպառնացած է, և երկրաւոր վարձը, որ նոցա աւետած է: Ի փառս Աստուածոյ սարսափելի կտարածք են կտարած նոյնի իրանց աղդի ժողովրդեան մէջ, և արինարբու վայրենութիւնը այլակրօնների դէմ՝ կրօնական պարտաւորութիւնն է: — Լոթէ տիքական այն մասերից, որով հաւատն աւելի ջերմութիւն, լութիւն, կենդանութիւն է ստանում, աշխոյժ և մաքուր է դառնում, Մոլխսական կրօնքի մէջ հաղիւ հետքեր միան կան, ուստի և Խորայէլական աստուածալաշտութիւնը զլիսաւորապէս

մեռած ձևադաշտութեամբ բաւականացաւ: Խորայէլացոց բոլոր միտքը գարծրած էր մարդու ժամանակաւոր մարմնական կեանքի վրայ, մարդու հոգւոյ անմանութիւնը նոցա օրէնքների մէջ յայտնի չէ:

Այս համառօտութիւնը, որ Մոլխսական օրինական յիշատակարաններից քաղուած է, բաւական ապացուց է, թէ Խորայէլացոց կրօնքի մէջ զեռ էլի շատ հեթանոսական մասեր կան: Այն ինչ նախամովկիսական ժամանակներից արդէն մի վառաւոր նահապետական կեանքի աւանդութիւններ հասել էլին՝ աւելի մաքուր կրօնքի հետքերով, մինչդեռ Ա. Գիրքը բաւական վկայութիւններ է բերում թէ Աստուած Խորայէլացներին առանց յայտնութեան չմողեց, այս ընդհակառակ անգամ զօրաւոր կերպով ցոյց էր տալիս աներեսթների վսեմութիւնը. բաց նոքա չհամարացան Աստուածոյ յայտնութիւնները և աւելի նկաթակէս ըմբռնեցին նոյնը: Որովհետեւ մի էսթէտիքականապէս կողմիտհոգւով սահմանափակ և բարբով ապականուած աղքը անընդունակ է Աստուածոյ բարձր վեհութիւնը ըմբռնել, մաքուր իբէաններ և աղնուադոյն կրօնք զարգացնել էր մէջ: Եւ ուրեմն չը զարմանանք, որ մնաք մոլխսական կրօնքի մէջ միայն մի անկատար և խեղտուած յայտնութիւն ենք գտնում: Բացի այս շուտով քահանայական դասի, զետական աղքի, անձնական շահերը միջոցը նպատակի տեղ փոխարկեցին, և այնուհետև Խորայէլացոց կրօնքը կարծես ուրիշ նպատակին էլ չը ծառայեց, եթէ ոչ անթիվ արարողութիւններով միայն այդ զետական դասը սնուցանելու և պահպանելու համար: Այս կէտից յառաջադիմութիւնը շատ զանդազ կարող էր կատարուել: Շատ քիչնը ցանկութիւն և ընդունակութիւն ունեցան կրօնական աւանդութիւնները քննել, բայց և զորա շատ զժուարացան ապիտութեան ճնշութիւնը պակասեցնել բրտութիւնը մեղմացնել, ոգին աւելի բարձրացնել քան ձեր: Սակայն հետզետէ էլի երեւցաւ աւելի մաքուր աշխարհաճացեացը, զոնէ առանձին անհամաների և ներկ Մընների մէջ հրէականութիւնը հետզետէ ազնուացաւ, մահաւանդ մարզարէների և սաղմուն երգուների չնորհիւ, և զգացուեցաւ լուսոյ և ճշմարտութեան

պէս յայտնի է իսկզբանէ անտի քրիստոնէութեան տարածումն սկսուեցաւ նորա հիմնադրի կեանքի պատմութեան քարողութեամբ Յիսուսի յայտնութեանց մէջ այնպէս լուսաւոր աշխարհանայեացք կայ, այնպէս մաքուր քարոյականութիւն և խարհանակացք, նորա տեսական, գործնական և էսթէտիկանաւէտ չնորհք, նորա տեսական, գործնական և էսթէտիկան տարերքը այնպիսի վսեմութիւն ունին, որ ոչ մէկ քական տարերքը այնպիսի վսեմութիւն ունին, որ ոչ հայմաստուն և ազնիւ մարդ այդ գերազանցութեան չէ հասկել, կրօնական հասունութեան օրինակ ունինք, ի հարկէ սկզբ է խոստովանենք, թէ այն դրական կրօնքները, որ իրանց քրիստոնէական են կոչում, բնաւ. չեն ցոլացնում իրանց մէջ Յիսուսի յայտնութիւնը իր խոր ճշմարտութեամբ, մաքրութեամբ և կեանքով, և ընդհակառակ մի քանի դաւանական սահմաները և սովորութիւնները աւետարանի ոգուն և խօսքերին բոլորովին հակառակ են և հեթանոսական են. Սակայն որովհետեւ լուսաւորեալ աշխարհքի հասուն անհատները մաքուր սրտով քրիստոնէութիւն դաւանում են և այդ կրօնքը ամենից աւելի գերազանց են համարում, ուրեմն միայն այս հանգամանքը նորա վեհութեան ապացոյցը պէտք է լինի, իսկ ինչով է դա այդպէս վեհ: — Քրիստոնէութեան հիմնադրութիւնը մի մեծ անձնաւորութիւն է: Նա իր անսահման իմաստութեամբ ռաշխափի լոյս է դառնում (Յով. Ը, 12). անքիծ բարոյականութիւն, մաքուր կամք և կեանք, անդրդուելի հաստատութիւն ճշմարտութեան, արդարութեան և առաքինութեան համար կոռուի մէջ, կամաւոր ինքնուրացութիւն և անձնազութիւն մարդկութեան համար—ահա այս կատարելութիւններով Նա վկենագոյն բարոյական օրինակ է մարդոց համար (1, Պետ. Բ, 21 և այլն). Էսթէտիկական իմաստալից հայեացք այն հանգամանքների վրայ, ինչ որ գեղեցիկ և վսեմ է մարդկային կեանքի և բնութեան մէջ, անտրահւնջ խոնարհումն Ամենաբարձրեալ տնօրէնութեանց առաջ, կատարեալ աստուածանօթութիւն ներշնչումն մտքի և հոգույ մէջ, ահա այս յատկութիւններով Յիսուսի անձնաւորութիւնը ճշմարիտ կրօնասիրութեան կենդանի գաղափար է (Կող. Բ, 9): Ուստի և Քրիստոս բարձր կրօնական հեղինակութիւն դառաւ: Եւ ինչ-

մնծ կարօտը, բաւական է կարդալ օրինակի համար. սաղմութ. Եսա Ա. 11—17, ԾԸ, 4—8. ԿԶ, 1 և այլն. Միք. Զ, 6—8 և այլն: — Բարելոնի գերութիւնից յետոյ էլ անմահութեան հաւատը աւելի որոշ կերպով նշմարվում է Հրէից մէջ, Եւ այսպէս ժամանակը կատարուեցաւ և բացուեցաւ Նորա ճանապարհը, որ մեր սերնդեանը ամենամաքուր կրօնք յայտնեց:

§ 43. Ք ր ի ս տ ո ն է ա կ ա ն կրօնքը իրապէս աւելի իշխող է ներկայ ժամանակի քաղաքակիրթ ազգերի մէջ, ի հարկէ պէտք է խոստովանենք, թէ այն դրական կրօնքները, որ իրանց քրիստոնէական են կոչում, բնաւ. չեն ցոլացնում իրանց մէջ Յիսուսի յայտնութիւնը իր խոր ճշմարտութեամբ, մաքրութեամբ և կեանքով, և ընդհակառակ մի քանի դաւանական սահմանները և սովորութիւնները աւետարանի ոգուն և խօսքերին բոլորովին հակառակ են և հեթանոսական են: Սակայն որովհետեւ լուսաւորեալ աշխարհքի հասուն անհատները մաքուր սրտով քրիստոնէութիւն դաւանում են և այդ կրօնքը ամենից աւելի գերազանց են համարում, ուրեմն միայն այս հանգամանքը նորա վեհութեան ապացոյցը պէտք է լինի, իսկ ինչով է դա այդպէս վեհ: — Քրիստոնէութեան հիմնադրութիւնը մի մեծ անձնաւորութիւն է: Նա իր անսահման իմաստութեամբ ռաշխափի լոյս է դառնում (Յով. Ը, 12). անքիծ բարոյականութիւն, մաքուր կամք և կեանք, անդրդուելի հաստատութիւն ճշմարտութեան, արդարութեան և առաքինութեան համար կոռուի մէջ, կամաւոր ինքնուրացութիւն և անձնազութիւն մարդկութեան համար—ահա այս կատարելութիւնն ամենաբարձրեալ տնօրէնութեանց առաջ, կատարեալ աստուածանօթութիւն ներշնչումն մտքի և հոգույ մէջ, ահա այս յատկութիւններով Յիսուսի անձնաւորութիւնը ճշմարիտ կրօնասիրութեան կենդանի գաղափար է (Կող. Բ, 9): Ուստի և Քրիստոս բարձր կրօնական հեղինակութիւն դառաւ:

ցուն անսիջապէս ազդում են իրանց վերին ածագումը (Յով.
Է. 17).

Տ ՀԿ. Ուրեմն կրօնքի վերաբերութեամբ՝ մարդկային ազդի
նկատմակը կարող է համարուել քրիստոնէութեան լիակատար
և մաքուր իրագործութիւնը ամենուրեք. Այս ինչ մովիսաւ
կան կրօնքը իր դիմաւոր մասերով ազնուանուլու կարօտութիւն
ունէր և միրամի իր հասուն դաւանողներից ես նորոգուեցաւ,
քրիստոնէութիւնը այսովուի նպատակի կէտ ցորդ տունց մեզ
որ էլ կատարելագործուել չի կարող. Ուստի և զորսով աւելի
գերազանցը դեռ չէ երեացել, դորան համեմը շատ ուսկաւ է
պատահել, միայն չատ անդամ կեղծ կերպով է քարոզած, զա
սկզբուց մինչեւ այս օր անդադար պէտք է մարառէր իր մաք-
րութեան և հաստատութեան համար. Եւ այս բնուկան է,
Մարդի պատմական, յայտնական կրօնքի մէջ խառնում է իր
սկզբականը. Այս որութիւնը է ծագում քրիստոնէութեան հա-
զար տնտեսկ ընդունուիլը և ապականութիւնը մարդու ձեռքի
մէջ բաղմաթիւ է եր ձուածք ներ, որ ինչողէն և հեթառ
նուների. հրէաների և մահմէդականների մէջ, Քրիստոսի դա-
սանողների մէջ ես գտնում ենք, անդիմադրելի չարիքներ
են. իւրաքանչիւրն իւր բնական կրօնք, իւր անհատական)
կենցաղավործութիւն և գաղափարներ ունի. ուստի անկացնել
է, որ երբ և լիցէ ամեննեցունց մէջ լիակատար միարանութիւնն
թագաւորէ, Բացց և այնպէս նման մասերը միարանում են,
որ անմանը բաժան բաժան է մնում, իւր պէտ դիմաւոր
մասերի մէջ համաձայնութիւն հաստատելով կաղմիում են
դաւանակիցների տարբեր տարբեր ժողովներ. Արդէն առա-
քնաշների ժամանակ մէկն էր պաւազուան, միւսը ապօղուեան,
երրորդը կեփայտան, չորրորդը քրիստոսեան (1. Կոր. Ա. 12),
ինկ այժմ կայ հոռվմէադաւան, բողոքական, լուսաւորչական,
և այլն, և նոցա սոտրաբաժնումներ. — Այս ըստոր կուսակցու-
թեանց վրայ ի հարկէ երկու մեծ պարտաւորութիւն կայ դրած,
հանաչել և պրագործել կրօնքով գրիտութեանց միջնորդութեամբ
ձեռք բերած ճշմարտութիւններ. և համբերով վիճել այն բաներ
ինչ մէջ, ինչ որ «հաւատոյց» առարկայ է. Ուրեմն նախակատմա-

կան իրողութիւնները ոչ մի կերպ չը պէտք է կնդոււեն, կրօն-
քի ցիշատակարանները չը պէտք է ծուռ մեկնուին, քրիստո-
նէական վարդապետութիւնները մարդկային քմահաճութեամբ
չը պէտք է խառնաշխութուեն և հալածուեն. Դեռ այս օր էլ
պէտք է մտքակուի, ինչ որ Յիուսը կեղծաւոր փարիսեցինների
մէջ մտրակում էր Աստուծոյ պատովիրանքները չը պէտք է
զանցառնել մտքակային հաճոցքների համար (Մատ. Ժ. 3). ոչ
ոք չը պէտք է սպանէ որդուն և նորա ժառանգութիւնը տիրէ
ոք չը պէտք է սպանէ որդուն և նորա ժառանգութիւնը տիրէ
(Մատ. Ի. Ա. 38). մարդուց չպէտք է թագունել զիտութեան
վականքները (Ղ. ուկ. Ժ. Ա. 52). Ուրեմն կրօնական հանգա-
մանքներում ես հարկաւոր է ղայցառ լոյս տարածել, որքան
որ մեր զիտութեամբ հասաննելի է, ինկ խարէութեան դէմ մա-
քառել ամենայն ուժով. Եւ այս արևէ է քրիստոնէութիւնը
իրկրանէ անտիւ և միշտ բողոքել ու պատերազմու է ճշմար-
իտթեան համար, Քրիստոնէութիւնը (Ճնք ասում կղերը) ճա-
նաշում է խուզարկութեան և քննութեան աղատութիւն ճողին
չը պէտք է շիջուցանուի, ամենայն ինչ պէտք է փորձուի (Ա.
Ջ. ուկ. Յ. 19). Մանաւանդ այս վերջինը շատ կարևոր է, որով-
հետեւ մողովրդեան մեծ մասը առանց մի ջն որ զի չի կարող
ըմբռնել Քրիստոսի վարդապետութիւնները, մեծ արթնութիւն
բարեխողմութիւն է հարկաւոր, որ մաքուր ջուրը ճանապար-
հարեխողմութիւն է արգաւոր, Երբ որ աղըիւրից դետի բերանն է համում:
ին չը պէտք է միայն մի կրօնքի պատմական նշանակութիւնը, այլ
բացց ոչ միայն մի կրօնքի պատմական նշանակութիւնը, այլ
և նորա բար ըստ կա ան արժէքը նմանապէս քննութեան
և նորա բար ըստ կա ան արժէքը նմանապէս քննութեան
առարկայ է. Ուրեմն նա հարկաւ ուէտք է յանդիմանուի, եթէ
ու վիցէ չափով անդարյական մասեր ունի իր մէջ. Այսպէս
որ և վիցէ չափով անդարյական մասեր ունի իր մէջ. Այսպէս
զոր օր, իւրաւացի. Եխ մարգարէների բողոքները խարյելացոց
կիոնքի դէմ, որքան որ նորա մէջ Աստուծոյ զաղափարը անմա-
կրօնքի դէմ, որքան որ նորա մէջ Աստուծոյ զաղափարը անմա-
կրօնքի էին Քրիստոսի քարոզները փարիսեցինների պիտ
իւրաւացի էին Քրիստոսի քարոզները փարիսեցինների պիտ
շահամիրութեամբ շինած և կեղծաւոր կրօնքի դէմ (համեմ. զոր
շահամիրութեամբ շինած և կեղծաւոր կրօնքի դէմ) համեմ. զոր
պարագանեւ մի առաջնպիսի կրօնքի դէմ, որ բարոյական հասու-
պարագանեւ մի առաջնպիսի կրօնքի դէմ, որ բարոյական հասու-

այլ և այլ չարութիւն և վատութիւն ծածկելու համար, Աւելորդ է մի անգամ էլ յիշել, թէ քրիստոնէութիւնը որքան իրաւունք ունի բարոյական վճիռ կարգալու, քանի որ միայն բարոյականութեան իրաւունքով նորա պատմական նշանակութիւնը ճանաչուեցաւ. Ցիսուսի կրօնքը ինքն ըստ ինքեան բարոյական է, Ուրեմն այժմ մնում է միայն, որ այդ աւանդած բարիքը պահանջութիւնը պատմական է արմատախիլ անենք մեզանից այն ստրկական և երկչուո ողին, որ դեռ էլի դողում է Աստուծոյ բարկութեան առաջ՝ նորան պատիժ ու պատուհաս կարելով, և որ շատ տանջանքների պատճառ է դառնում, Աստուծ է սէր, Մենք կենդանի քրիստոնէութեան տեղ այլ ևս չպէտք է դնենք մեռած ձներ և սովորութիւններ և նոր շղթաներով կաշկանդենք ողին, — Յիսուսն ուղում էր մեզ առաջ նորդել, որ հոգւով և ճշմարտութեամբ երկրպագենք, Աստուծոյ ազատ որդիք դառնանք, Մենք առելութիւն և երկպառակութիւնը պէտք է բորբքենք կրօնքի համար, — Քրիստոսի աւետարանն է խաղաղութիւն.

§ 45. Բայց հենց այս հանգամանքներում հին ժամանակներից մինչև այս օր սարսափելի կերպով մեղքեր են գործուուած, Արդէն Պաւլոսը գանգատում է, որ նոր հաստատուած քրիստոնէական դաւանութեան մէջ անաստուած մարդիկ, Շիրանց որովայնին ծառայելու համար, հերձուած և զայթակութիւն են մտցնում, և մի և նոյն ժամանակ քաղցրաբանութեամբ և օրհնաբանութեամբ որսում են անմնջների սիրտը (Հռով. ԺԶ, 17...), որ դաւանակիցները իրար պիսածում և ուտում են (Գալ. Ե, 15). որ ոմանք քրիստոս են քարոզում մախանձի և հակառակութեան համար (Փիլ. Ա, 15). Ախոսու որ այս օր էլ նոյն է, «Աստուծոյ արքայութիւնը երկրի վրայ գեռ էլի աղմուկի մէջ է այն անթիւ յանդութիւններով, որ շահասէր, իշխանասէր, մնամիտ և թերակիրթ մարդիկ համարձակվում են գործել, Դեռ շատ ջուր կը թափուի մէջ մինչև որ Հայ լուսաւորչականը և Հայ կաթուկը մշտնջենապէս հաշտուեն միմեանց հետ և իրանց մանր կուսակցական ողին թօթափին իրանցից, Պատմութեան մէջ ևս հոգւով կանդնած բաղմաթիւ խայտառակութեան սիւներն

ու արձաններն դեռ չեն խրատել մեր սերնդեան, թէ մարդիկ խաղաղութեան և անդուրութեան աւետարանը քանի անգամ պատրողական պատ նաև են շնել ատելութեան, թէնամութեան, մատնութեան և հայածանքի համար, Քրիստոնէութիւնը շատ անգամ իր Վարդապետից ուրացել է և չէ կարողացել միաբանութիւն պահս լանել իր մէջ, այսպէս նոր նոր կրօնքներ ծագեցան, ուրեմն նոր ճեղքեր բացուեցան մարդկութեան մէջ, Սպանիայի, Անդղիայի, Բոհեմիայի և ուրիշ աշխարհների պատմութիւնը շատ անմիտթար բաներ է պատմում հաւատոյ հաւածանքների մասին, որ անթիւ անհատների բախտը ոտնակով արին և ամբողջ աղգերի զարգացումը կանգնեցուցին: Պէտք է խոսապվան եր, որ հազարաւոր մարդիկ խարոյկների վրայ զոհուել են, որ Մոլոխի երկրպագութիւնն անգամ գուցէ այդպէս ընդարձակ և այդպէս անգութ չէր, Բայց մեր Փրկիչը միշտ դոր ա համար խաչուեցաւ, Բայց որովհետեւ մարդիկ չը հասկացան Դորա չարչարանքի խորհուրդը, և ամենասուրբ բանը ոտի տակ առան, ուստի և յանուն հաւատոյ եղբայր եղբօրից հեռացուցին, ամենասուրբ կապերը խղեցին, արեան վիխոններ կարդացին, յաւիտենական բանազրանք յայտնեցին, թոյն և սուր Աստուծոյ ծառայութեան նուիրեցին, մարդու մէջ խուզարկութեան ողին սպանել ջանացին, արեան մէջ թաթախուած ձեռքով երկնքի պսակը բռնել ուղեցան, Միայն վերին ասուխան կուրութիւնը կամ չարութիւնը այս գործերի մէջ կարուղ էր Ալսուծոյ փառաբանութիւն տեսնել: Շատ մէջ կարուղ էր կերպով մի բանաստեղծ ասում է, «Արդեօք այն երկնային արքայութիւնը, ուր մարդիկ այդպէս անաջում են իրար, ճշմարդ ու դժու ի տ դժու ի ս է».

Այս սոսկալի անցքերը աչքի առաջ ունենալով, ինչ է խրատամ մարդկութիւնն ու քրիստոնէութիւնը — Խղճի աղատութիւնն, համբերութիւնն, ներոզութիւնն: Եւ այս ոչ թէ լոկ միայն սղորմութիւն պէտք է լինի, այլ այս սրբազն պարագ է իրավանչիւր համար, ամենաստագ բանը, ինչ որ մէկը միւսին պարտական է հաւատոյ հանգամանքներում, Աստուծոյ աթոռի պարտական է հաւատոյ հանգամանքներում, մէկ մարդը հաւասար է միւսին: Մենք պէտք է առաջ ամեն մէկ մարդը հաւասար է միւսին: Մենք պէտք է

մունքն զգալով՝ մարդն իր ծունկը խոնարհում է, ձեռքն ըստ բարձրացնում կամ հաւաքում է, ամբողջ հասարակությանը խորհրդաւոր արարողութիւններ և սրբակնաշած սովորութիւններ է կազմում և հաստատում. դէմքի դժողովութեանց մէջ պատկերանում է խնդալից աժաւինութիւն առ Աստուած կամ անվտան փոքրոցութիւն, ջերմ սէր առ Հայրն ամենայնի և մարդկութեան կամ սառն անտարբերութիւն, այսոյժ լոյս կամ խաւարածին յուսահասութիւն, և այլն: Կրօնական զգացմունքը ձայնով ևս արտայայտվում է, Աստուծոյ մեծութիւնն ու բարութիւնը զգալով՝ մարդը բացականչութիւններ է հանում, աղօթում է, տաղեր է ասում: Եթէ պահանջ կայ, որ բարեպաշտական զգացմունքներն աւելի զգալի և զօրել կերպով յայտնուին, մարդն իրան ծառայեցնում է նախ բնութիւնը, Կա աստուծութեան զոհ է բերում, նույիրում է նորան կենդանիներ, ծառեր, կրակ և այլն: Ապա նոյն նպատակով գործեն ածվում և գեղար ու ենթատ ները, ինչպէս նկարչութիւնը, ճարտարապետութիւնը, անզրիազործութիւնը, բանաստեղծութիւնը, երաժշտութիւնը: Աներեսոյթ զօրութիւնները որմէից զգալի: Կերպով արտաքին ձև են ստանում, կամ կոսիտ և անձաշակ տձեւութեամբ կամ նուրբ արուեստական ստեղծողութեամբ, առտուածութիւնների պատուի համար տաճարներ են կանդնում, զերեզմանի տապանի վրայ հաւատոյ, յուսոյ, սիրոյ և անմահութեան նշաններ են հաստատվում: Պանդակները, քշոցները, երգերները քարոզում են սրտի կրօնական տրամադրութիւնները: ձայնական արուեստը նոյնպէս այդ նպատակով է գործ ածվում, մանաւանդ նպաստում է կրօնական տաղերին և մեղեղիներին, որ առանձին առանձին կամ խմբովին մրաբանութեամբ բարեպաշտ ժողովուրդեան ողին է ձեւացնում: Ահա այս միջոցներով ժողովուրդը հրապարակաւ միատեղ Աստուծոյ երկրպագում է որոշեալ ժամանակին, մանաւանդ կիրակին և առն օրերին, որոնց հետ անցեալ կամ ներկայ նշանաւոր եղելութիւնները կապուած են և յիշատակի արժանի են: Որպէս զի կրօնական զգացմունքը այսպէս ինքնարտուի, չշմարիտ, էսթէտիքական կերպով ձևանայ, ի հարկէ նախ

հարկաւոր է, որ նոյն կրօնական զգացմունքը կենդանի լինի, Նթէ ժողովրդեան մէջ բարեպաշտութեան ոգին անձեռացել է, ժողովներին յաճախելը պակասում է, կապերը թուլանում են. և միայն այնպիսի սրտեր, որոնք Աստուծոյ ներկայութիւն էին դժուանի զգացել են, միայն նոքա կարող էին այնպիսի հրաշալի կրօնական ստեղծագործութիւններ յառաջացնել, ինչ պէս որ մեր շարականներն են կամ ուրիշ աղջերի պատկերներն ու երաժշտական գործերը. Ի հարիէ ուր սիրաը մեռած է, նա բնչպէս պիտի կարողանայ արտաքուստ (հրապարակաւ), յայտնուել և ձևանալ.

§ 47. Նթէ կրօնքի էսթէտիքական ձևացնելը, նախ և առաջ ծառայում է ներփին զգացմունքները. արտայայտելու համար, ուրեմն ներփին զգացմունքները նորան նախորդում են, իսկ ինքը վերջնակէտ է դաւոնում,—նա յետոյ լինքը դառնում է արթնեցնող և սկզբնակէտ կրօնական շարժումների. Այսինքն քանի որ մարդս սովորում է իր սրտից կրօնքը գուրս բերել արտաքին աշխարհ, հնարաւոր է դասնում զրսից ևս նորա մէջ նոյնը զարթեցնել և կենդանեցնել. մինչեւ անգամ առանձին մարդկանց և ամբողջ ժողովրդեան բարեպաշտական ոգին կարելի է զանազան գեղարուեստների աղդեցութեամբ աւելի զօրացնել և կազզուրել. Ուրեմն էսթէտիքական ձևացումներով կարելի է սրտերը մարմնական աշխարհից վերացնել, և հոգեկան աշխարհից յանդիման տանել և ուրեմն մարդիկ կարող են կրօնական հանգամանքների մէջ միմնանց օրինակ, զարկ և կենդանութիւն տալ.

Սակայն այն էլ չը պէտք է ծածկենք, թէ կրօնքի էսթէտիքական ձևացմամբ նոյն իսկ կրօնքը երկու զգուշանալու վտանգ ունի իր առաջն. Բազմամարդ փողոցների զիխին աղօթում էին Փարիսեցիք, ամենքը տեսնում էին նոցա գործը, նոցա երեւը խօնարհ մեղանչականութիւն էր նկարագրում, բայց նոքա կեղծաւորներ էին. Եւ այս օր էլ նոյն է. շատ մարդ, որ գլուխը ծուռմ է, աղիողորմ կամ քաղցր բարեպաշտական կերպարանք է շնուռմ, ծնրադրութեամբ աղօթում է, ծշտութեամբ Աստուծոյ տունը յաճախում է, տաղ և պատկեր է

աիրում և այն, —նա իր սրտի ծածուկ տեղերում դեռ էլի պահում է աշխարհական հոգսեր, մեծամտութիւն և ուրիշ խաւար. մտքեր. Ուրեմն նա սրբապղծում է այն, ինչ որ ծշմարիտքարեպաշտ հոգու մէջ Աստուծոյ նետ միաբանելու ներփին աղղմամբ անհրաժեշտ հարկաւոր բան է, և այն կ եղ ծառը ութեան գործիք է դարձնում:

Իսկ միւս կողմից էսթէտիքական ձևացմամբ կրօնքի մէջ կարող է մասամբ կամ բալորովին մեռելութիւն, հոգւոյ ոլանութիւն հաստատուել. Այս ինչ էսթէտիքական միջոցների սկզբնական նպատակն այն է, որ նորանով հոգին տրամադրութիւն ստանայ դարձնել իւր միտքը զգայական աշխարհից գերզգայական աշխարհ՝ շատերը իւրեանց միաքը դադարեցնում են հէնց նոյն իսկ միայն տեսած. և լսած, միայն նիւթական, միայն զգայական նշանների վրայ, կամ զորանից շատ չեն հեռանում, որովհետեւ նոցա հողին մեռած է աստուածային հանգամանքները հասկանալու համար. Այս պատճառով հեթանոսական աղգերի մէջ, ուր առաջ աւելի հանճարեղ կերպով երկրպագվում էին բնութեան մէջ իշխող գօրութիւնները, չատ հետո տարածուեցաւ սոսկ նիւթական կռապաշտութիւնը, հէնց որ նոքա աստուածութիւնները սկսեցին զգալի կերպով պատկերացնել. Այս տեղ նիւթական կուռքերը զիսաւոր բան դառնան, նոցա սկսեցին լուանալ, որել, օծել, զգեստաւորել, զարդարել, խնկարկել, նոցա համար տօնախմբութիւններ հաստատեցին, զո՞ն և պատարագ մատուցին, զար և գուսանքով յարգեցին, և այլն. իսկ պատկերների նշան ակութիւնը կորաւ, աստուածութիւնը մոռացուեցաւ և մարդու ձեռքի շնչած գործերով մաքից գուրս մղուեցաւ. Նոյնը միշտ կատարուել է նաև հեթանոսութիւնից դուրս Այս ծէսերն ու արարողութիւնները, որ սկզբում Ամենաբարձրեալ փառաւորութեան համար միայն միջոցներ պէտք է լինէին, չատ անգամ ինքեանք նպատակ զառն կրօնական բարեպաշտութեան համար, շքաղհանքներ կատարելու ժամանակ՝ մոռացուեցաւ թէ դա ինչ խորհրդով է կատարվում. Սրտի խորքից աղօթքի փոխարէն լոկ միայն շրթունքի պաշտօն հաստատուեցաւ, լոկ միայն սահմա-

նած բառերի մեքենայական անձաշակ գոռում գոչում։ Սիւթական պատկերները Աստղեցոյ տեղ և Նիւթապէս պաշտուեցան, Կըօնական բանաստեծութիւնն ու երգեցողաթիւնը նոյնպէս սոսկ ականջի և շրթուածքի գրդիւներ դառան, միայն շատ սակաների մէջ զարթեցնելով նոցա հանճարեղ հեղինակների մեծ և զգայուն հոգւոյ արձագանքը։ — Քահանան, քարոզիչը, գալոցը և ճաշակաւոր պար զութիւնը յիշեալ միջոցների՝ կարող են և պարտաւոր են այդ կտանգների առաջնանել։

§ 48. Դառնում ենք կրօնքի տրամաբանական ձեւացման, ի հարկէ գորա միջոցն է բանաւոր և զբաւոր լեզուն, և կաղապէս ասելով՝ նորանով կարող ենք մենք միայն մտքեր նշանակել և ոչ թէ ներքին կեանք և զգացմունք ձեւացնել դրամաբանական միջոցով. ուրեմն կրօնքի էսթէտիքական տարերքը լեզուով նշանակելու ժամանակ՝ մենք միայն սոցագաղաքաներն ենք տալիս, իսկ սոցագաղաքանութեամբ գիտակցութեան մէջ շարժեանում ենք կրօնքը այդինքն վերացականով իրականն ենք զարթեցնում:

Ննչալէս որ մարդս առ հասարակ իսկզբան անորոշ տպա-
ւորովթիւններից հետզետէ արամարանական գաղափարներ է
կազմում, այնպէս էլ աներևոյթքների մասին հետզետէ անբա-
ցատրելի աղդմունքներից և բազմատեսակ երևակայական գոր-
ծողութիւններից որոշ մտքեր կազմեց: Եթէ առաջ նոցա մասին
առակաւոր ձևով, նշանական կերպով, առամպելական դարդե-
րով էր խօսում, հետզետէ սկսեց պայծառ գաղափար ստահապ
կրօնական հանդամանքների մասին, որ և սկսեց որոշ խօսքով
և նշանակել և արտայայտել կրօնական աղդմունքների ամե-
նապարզ տրամաբանական ձևացումը Աստուծոյ կատարելու-
թեանց անուններն են, Նորա այն դդացմունքների յայտա-
րարն են, որ բարձրագոյն կակի բազմատեսակ յայտնութիւն-
ների աղդեցովթեամբ կազմվում են, և որոնք շատ անդամ
կրկնելով և իրար մէջ ձևուուելով սաստիկնում և վերջապէս
զգալի գաղափարներ են գառնում: Համեմատութեան համար
յիշենք Բրահմա (նախամեծ), Եհուլա (յաւիթենական) և աճիտ-

փոխ), Տէր Աստավովթ (Տէր գօրութեանց), Աստուած (հաստող կամ աստ ածող), Երկնային Հայր, Ամենակարող, և այլն:— Իւրաքանչիւր այս անուան մէջ մի որոշ գաղափար կայ, իւրաքանչիւրը Աստուծոյ այս կամ այն գերազանցութեանց յայտարար է, որ մարդը աւելի ըմբռնել է:— Իսկ եթէ բարձրագոյն էակի մէկ որոշ անսւնը յետոյ աւելի տարածվում է և հասարակաց է դառնում, բայց մի և նոյն ժամանակ նորա գաղափարը բազմակողմանի կերպով ընդարձակվում և աւելի որոշվում է:— այն ժամանակ անունը (Աստուած) ստանում է ստորոգելիք, որով Ամենաբարձրեալի Էռթիւնը, գործքերը, գերազանցութիւններն են յայտնվում. այսպէս կազմվում են դատողաւթիւններ, ինչպէս հետեւեալ օրինակներով պարզ երեսում է: Աստուած է հոգի, Աստուած է արարիչ, Աստուած է ամենուրեք, Աստուած է մի միայն: Եւ այսպէս մեր նկարագրած շարժաւոյթներով հետզետէ ծագում են մարդու մէջ անթիւ կրօնական զգացմունքներ, որ նա հաւատոյ հանգանակով դաւանում է, և որ ի սկզբան միայն (ներփին և արտաքին) փորձաւութեան արդիւնք են: Սակայն որովհետեւ, ինչպէս տեսանք, մեր գաղափարները աներեսոյթների մասին շատ անհաստատ և փոփոխական են, ուստի և կարօտութիւն է ծնանում, որ մենք մեր հաւատոյ մասին մեզ հաշիւ տանք: Եւ այսպէս հետզետէ կրօնի փիլիսոփայութեան գիտութիւն է գարգանում: Նորա նպատակն է զլիսաւրապէս մարդկային յատուկ հանգամանքները քննել, ուրեմն ցոյց տալ կրօնքի ծագման գործողութիւնքը, արմատները, տարերը, հոգեբանական ձևերն ու արտաքին կերպարանաւորութիւնքը, որի մի համառօտ ու պարզ փորձը մեր այս գրուածքն է: Ի հարկէ նա մի և նոյն ժամանակ քննում է, ինչպէս և մենք արեցինք, մեր (անձնական) կրօնական համոզմունքները, թէ մենք ո՞ր չափով կարող ենք Աստուծոյ և անմանութեան գաղափարներին որոշ բովանդակութիւն տալ և մի բարձրագոյն էակի լինելութեան և մահից յետոյ մարդկային հոգույ շարունակութեան համար ապացոյներ (դատողութիւններ) առաջ բերել:

որ խօսեցինք, վերաբերում են նախ և առաջ ընդհանուր մարդկային (բնական) կրօնքին։ Բայց պատմապէս աւանդած գրական կրօնքն ևս կարող է ճշշտ լեզուաբանական արտայայտութիւն ստանալ։ Այս կատարվում է հաւատութիւնը մասսաւնքներով (գոգմաներով), որով որոշ դաւանութիւնը իր հաստատութիւնն է ստանում։ Աստուածաբանութիւն (դոգմատիք) է զրական կրօնքի հաւաքական կարդաբանութիւն, որ իր վսիմ շահերի համար ոչ աւանդութիւնները պէտք է բանագրուի, ոչ զիտութեան ճշմարտութեանց յարզը անտեսանէ։ Ճշմարիտ քրիստոնէական հաւատոյ վարդապետութիւնը պարունակում է իր մէջ կարգաւ Յիսուսից յայտնած կրօնական համոզմունքները, որ նոր կտակարանի մէջ բազմիցու կրկնվում են։ Այդ ժամանակ կրօնքի աղբիւրների իմաստը պէտք չէ կանխակալ, միայն մի որ և իցէ ժամանակի մէջ իշխող, մաքով բացատրուի, այլ ամենայն հաւատարմութեամբ հոգով և ճշմարտութեամբ ըմբռնուի այն, ինչ որ Քրիստոս վարդապետել է։ Կը որպէս զի մէջը կամաւոր և ակամայ սխալներ և կեղծութիւններ չը սպազեն, արթուն պէտք է լինի պատմական և լեզուաբանական քննութիւնը, որ մեր ժամանակ մեծ յառաջադիմութեան է հասել. քրիստոնէութիւնը մի որոշ ժամանակ ծագել է, որոշ ժողովրդեան մէջ, որոշ հանգամանքներում, ուղեմն պատմական կնիք ունի իր վրայ, և այս բանը ամենայն մաքրութեամբ պէտք է ըմբռնէ աստուածաբանութիւնը։ Ի հարկէ աստուածաբանութիւնը չի կարող զանց առնել բնական կրօնքը, բայց նա այդ աշխատում է կապել զրական կրօնքի հետ և առանձին յայտնութիւնից գրյացած վարդապետութիւնների հետ՝ որ աստուծոյ էութեան, Քրիստոսի անձնաւորութեան, խորհրդների մասին են, մէկ խօսքով այն վարդապետութիւնների հետ, որ ամենայն քրիստոնեային, ուրեմն և ընթերցողին, յայտնի է, բայց որը մեր ծրագրից դուրս է։

Իսկ որովհետև ի ակզրանէ անտի քրիստոնէութեան դաւանողները իրանց վարդապետի կրօնքը տարբեր կերպով ըմբռնեցին, պէս պէս վէճեր ծագեցան հաւատոյ մասին, և որովհետև իրանց մէջ համաձայնութիւն չը կարողացան հա-

տատել՝ քրիստոնէական կուսակցութիւններ կազմուեցան իրանց տարբերական վարդապետութիւններով. Այս տարբերականութիւնը վաւերացնելու համար զանազան հաւատապատռումներ են ժողովական կանոններ սրբագործուեցան և կանոնական գրգերի (Սուրբ Գրոց) շարքը դասուեցան: Բայց այս եռանդի մէջ այն գրուածքների բուն նշանակութիւնը մոռացուեցաւ: Մարդիկ մոռացան, որ նոյն գրգերը Քրիստոսի և Նորախօսքերի հետ հաւասար նշանակութիւն չեն կարող ունենալ, թէ ոչ թէ: նոցանով աւետարանը պէտք է բացատրուի, այլ աւետարանով ամենայն արդարի գիրք պէտք է դատուի: թէ նոքա ոչ թէ ասասուածացին, այլ մարդկային ծագում ունին և որոշ արտաքին հանգամանքների ծնունդ են, թէ նոքա որպէս ժամանակի պահանջի լրումն որոշ պատմական յարաբերութիւն ունին և նկարագրում են՝ ինչ պէս արդեօք քրիստոնէութիւնը ըմբռնուեցաւ որոշ ժամանակին և որոշ անձինքների կողմից և չէ թէ անհերքելի են իրանց գոյութեան պատճառաւ և հարկեցուցիչ ճշմարտութիւններ են բովանդակում ամենայն մարդկանց և ամենայն ժամանակների համար: Ի հարկէ նորա մէկ մասը պէտք է յարգուի որպէս սքանչելի յիշատակարաններ ճշմարիտ քրիստոնէական սրտի և մափի, անզրգուելի հաւատոյ ջերմութեան և հաստատուն հաւատաշմութեան, ինչպէս օր. մեր շարականներն են. բայց և այնպէս ամենայն կրօնական կոչուած գիրքը առանց քննութեան չի կարող ճշմարիտ քրիստոնէութիւն կոչուել, ուր մենք պատռուեր ենք սատացել, թէ «Մէկն է ձեր վարդապետը, և այն է Քրիստոս»: Մենք չը պէտք է զարմանանք, որ այսքան վեճեր են ծագել քրիստոնէութեան մէջ, ուրեմն նաև այնպիսի գրուածների միջնորդութեամբ, որոնց սկզբնական նպատակը աւելի բարձր է եղել, քան հերձուացք սերմանելն, որովհետեւ կուսակցական ողին կամ այդ կուսակցութնամց կարապետների անձնական շահասիրութիւնը և իշխանասիրութիւնը այդ էր պահանջում, իսկ ամբոխը առանց քննութեան նոյն շաւզով գնաց: Դորա հակառակ պատառական հոգուով մտածող քրիստուեան աւելի և աւելի բացայաց կերպով համոզվում էր, թէ

ոչ մէկ մահկանացու, ով և լինի և որ ժամանակի զաւակ ևս լինի իշխանութիւն չունի ուրիշ մարդուն հաւատոյ հանգամանքներում հրամայել, Անդք Հայերս մեղ բախտաւոր պէտք է ուղենք, որ այն վէճերի վտանգները շատ չուտ համկացանք և նոցանից հեռու մնացինք, երեք տիեզերական ժողովները բաւական համարեցինք և միւսներում էլ մասնակից չեղանք՝ մեր նախնական աւետարանական պարզութիւնը և ազատութիւնը պահպանելու համար, մենք նոր զաւանութիւններ չը հնարեցինք, մեր հոգևոր նոր գանձը շարականներն են, բայց նորանով միայն փառաբանում ենք Ամենաբարձրեալին իր սքանչելի գործքերի համար, մեր հայրերը իրանց աստուածաբանութեան բուն և յատուկ աղբաւոր համարել են Ս. Գիրքը, և մեր հայրապետներից յայտնի չէ Ս. Գրքի հետ հաւասար զօրութիւն ունեցող որ և իցէ սիստեմայական զոգմատիք, աստուածաբանութիւն, հաւատապատում, հաւատոյ մասնց վարդապետութիւն և այլ նորագոյն նորամուծութիւններ օտարի աղդեցութեամբ, որոնք միտքը կաշկանդում են, Ս. Գրքի հեղինակութիւնը թուլացնում են, և զիտութեանց ճշմարտութեանց առաջն հաւատքը վտանգի մէջ են դնում, «Յանախապատումն» «Ընդհանրականը» որչափ սքանչելի գրուածներ են, նորք դարձեալ անձնական, պատմական, այն և յարգելի, ժառանգութիւնք են:

Վերջապէս կրօնքի տրամաբանական շարքումն է կրօնքի ուսուցումն զարդոցների մէջ, քարոզ և ճառախօսութիւն ժողովրդեան առաջնու Ուրեմն հրապարակական աստուածաշտութիւնը երկու ձեռվ է կատարվում, այն է Էսթէտիքական և տրամաբանական ձեռվ, Ամենայն եկեղեցի ունի յատուկ տեսանելի և լսելի արտայայտութիւններ, այն է մեղ յայտնի Էսթէտիքական և տրամաբանական ձեռցումներ (զեռ չենք խօսում գործնական կեանքի մասին), որոնց ներքին կապը կազմում են դաւանակիցների ներդաշնակ տրամադրութիւնն ու հաւասար համոզմունքները,

§ 50. Թէպէտ և կրօնքի Էսթէտիքական և տրամաբանական ձեռցումները բոլորովին տարբեր են իրարից, բայց շատ

անգամ շատ մերձ են և կապվում են իրար հետ, Արդէն Սուրբ Գիրքը, որ հաւատոյ և զիտութեան աղբեւր է, մասմբ նկարագրում են զգացմունքներ, տրամադրութիւններ, յոյսեր, ցանկութիւններ, և այլն, մասմբ սոսկ զաղափարներ են յայտնում. և ուրեմն երեմն բանասաեղծական և երեմն տեսական կնիք են առնում իրանց վրա: Այսպէս են շարականներն ու տաղերը. նոյն են և աղօթքները: Հոգեոր ճառերն ու քարոզները թէպէտ և ուսուցանելու մաօք դրվում ու ասվում են, որ միան տրամաբանական ձեռվ կարող է կատարուել, բայց նոքա պէտք է շնորղական աղղեցութիւն ունենան, ուրեմն զուրկ չը պէտք է լինեն նաև էսթէտիքական տարեգից (Ճարտասանական և միմիքական զարդերից): Եւ ի հարկէ, որովհետև կրօնքը իսկութեամբ աւելի մի նախաղդածութիւն է, քան պայծառ մտածողութիւն, ապա ուրեմն էսթէտիքական ձեռցմամբ աւելի աղջու կերպով կարող է կերպարանալ, քան տրամաբանական ձեռցմամբ: Տրամաբանական զաղափարները միշտ սուր գծերով են սահմանվում, այն ինչ էսթէտիքական միջոցները զգացումներին և երեակայութեան որոշ ծրագրի մէջ չեն կաշկանդում և կրօնքին իր ընթացահոս, շարժուն և անհամնելի բնաւորութիւնը իրան են թողնում: Այս պատճառաւ մի և նոյն էսթէտիքական ձեռցումները կարող են շատ սրտերին համապատասխան և բաւական լինել, և մինչեւ անգամ այն ժամանակ ևս միաբանել նոցա ի մի ժողով, երբ նորք կրօնական զաղափարների մէջ մասնաւոր տարբերութիւններ ունին: Իսկ երբ որ տրամաբանական ձշութեամբ ձեռցում են նորքա, այն ժամանակ որոշ սահմանները բացարձակ բացվում են և անհամաձայնութիւնները զիտակցութեան մէջ զգալի են զառնում: Եւ պէտք է ասել, որ ոչ այնքան էսթէտիքական որքան տրամաբանական ձեռցումները բաժանում և հերձուած են սերմանել մարդոց մէջ, որովհետև մարդուն յատուկ է իր անհատական մտքերը յամառութեամբ պահպանել և չը զիջացնել: Եւ ճիշտն ասելով քրիստոնէութեան ողուն ամեննեին չի համապատասխանում խիստ վերացական զոգմատիքականութիւնը (սոսկ բառերը): Նա պէտք է լինի մեծ բազ-

մութեան, ժողովրդական կրօնք, ուստի և Յիսուսը իր քարոզ
ների մէջ ձևացնում էր միշտ կենդանի զգացմունքներ և ձրգ-
տողութիւններ և աշխատում էր նայնը իր լսողների մէջ ազ-
դել և կենդանի պահպանել։ Հաւատոյ դաւանութիւններն ու
խոստովանութիւնները կրօնքի տեղ չը պէտք է զրովի, որպէս
զի այդպէս կրօնքի վերջին մնացորդն էլ սրտում չը հանգչի։
Նոցա խորհուրդը կրթութեան վերջին է բեղմնաւոր և ոչ թէ
սկզբում, նոքա պէտք է համարուին որպէս կրօնական զար-
գացման վերջնական արդիւնք, ծայրագոյն հետևանք, որոնց
սկզբնաւորութեամբը կենդանի կրօնք հաստատելը սրտի մէջ
բոլորովին անհնարին է։ Այն, մարդ կարող է մի լիակատար
դաւանական կարգարանութիւն զլիսում և բերանում ունենալ,
բայց բոլորովին զուրկ լինել կրօնքից։ Որովհետեւ կրօնագի-
տութիւնը կրօնք չէ։ Տըամբանական ձեսցմամբ կրօնքը
արդարե կարող է աւելի պայծառանալ հոգու մէջ, բայց միայն
այն ժամանակ նա բեղմնաւոր և փրկարար կը լինի, եթք որ
աներեւոյթների մասին տուած գաղափարները ջերմութեամբ,
զգացմամբ, կենդանութեամբ և աշխատութեամբ են ընդունվում
և այսպէս էլ պահպանվում են։

§ 51. Մեղ մնում է այժմ կրօնքի դործն ական ձեաց-
ման մասին ևս գալափար ստանալ, որ մարդու կենցաղավա-
րութեան մէջ է երեւմ: Մարդուս կամքի ու գործքի վրայ
կրօնքի ներդործութիւնը զանազան կերպ և զանազան ուժով է
լինում, նայելով, թէ նոյն ինքը կրօնքը ինչ յատկութիւններով
է զարգացել նորա մէջ: Գործնական կեանքի վերաբերութեամբ
մէկ երեւլի փկիսովիան զանազանում է երկու տեսակ կրօն-
քեր՝ այն է յաջողութիւն ակնկալող, լոկ միայն հաճոյացող
կրօնքեր և բարոյական մաքուր կենցաղավարութեան
կրօնքեր: Առաջինները յատուկ են այն մարդկանց, որոնք
իրանց գլուխութեան մէջ դեռ չեն ճանաչել բարոյական
սկզբունքներ, և որոնք ուրեմն իրանց պաշտած գերզգայականը
ստոր-մարդկային յատկութիւններով են ներկայացնում: Ուստի
և աստուածութիւնը նոցա աչքում մի մարմիական, փառամօլ
յամառ, բռնաւորական, փոփոխական էակ է, որի երջանկու-

թիւնը կարելի է զոհերով, պարզեմերով և պատուասիրութիւն-ներով բաղմացնել, և այդ բաներով նորա հաճութիւնը, ողոր-մութիւնը և քաղցրութիւնը կաշառել և կեղծաւորութեամբ ստանալ Այսպիսի կրօնական գաղափարը գործնականապէս ձևանում է նախ և առաջ միայն արտաքին արարողութիւննե-րով և այն ևս միշտ մի և որև իցե անձնական չահասիրութեան առթով վարըն ու գործքը այդ ժամանակ նոյնապէս միայն ար-տաքին կերպով պահպանում է որոշ պատուէլներ միակ այն նպատակով, որ աս տուածային պատժի աւաճն առնուի և աս-տուածային վարձատրութիւն ուսացուի: Յաւիտենական կեանքի՝ վերաբերութեամբ նորա բարի են դառնում, որպէս զի երկըն քում տեղ ստանան:

բոլորովին այլ է քրիստոնէութեան գործնական ձևացու
մը: Քրիստոնէութեան Աստուածը ամենայն մարդկանց բարի,
իմաստուն, սուրբ և արդար Հայր է, որին ուրիմն պարտական
ենք մերձենալ ամենայն վատահութեամբ, հաւատարմութեամբ,
պատկառանոք, հսաղանդութեամբ, սիրով և գոհութեամբ: Այս
պէս բարոյական ու թիւնը սրբազորձվում է և ստանում
է կրօնական գոյն, երբ մարդը յանուն Աստուծոյ
ամենայն սրբութեամբ հետեւում է բարոյական գաղափարներին,
որոնք բարձրագոյն համար գաղափարի մէջ ներդաշնակութեամբ
միացած են: Այս երեսում է շատ գեղեցիկ կերպով մա-
նաւորապէս Յիսուսի փորձութեան և ընդհանրապէս Նորա
ամբողջ կեանքի մէջ: Նա իր վարդապետած կրօնքով

Եւ ինչպէս որ Քրիստոն իր վարքով ամենուն կենդանի օրինակ տուեց գործնական բարեպաշտութեան համար, այնպէս եւ իր քարոզներում նախ և առաջ պատուիրում էր բարյական վարք, հաւատացեալները իրանց պատուղով պէտք է ճանապարհ առաջնական գործ լին նորա շնորհքը թէ չուին, թէ արդեօք իրապէս ժառանգել են նորա շնորհքը թէ չէ Այս մտքով գործեցին առաքեալներն են: Ոչ թէ մեռեալ, այլ կենդանի հաւատ քարոզում էին նոքա, խօսքի լոողը գործող ևս պէտք է դատնայ, սէր առ Աստուած Նորա պատուերները կատարելով պէտք է յայտնուի, առաքինութիւն և գործութիւն:

ծունեայ եղբայրսիրութիւն էին պահանջում նոքա որպէս պըտուղ քրիստոնէութեան։ Ապա ուրեմն մի բարոյական կապերով միաբանած մեծ զերդաստան, որի Հայրը ամենուրեք և չարութիւններից դարչող աստուածութիւն է, և որի իւրաքանչիւր անդամը կատարում է այն, ինչ որ իր ընդունակութեան համեմատ և իր պաշտօնով կատարել կարող է և պարտաւոր է, և որոնք փոխաղարձուրար միմեանց ըստ արժանւոյն ճանաչում և անձնութիւնութեամբ պաշտպանում են. մի ռարքայութիւն Աստուծոյ, ուր արդարութիւն և խաղաղութիւն է թագաւորում, մի ժողով սրբոց—ահա այս է քրիստոնէութեան դործնական ձեացումը։

§ 52. Քրիստոնէութեան այս իրական հանդամանքը՝ այն, է կրօնքի և բարոյականութեան միաւորութիւնը՝ առիթ է տալիս մեղ մի երկու խօսք ևս աւելացնել այդ երկուսի յարաբերութեանց մասին։ Շատ անգամ լսուել է, թէ կրօնքը միայն և եթ բարոյականութիւնից է ծագում, նորանով կայ և նորա համար է, Բայց այս զլխովին սխալ է։ Սորա հակառակ մենք արդէն ապացուցեցինք, թէ թէպէտ և կրօնքի ուրիշի տարերքի մէջ բարոյականութեան տարերքն ևս մտնում են և նորա բնաւորութիւնը որոշակի սահմանում են, և ուրեմն հենց այդ պատճառով պատրաստի եղած կրօնքը բարոյականութեան համար գորեղ նեցուկ և բարի գործոց համար ուժեղ շարժառիթ կարող է դառնալ, — բայց և կրօնքը բոլորովին այլ էսթէտիկական և տեսական արմատների վրայ է հիմնուած, ինչպես և բոլորովին միայն իրան յատուկ նշանակութիւն ունի, այն է աղդել մարդուն խաղաղութիւն, սրախ ամրութիւն, անձի վսեմութիւն, հոգւոյ լուսաւորութիւն, որ ոչինչ ուրիշ աղքիւրից չենք ստանում, Բայց այս կրօնքի առարկաներն ես բոլորովին այլ են, քան բարոյականութեան առարկաները։ Նա զբաղուած է զերզգայական, մեր փորձական Մըջանից գուրս եղած աշխարհի, այն է Աստուծոյ և անմահութեան, հանգամանքներով. սա միայն մեր երկրաւոր հանգամանքների հետ գործ ունի, իմանալի առարկաների ճիշտ արժէքը ճանաչելու վրայ հիմնուած է և այս ճանաչողութեան համեմատ կամեցողութիւններ գոյաց-

նելու մի ձգտողութիւն է, Ապա ուրեմն կրօնքի և բարոյականութեան շրջանները բնաւ մի և նոյն սահման չունին, և ինչ պէս իրողութիւնը ապացուցանում է, իւրաքանչիւրը նոցանից առանձին կարող է լինել։ Որովհետև բարձր կատարելութեան հասած բարոյական կամքը բարութեան է զիմում միմիայն բարութեան համար առանց ուրիշ որ և իցէ կողմնակի շարժառիթի. կրօնքը կարող է, որպէս արտի դաւանութիւն։ միայն ներքին զգայական կեանքի մէջ գոյութիւն ունենալ։ Սակայն որովհետև, ինչպէս մենք զիտենք, Աստուծոյ լինելութեան մասին ցուցական (փորձառական) ստուգութիւն երբէք չենք կարող ունենալ, ապա ուրեմն մարդու կամեցողութիւններն ու գործքերը լիակատար ազատութիւն ունին իրանց համար. մարդ կարող է և աջ և ձախ գնալ, Եւ գուցէ հենց այս պատճառաւ իմաստուն աստուածութիւնը իր երեսը քօղարկեց մարդու առաջ, որպէս զի նա անձնիշխանութեամբ բարութեան ձգտէ միայն բարութեան համար և հետզինեէ աւելի բարձր բարոյականութիւնը այնու ամենայնիւ կրօնքը և բարոյականութիւնը պինդ կապեց իրաք հետ, այդ նորա խոր մարդաճանաչութեան նշան է, և զորանով յայտնի է լինում նորա անսպաս կրթողական բնաւորութիւնը։ Մենք համոզուեցանք, թէ ի՞նչպէս երբեմն ամենուժեղ մարդկային առաքինութիւնն անզամ խափանուել և փորձութեան մէջ ընկնել կարող է, թէ ո՞րքան կարօտ է նա վերին օրհնութեան և պաշտպանութեան, որովհետև նա է և կըմնայ միշտ լոկ միայն մի մարդ կայ ի ն առաքինութիւն։ Թէ մարդս տկարանալ կարող է կամքով մենք չը պէտք է երկրայինք։ Խսկ որովհետև քրիստոնէական Աստուծոյ գաղափարը իր մէջ ամփոփոմ է բարոյական գաղափարների միութիւն, ապա ուրեմն Աստուծոյ անշէջ զիտակցութիւնը մարդուն տալիս է բարձրագոյն և յորդորեցուցիչ օրինակ ազնիւ կամեցողութեանց և զործողութեանց համար։ Ով որ անդադար Աստուծոյ պատկերն ունի իր առաջ, միայն նա կարող է աստուածանման լինել։ Ուրեմն քրիստոնէութեան ամենաբարձր դործնական պատռէրը, որով մարդուն պարտաւորեցնում է

աստուածանմանութեան ճգտիլ (Մատ. Ե, 48), այս պատուէրն, ասում ենք, խորհուգեանական նշանակութիւն ունի, և վերջոյ այս հարկաւոր է կշռադատել, թէ կրօնքը որբան աւելի աղջուէ, քան բարյականութիւնը: Ուր որ սոսկ առաքինին, եթէ հանդստութեամբ քննում է աշխարհքի խսկական հանդամանքները և ամենայն կողմից կշռում է իր ձեռքին ունեցած միջոցները, վհատում է մտադրածը ձեռնարկել և յուսահատութեան անձնատուր է լինում, այն տեղ հաւատացողը դեռ էլի գործում է ոգերրած վստահութեամբ, որովհեան Աստուն համարում է իր զօրեղ ուստակից, որը որ կարող է այնպիսի արդար գործեր յաջողեցնել, որ մեր սովորական հաշիւներով անհնարին են: Յիշենք Մովսիսին, Յիսուսի առաքեալներին, Վարդանանց գիւցապիններին: սոսկ բարյականութեամբ և առանց հաւատոյ, որ աշխարհք յաղթում է, սոքա չէլն կարող իւրեանց մնծամնծ նպատակներին դիմել և համնել:

§ 53. Սակայն ամենայն կրօնքը այսպէս գործունեաց չէ: Սոսկ տեսարանական ցնորագործութիւնը գործք յառաջացնել չի կարող: Բարեպաշտական ցնորակոծութիւն անել հեշտ է, քան բարին գործել թուլամորթ մարդը աւելի սիրով բարեպաշտութիւնը բարբաջում է, որպէս զի բարի առնելու պարտաւորութիւնից աղատուի: — Եւ ով որ ուրիշի ձեռնատութեամբ վրանդներից փրկվում է և յաջողութիւն գտնում, և այս վերաբերում է միայն Աստունոյ և նորա հրեշտակների հրաշալի օգնութեան, նա անշուշտ իւր ընկերակիցների վրայ կը նայէ որպէս սոսկ գործիքների վրայ, այդպէս ել կը գործածէ նոցա և իր պարտաւորութիւնները նոցա առաջ ապերախտութեամբ չի ժիշի: Մենք արդէն իւր տեղը տեսանք, թէ ինչպէս են ծագում կեանքի մէջ կրօնական միւս մոլորութիւնները: գործնական աստուածուրացութիւնը (անսաստուած վարքը), ոչ միայն անհաւատութեան, այլ և անբարոյականութեան նշան է:

Միայն այս տեղ բացարձակապէս զգալի է հոգեորակական դասը բոլոր նշանակութիւնը: Արդէն առաջ մի քանի անդերում դիսպուածով իմացանք, թէ քանի բազմաթեակ պահանջներին լրումն պէտք է տան նոքա և ինչ մեծ պատասխա-

նատուռութիւն կայ նոցա վրայ: Ացմ կարող ենք քահանայի պաշտօնը համառօտութեամբ այսպէս նկարագրել: Նա պէտք է հոգայ կրօնքի էսթէտիքական, տրամաբանական և գործնական վայելուչ ձևացմամբ նոյնը ծողովրդեան մէջ կինդանի պահպանել: Վայելուչ աստուածալութութեան առաջնորդութիւն տալով՝ նա պէտք է ծողովրդեան բարեպաշտութեան ու կրօնասիրութեան նպաստէ: Հոգեոր իշխանութիւն, որ նա սփականաց» պաշտօնով ունի, պէտք է գործ ածէ քրիստոնէական ական ծշմարտութեան հաստատութեան, տարածութեան և քարոզութեան համար: Աստունոյ տան մէջ նա պէտք է ծողովրդը ոգեսորէ բարի գործոց համար: Իսկ հրապարակական կեանդաւութիւնը արդար վարուց օրինակ լինի (Մատ. ՓԶ, 19. ի, 25. . . . քում արդար վարուց օրինակ լինի (Մատ. ՓԶ, 19. ի, 25. . . . 1. կորն. գ, 5... 2 կորն. Ա, 23 (24). Տիտ. Բ, 7, 1 Պետ. Ե, 3):

Առանձին գրքոյ կներով հրատարակուել են հետեւ մեր աշխատութիւնները՝

| Գինն է» | |
|---------|----|
| Ա. | Կ. |
| — | 25 |
| — | 50 |
| — | 60 |
| — | 65 |
| 1 | 50 |
| 1 | — |

- 1) Դպրոցական սահմանադրութիւն
- 2) Մանկավարժական տարակուսանքներ
- 3) Ուսման նախադիմ ազգային ուսումնար. համար. .
- 4) Նահապետական և հայրենի աշխարհ, 3-րդ տարուայ ուսմունք և ընթերցմունք
- 5) Համառօտ մանկավարժութիւն
- 6) Կրօնք, հոգեբանական հետազոտութիւն

Տպագրութեան համար պատրաստ վում են՝

1) Սասունցի Դաւիթ, 2-րդ տարուայ ուսմունք և ընթերցմունք.

2) Հրահանգ վարժութեանց կամ ուսանելի նիւթոց հասկացողութեան, կրկնութեան և երկասիրութեան համար հարցմունքներ (նախակրթարան ուսումնարանների չորս տարուայ դասընթացք).

3) Մարդկային ընկերութեան չորհինքներ, մտածողութիւնք բարոյական կենանքը ճանաչելու և մանկանց կրթութեան էական արմատները գտնելու համար.

Ա. Մ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ:

Ասում են թէ մի գրուածքի պատմութիւնը նորա ամենալաւ յառաջաբանն է, ուստի և համառօտութեամբ կը նկարագրենք այս գրքուի ծագման շարժառիթները:

Որպէս ուսուցիչ մանկավարժութեան մենք պարտաւոր էինք մեր ազգայի վարժապետացու աշակերտներին ոչ միայն ցոյց տալ ի թիւս այլոց, թէ ինչպէս պէտք է կրօնքը դաս արրուի մանուկներին, այլ և նախ պէտք է պայծառ համոզնենք կազմել տայինք նոցա, թէ կրօնքը մի ան հ ը թ ե շ տ մասն է մարդու զարգացման մէջ և թէ կրօնքը շատ թիւր ճանապարհ կարող է բռնել մանկան հոգու մէջ, եթէ նորագարգացումը բուն արմատն երի վրայ չէ հիմնած. ապա ուր եմն այս արմատն երը ամեն այն ստուգութեամբ պէտք է ցոյց տայինք:

Ենք արդէն պատրաստ էինք այս մաքով դասախոսել, բայց ոչ այսպէս ընդարձակօրէն, ինչպէս որ այժմ այս գրքոյի բազագրվում է, երբ մեր ձեռին հասաւ «Մեթոդի վրայ» կոստանեանցի հեղինակութիւնը Զմիւռնաց տպագրուած, որ մեղդրեց ոչ միայն աւելի ընդարձակօրէն դասախոսել մեր աւանդելիքը, այլ և կարենութիւն զգացինք դասախոս ծը հ ը պ ա ր ա կ ա ւ լ ո յ ս հ ա ն ե լ ընթերցող հասարակութեան առաջ ճնթերցողը անշուշտ գուշակում է, որ կոստանեանցը «Մեթոդի վրայ» գրքուի մէջ կրօնքի մասին ևս խօսուում է. նա ոչ միայն այդ անում է, այլ և մեր գրականութեան մէջ մի նոր և անսովոր կերպով նա շօշափում է օտար գրականութեանց մէջ արդէնի հնուց յայտնի դիտութեան և հաւատ քի վէճը, և գալիս է այն եղբակացութեան, թէ ոչ միայն կրօնքը առ հասարակ մարդկային յառաջադիմութեանց մեծամեծ վնասներ է տուել և ապագայում ևս միայն վտանգ առ կարող է լինել, ոչ միայն նոյնը պէտք է ջնջել մարդու օրտից, այլ և եթէ կրօնքների մէջ մի համեմատութիւն պէտք է անել՝ մահեդական ութիւնը բարձր է քան քրիստոնէութիւնը: Կարծում ենք այս երկու խօսքը

բաւական էր այդ հեղինակութեան բուն հոգին նկարագրելու համար...: Ով որ ճշմարիտ լուսաւորութեան յարզը հասկանում է, նա անշուշտ կը զիտենայ, թէ ինչպէս պէտք է դատէ յիշեալ հեղինակութեան այս գաղափարները, բայց ո՞վ կարող է կոստանեանցից խել նորա իրաւունքը, որ համարձակութեամբ յայտնէ և վարդապետէ իւր համոզմունքները...: Սակայն մենք շատ ափսուեցինք այդ երւութի վրայ. և ափսուցինք ոչ թէ «մօսքի ազատութեան» սկզբունքը, որ գաղափարները ճշգելու համար և հասարակաց մատչելի առնելու համար միակ օրինաւոր միջոց է, գէթ այն պայմանով որ հակառակորդ կողմն էլ քաջութիւն և արիութիւն ունենայ այդ խօսքի զէնքով սաշատպանել սրբազնուած ճշմարտութիւնը՝ առանց ուշազրութիւն դարձնելու ժամանակի շատ պղտոր հոսանքին և մինչի նախապաշարմունք հասած իմաստակութեանց, — այլ մենք ափսուեցինք մեր այժմեան վիճակը, երբ խոհեմութիւն է համարվում լրութեամբ անցնել կոստանեանցի յարուցած խնդիրների պէս հարցերը՝ միանգամայն ժամափամառն ժամափամառութիւնն համարելով այդպիսի եր կը որդական և անպատճեղ գործքի համար (?) ձանձրացնուլ քաղաքակիրթ (?) մարդու նուրբ միտքը. — իսկ մենք կը ցանկայինք որ այս գործքը պյառէս թիթե կերպով չը կը աղաստուէր. մեր երիտասարդութիւնը առանց այդ էլ շատ պակասաւոր կրօնական զարգացում է ստանում, մեր ժամանակում առանց այդ էլ հաճելի նորաձևութիւն է դարձել՝ արհամարհական աշքովնայել կրօնքի վրայ, մեր գրականութիւնը առանց այդ էլ մեծ ճարպիկութեամբ հեռու է մանդալիս՝ երբ հաւատքին և «զիտութեան» սերտ միութեան գաղափար կարող է յուղուել իւր մէջ զրչին սանձ դնելը ամենամեծ գրականական առաքինութիւն համարելով, — և ահա այս հանգամանքներում կոստանեանցի զիրքն է հրատարակում: Բայց ամերա գրականութիւն ասելով՝ մենք զըրպարտեցինք, և մենք ուրախութեամբ ուղղում ենք մեր խօսքը: «Արևելեան մամուլը» մեծ արիութեամբ, ողջմտութեամբ և հանգստութեամբ, ինչպէս որ ճշմարտափառ ախոյեանին կը վայելէ, հանդէս դուրս եկաւ և մի շարք յօդուածներով՝ մի առ

մի քննեց կոստանեանցի անհիմն և անհաստատ շինքը, և ինպէս համոզուած ենք, քանզից բոլորովին: Ինչ որ «Արևելեան մամուլը» ձեռնարկեց, այսինքն քննութիւնը, կատարեց այնպէս գեղեցիկ և մանրամասն, որ այլ ևս ոչինչ չը կայ աւելացնելու. մեղ մնում է միայն անկեղծ չնորհակալութիւն յայտնել նորան: Սակայն կոստանեանցի ընթերցողները ոչ միայն կը սպասեն, որ կոստանեանցի սխալ մոտածողութեան ձեռքը հերքուին, այլ և իրաւունք ունին յուսալ, որ գրականապէս ևս ցոյց տրուի վրօնքին էութիւնը և նորա հաւատարական նախապատուութիւնը «զիտութեան» հետ: Այսպէս ըջինը, որ «Արևելեան մամուլի» ծրագրից դուրս էր, կատարում ենք մենք, այն յուսով որ ընթերցողը կը համոզաի, թէ «զիտութիւնը», որի անունով որ կոստանեանցը չարաչար երդվում է, դեռ մեծ պատկառանք ունի իւր աւագ քրոջ հաւատարի» վրայ և նորա հետ այնպէս անհաշտ չէ ապրում, ինչպէս որ իմաստակները կարծում են և մանկամիտներին՝ ի վնաս ճշմարիտ լրսաւութեան՝ գայթակեցնում են:

Ի վերջոյ մնում է աւելացնել, որ այս գլուխկի մէջ մենք բնաւ չենք վիճի կոստանեանի հետ, ըստ որում այդ արգէն մեր կարծիքով վերջացած ենք համարում «Արևելեան մամուլ» չնորհակի քննութեամբ. թող ընթերցողը նմանապէս մեզանից ոչինչ չը սպասէ Հայեաստանեաց եկեղեցւոյ դաւանութեանց մասին, որ հոգեստրականների շրջանին է պատկանում: Մեր խօսքը առ հասարակ կրօնքի մասին կը լինի՝ Փիլիփոնիայական հայեացքով հետազոտած, իսկ եթէ երբեմն հարեանցի ակնարկով Փիլիփոնիայական ճշմարտութիւնները Հայաստանեաց եկեղեցւոյ մէջ հաստատուած կը գտնենք, այն ի հարկէ ամենուն պէտք է ուրախացնէ, ով որ նորա հարազատ որդի է:

Ա. Շ Խ Ա. Տ Ա. Ս Ա Ի Ր Ո Ղ.

bpbu

1999-10月名目所带

qđññ t 1 p.



